

Բնագր

ՅՈՒՆԻՍ 84



Կան տիպարներ, զորս գրականութիւնը
կը տեսնէ՛, եւ ժողովուրդները՝ հմայուած՝ քոյ
մտացածին տիպարները կ'իրականացնեն. այդպէս՝ Բաճէֆի
հերոսները. բայց կան ալ մարդիկ, որ իրենք իսկ՝ իրենց ինքի
բնիկ պօռութեամբ, իրենց կեանքին ինքնաբոյս գեղեցկութեամբ, տիպարի մը
բարձրութեանը կը հասնին ու ներշնչարան կը դառնան գրագէտին. այդպէս՝ մեր
հին Վարդանը, կամ մեր երէկուան Աղասին, որոնց մին ներշնչեց
Եղիշէն ու միւսն՝ Աբովեանը: Այս կարգի մարդոցմէն էր
Զաւարեան, որուն դէմքը կոչուած է հայ քնարը
ոգետրող դիւցապներգութեան դէմքերէն
մին դառնալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1.— * * *	Նարեկեան տիպարը
3.— ԶԱԽՐԻՆԻ	Խալաթանդ մարգարէն
10.— ՍԻԱՄԱՆԹՈ	Զաւարեանի հոգիիմ
12.— ԳՐ. ԶՕՀՐԱՊ	Բօք
14.— Վ. ԳԼԱԿ	Էնոնք ողջ մնան...
18.— Յ. ԱՐՂՈՒԹԵԱՆ	Սիմոն Զաւարեան
20.— ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ	Ազնիւ եւ անկեղծ
21.— Ա. Զ.	Ինքնատիպ մարտիկը
22.— Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Դանիէլ վարուժանի խօսքը
26.— Ա. ԶՈՊԱՆԵԱՆ	Հայակապ տերվիշը
32.— ԵՐ. ՊՕՅԱՃԵԱՆ	Ջորեպան Գալուստ
36.— ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ	Սիմոն Զաւարեան
38.— ԵՐ. ՕՏԵԱՆ	Տիպար մարդը
39.— » »	Սիմոն Զաւարեան
40.— * * *	Ընկ. Զաւարեանի յիշատակը եգիպտոսի մէջ
42.— Ե. ԶԱՐԵՆՅ	Մահուան տեսիլ
43.— Յ. ՕՇԱԿԱՆ	Սահակ Պարգեւեան
55.— Վ. ԹԵՔԵԱՆ	Ասք երկիրդի
65.— Ա. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ	Դաւիթ Յովհաննէսի «Նոր Կէտք»ը եւ յաւերժական արժեքները
75.— Դ. ՅՈՎՀԱՆՆԵՍ	Քարը կարող է լինել իմաստուն
» »	Ես չեմ մեռնի
» »	Արարչի երգը
» »	Մուքը իջնում է Հայոց Աշխարհին
» »	Դեմոն
» »	Առաստը — փոքրիկ, անպաշտպան մի ծաղիկ
78.— * * *	Մշակութային լուրեր

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Մ. Վ., Ս. Լ., ՇԱՀ-ԱՐՄԷՆ, Փ. ԹԵՐԼԵՄԷՋԵԱՆ, ՍՈՅԻԱ ԶԱԽԱՐԵԱՆ,
ԸՆԿԵՐ, ԱՏՈՄ:

Բազին

ԱՐԽԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԽՍՏԻ

Ի. Գ. ՕՍԿԱՆ, ԲԻՒԻ 7, ՏՈՒԼԻՍ 1984, ԳԵՐԵՆԻՅ

ՆԱՐԵԿԵԱՆ ՏԻՊԱՐԸ

Սիմոն Զաարեանի մահուան 70ամեակին առիթով, Հ. Յ. Դաշնակցության հրատարակչությունը, Հրաչ Տասնապետեանի խմբագրությամբ, վերջերս լույս ընծայեց մեծանուն յեղափոխականին կեանքն ու գործը պատկերացնելու կոչուած երկու հատորներէն առաջինը, մեծադիր 742 էջ:

Հետագայ էջերը կը կապենք նոյն առիթով, առաւելաբար գրական դժբերու վկայութիւններուն ընդմէջէն հաղորդ գարձնելու համար ընթերցողը բովանդակ հայ ժողովուրդն ու անոր ընտրանին իր եմայքով ողորդած Զաարեանի անկրկնելիութեան հերթաթին:

Պատմական գիրքերու մէջ քանի մը էջ, թերթերու բացառիկ թիւերուն մէջ քանի մը սիւնակ, բանաստեղծութիւն մը, յուշի պատառիկ մը հոս, տպատրութիւն մը հոն, հանրային գործունէութեան մայր զիծերը եւ մարդկային դէմքը ցոլացնող քանի մը ստորագրելի, — այսօրուան ընթերցողներուն ջախջախիչ տոկոսին համար այդ էր Զաարեանը երէկ, ու ո՛չ ոք մեղադրելի է հարկաւ, որ միայն այդքան էր, որովհետեւ հասկնալի պատճառներով մարդոց եւ յատկապէս տարաափիտ բեկորներուն կը պակսէին եօթնասուն ու անկի տարիներ առաջ լոյս տեսած տասնեակ մը պատմական ու յուշագրական հատորները կամ երկու տասնեակ ա՛յն թերթերը, որոնց մէջ խօսք ունէր Զաարեան կամ խօսք կար իր մասին: Տարիներու վրայ երկարած տքնաքան աշխատանքով մը մէկտեղելով առ այդ կուտակուած ժառանգութիւնը, «Սիմոն Զաարեան» հատորը կատարած է շնորհակալ գործ մը, երեք հարիւրի մօտեցող անստորագիր ու ստորագրուած յուշերու, տպատրութիւններու, վերլուծումներու, թերթաւածներու եւ պատմաւածքներու ընդարձակ ինքի մը վրայ տեսանելի դարձնելով Զաարեանի տիպարը, որ տառապած մեր ժողովուրդին տրուեցաւ մեծ փոխատուցման մը պէս, իբրեւ աստուածային պարգեւ:

«Սիմոն Զաարեան» հատորը մաքերուն մէջ կը վերստեղծէ նոյն ատեն

99974-854

330-44

Scanned by A.R.A.R. @ 0.107

տարածական ու ժամանակային ամբողջ աշխարհ մը, լայնածիր սահմաններով ու շարժումներու խոռովիչ ելեւելներով բացառիկ ա'յն շրջանը, ուր իրար կը խաչաձեւեն հոգեբանական վիճակի խոսքերը, մտայնութիւններու ձեւաւորումը, տեսլականներու ցոյքերը, արիւնոտ դէպքերը, շոնդալից անցքերը, որոնք ուղղակիօրէն յաճախ եւ երբեմն մօտէն կ'աղընչուին Ջաւարեանի ծաւալած գաղափարներուն ու գործնական խոյանքներուն: Ուրիշ բազմաթիւ դէմքերու կատարած բնորոշումներուն կարգին, ճիշդ է նաեւ Ա. Չօպանեանի ձեւակերպած հաստատումը, թէ՝ «Ջաւարեան մը եւ հայ ժողովուրդը անհնար է անջատել փրարմէ եւ մին միասին հետ համեմատութեան դնել. Ջաւարեան ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ նոյն ինքն հայ ժողովուրդը՝ իր բարոյական լաւագոյն տարրերուն մէջ խտացած, համադրուած, խորհրդանկարուած»:

Փորձիչ բան է եւ հետեւաբար անկարելի է հոս չխմբել քանի մը հատը Ջաւարեանի եւնէնաբանական բնծայուած ստորոգելիներէն.

- Գաշնակցութեան խիղճը (էջ 3),
- Աշխարհիկ սուրբը (11),
- Մաքրագոյնը մաքուրներէն (62),
- Հայ յեղափոխութեան սուրբ Յովհաննէսը (212),
- Դամոկլեան սուրը (215),
- Խառնալուծող մարգարէն (217),
- Վերնագոյն մարդը (234),
- Ճշմարտութեան մեղ (303),
- Գաղափարի քուրմ (326):
- Լուսեղէն սիւն (363):

Դեռ լեւն ենք հատողին եւ յօտորդող էեւրուն նուազ չեն Ջաւարեանին տրուած ուսաշարժող առանձնոր, ու պոռկաղիքները չտես ու բառերուն տաքորոտեան անտեղեակ մարտեղ չեն. արժէքներու յարաբերութեան ծանօթ անձեր են անոնք, ռեւոլյուցիոնէր. ռոմանտիկներ, բանաստեղծներ, կարոնատուն յեռադիտակներ, հոգեբանական գործիչներ. եկեղեցւոյ իշխաններ, Ջաւարեանի կուսակից թէ հակառակորդ ճակատէն, չեղքներէն ու թունդ ամապանդականներէն: Մէք ստատիստիկ մէք եղա՞ծ է աղոթք մէկը, որուն մասին ժամանակակիցներու արտաստատուած ուրան անքան շատ ու ա'յնքան սանձաքեկ պեղումով. որքան արտաբան է արտիկոս տաճարներ մաքրագործող այս բնկերային Նոստրոմովսկիին (Սիւսմանթո) արիթմ: Արտիկին հետ խօսող Նարեկացիի յալալտեանեան մատենէն ետք, թերեւս բնթերցողը դժուար յիշէ ուրիշ գիրք մը, որ հորիններու բաշխման մէք ս'ընթան շրջալ եղած ոլլայ, որքան եղած է «Սիւսման Ջաւարեան» հոստող, Սիւսման Ջաւարեանի մասին, հառաւորաւոր շրթներէ:

Տոռած ստորոգելիներուն տոհքով մարդ երբեմն շփոթի կը մատնուի, ա'յն իմաստով, որ իսկիւ բիւտի առի՞նէ հիւստողներուն դիմաց, թէ հիւստայիին, որ ամէնուրեք հոստող Գաւարեանը հոստ. հոստալուուն, մաքրանքուն Ջաւարեանը, ա'ն՝ որ հայոց միւստոնիկ ամէնուրեք. հայուն մէք՝ մա'րդը, մարդուն մէք՝ աստաւածալի'նը:

Այսօրուան ե-եւիճիտ մէք եռիտասարդութեան կարգալիք առաջին գիրքը պիտի ուլայ «Սիւսման Ջաւարեան»ը, հաւատքի ու խիպխտութեան զիրքը, պարպութեան ու ժողովրդութեան, շատ արժեքնու եւ քիչ երեւնալու, շրայլ սոհաբերութեան ու ծարաւուն սակաւարկութեան. անմաստօղ նոսիրումի եւ ոչինչ ակննալու ինկարանի օրինակներով բարեխոսն աւ վարակիւ մատենալու:

ԴՈՒՅՏ- ԶԱԽՐԻՆԻ

ԽԱՐԱԶԱՆՈՂ ՄԱՐԳԱՐԵՆ

Մայրը որբում էր աչքերի արցունքները, որպէնզի նորէն ու նորէն տեսնէ հեռում անհետացող կառքը, որ տանում էր իր միակ ուրախութիւնը, իր կեանքը, իր անդրանիկ զաւակը:

Գնում էր նա գէպի հեռու հիւսիս, դնում էր սովորելու: Մնաց բարեխն՝ մայրիկը հազիւ-հազ պահում էր ոտքերի վրայ, հագիւ-հազ գոպում էր իր յուզմունքը: Ձէր ուզում նա վերջին վայրկեանին տիրեցնել, վերաւորել մեկնող զաւակի զգայուն սիրտը:

Բայց երբ մենակ մնաց, ազատ թափ հաղորդեց յորդ զգացումներին եւ արտասուքը, քերձ ու խոշոր կաթիլներով սկսեց դլորուել նրա տակաւին երեստաւոր թըշերի վրայ: Այնքա՛ն այլազան մտքեր էին թափառում գլխի մէջ եւ նրա մայրական իմաստուն սիրտը մատնում էր ինչ-որ դարհուրելի մի նախազգացում: Նոս բարախում էր աստուկութեամբ, արիւնում էր եւ նււում յուսահատութիւն:

Տրոփում էր եւ մեկնող պատանու սիրտը: Նրա մէջ եւս պայքարում էին այլազան, հակասական մտքեր, մերթ պայծառ ու ժպտուն, մերթ մոռյլ, ահաւոր: Մի բան սեղմում էր կոկորդը, դարնում էր դլխին եւ արցունք էր ատաղացնում: Նա դեռ զգում էր իր կրծքի վրայ լզարիկ կընող գլուխը, որ ինչ-որ բան էլ փափսում մնաց բարեխն եւ աղօթում էր նրա համար Աստուծուն:

Արցունքոտ աչքերով դիտում էր նա

քնութեան իրարու յաջորդող տեսարանները: Առտուածային աշխարհի դեղնակուրթիւնը կամաց-կամաց դիւթում էր նրան: Եւ նա հետզհետէ դուրս էր մղում իր յիւրդութիւնից սիրող մօր պատկերը, ընտանեկան օճախը եւ այն բոլորը, ինչով ապրել էր նա մինչ այն եւ նրա քնքոյշ սիրալցւում էր ազնիւ տենչերով ու երազներով:

Կառքը մօտեցաւ այն տեղին, ուր միանում էր դուր գետը Արազուայի հետ:

Ձինջ, արծաթափայլ Արագուան, յաւիտենօրէն ժպտուն, կայտառ, աղմկալուրդ, խօշ կատաղութեամբ մխում էր ջրառուս, մռայլ ու դաժան կուրի ալիքները եւ կարծես հեղնելով ճանապարհ էր բաց անում այդ մութ քառսի մէջ — յոտակ, լուսեղէն ճանապարհ:

Ճայտի սկզբունքը կուլ գնաց խաւարին՝ — մտածեց երիտառարդ ուղեւորը: Մի մութ անհանգստութիւն պատեց նրան, մի բան, որ դուշակում էր հիասթափութիւն եւ կորուստ լոյսի ու հոգեկան բերկրանքների: Սիրտը կսկծաց: Վիթթէ այսպէս ուրտի լինի եւ իմ կեանքի մէջ: Միթէ ես էլ պիտի կորչեմ, պիտի լուծուիմ մարդկային ընդհանուր կեանքի տեղմի հետ:

Մտքերը պաշարեցին նրան, տխրեց եւ գլուխը քաշ գցեց:

Ետևում ուսկայն նորէն սթափուեց: Ըմբոստ, մոլեգնոտ ոգին արծարծում էր նրա մէջ պայքարի, կուրի ծարաւ: Վիճ, չեմ գիշի ես կեանքի գրոհի առջեւ, չեմ

Թույլ տայ, որ մտայլ, ազմոտ ալիքները խնդրեն ինձ. ես դեռ կը կռուեմ՝ նրանց դէմ»...

Եւ Թուի ու բարի աչքերը պսպղացին հրեղէն փայլով եւ նորէն այդ աչքերը ուրախ էին, յուսովառ:

Կիանքը ետում էր Մոսկուայում: Պետրոսեան Գիւղատնտեսական Հիմնարանը մասնաւորապէս յայտնի էր այն ժամանակ որպէս բոյն դաղափարական ու ուղղման հրիտաւար դռն: Բոլոր շքերջաներում, համալսարանական բոլոր ժողովներին մէջ կը տեսնէինք կարճահասակ, նիհար, հարաւային բնակչի տեսքով մի ուսանող, կոշտ ու արագ շարժումներով, աչքերը սեւ, մեղմ ու բարի, փայլում էին աստղերի պէս, երբ զէմքը փոթորկում էր սառ, կրակոտ ճառերով:

Հայկական լեռների այդ հարազատ զաւակը այն ժամանակ դպում էր ինքզինքը որպէս կոսմոպոլիտ, համալսարանական քաղաքի եւ մերժում էր ազգայնութիւնը:

Այդ ետուն արհեստանոցին մէջ, ուր կերպարանում էին դուարթ ու ազմկասէր երիտասարդութեան մտքերն ու զգացումները՝ զատուեց ուսանողների մի փոքրիկ խումբ: Նրանք լուռ էին եւ մտածկոտ: Նրանց աչքերը յառած էին դէպի հեռու հայրենիքը. նրանց սիրտը բարբառում ու ցաւում էր հարազատ ժողովրդի համար, նրանց ուղեղը յար եւ միշտ միջոցներ էր հնարում՝ ազատելու այդ ժողովրդը թիրք բարբարոս բռնակալութիւնից:

Մօտեցան նրանք երիտասարդ կոսմոպոլիտին, որ թնայցրին նրա մէջ հայկական ոգին եւ վառեցին նրա սրտում աստուածային կայծը:

Այդ կայծը բողբոջւում, հրդեհեց նրա ամբողջ էութիւնը, ստիպեց ձգել ամէն բան, բնատնիք, կարիէր, երջանկութիւն, արծարծեց նրա մէջ սէր միայն — սէր դէպի մարդը ընդհանրապէս եւ սէր դէպի հարազատ ցեղը, իբրեւ ամենազբաւառ բնկորը բազմաշարժար մարդկութեան:

Մի անսահման, ջինջ, զրեթէ մայրա-

կան սէր դէպի հայ ժողովուրդը... Ահա մի տիրական զգացում, որ լցնում էր այդ սքանչելի երիտասարդների ողջ էութիւնը, հեռու պահելով նրանց այլանդակ նախապաշարումներից եւ դնելով առողջ ու ամուր խորհրդները հայկական վերածնունդի թեմայի վրայ: Բարձրանար հետազոտում Հ. Յ. Գաշակցութեան փառաւոր շէնքը:

Եւ այդ համեստ, հեղ, ամօթխած երիտասարդները իրենց յամառ, սխտեմատիկ աշխատանքով դուրս բերին հայ ցեղը ստրկութեան անդունդներից եւ պատուաւոր տեղ տուին նրան Առաջաւոր Ասիայի ժողովուրդների շարքում:

Գարնանային պայծառ արեւը ողորում էր սար ու ձորեր, տաք, կենսաբարձառաջայնթեքով: Բնութիւնը վերաթնաւում էր, ծաղիկները տարածում էին ամէնուրեք իրենց մոտեւ բուրմունքը, ամէն ինչ կեանք էր շնչում եւ սէր ու բերկրութիւն:

Նրանք իրար հանդիպեցին: Երիտասարդը դեռ նոր էր ոտք դրել ուրոյն կեանքի ճամբու վրայ, բայց արդէն իսկ ծանօթ էր հասարակութեանը իր տաք, խանդավառ, դաղափարական պատկերով: Երիտասարդութիւնը ունկնդրում էր նրան, բողբոջում նրա ջերմ խօսքով եւ բազմաթիւ կանաչի սրտեր տրուում էին նրա կրակոտ ու բարեփոխ նայուածքի հանդէպ: Բայց նա չէր նկատում այդ. նրա աչքերը շատ հեռու էին նայում:

Ահա սակայն ցցուեց առջեւը՝ նրա տնունով ու պատկերով հրապուրուած մանկատիպ զհերոսուհին, եկաւ խոսիւն: Նրա իղէալիստ, դաղափարական պաշտամունքներով տարուած սիրտը... ճեւ Զեյ սիրում եմ — ասաց ուղղակի երիտասարդ քարոզչին: Անսկսկալ եւ համարձակ այդ յայտարարութիւնը ցնցեց վերջինին, խոնարհեցրեց եւ տրորեց նրա ուժեղ կամքը: Առիժը դարձաւ դառնուկ: Սիրոյ զգացումը բռնկուեց նրա սրտի մէջ, աւելի եւս շնչաւորեց ու

վառեց նրան, աւելի եւս զարկ տուեց դա-
ղափարական նրա թռիչքներին: Գիտնքը
այնուհետեւ մի սքանչելի մեղեդի էր նրա
համար, գործում էր նա երգելով, աշ-
խարհը թւում էր այնքա՛ն չփառ, լի յոյ-
սերով ու երազներով:

Ժամանակը առաջ հասնոյց...

«Եւս քեզ այլեւս չեմ տիրում» — ա-
սաց մի անգամ երիտասարդին իր սիրած
ու գուրգուրած կակը, նոյնքան համար-
ձակ ու կտրուկ, որքան առաջին անգամ,
կբր իր սէրն էր խոստովանում... Ո՛վ կա-
րող է բացատրել երիտասարդ որտի քը-
մահածոյաները...

Նորէն ցնցուեց դաղափարի մարդը,
աշխարհը վերադարձնելու նրա աւելեւ,
խորունկ աչքերը վայրկեանաբար փայ-
լատակեցին մռայլ չարութեամբ, ապա
կրկին մարեցին: Պաղ, որտե՞տք գիշերը
համակեց նրա ամբողջ էութիւնը, կեանքն
ի սպառ կորցրեց նրա աչքում իր համն ու
արժէքը, նա այլեւս խորտակուած գոյու-
թիւն էր, մի աւերակ...

Շուտով, սակայն, սթափուեց: Մահ-
մանի միւս կողմից տանջուող ժողովրդի
հեծեծանքները, միշտ աւելի աղեկուել
ու որտաճմիլի՜ հասնում էին նրա ական-
ջին: Հնարաւոր էր միթէ չտալ արձա-
գանդ: Այդ ժողովրդի բարօրութեան հա-
մար չէ՞ր, որ նա որոշել էր զոհարել
իր կարիէին ու կեանքը...

Եւ տիրոյ նահատակը վերտին չըթ-
կեց իրանը, խոր թաղեց իր վէրքը, յաղ-
թահարեց ու վերադարձաւ նորէն —
Գիտնքին:

Բայց այդ կեանքը այնուհետեւ այլ-
եւս չտեսաւ ուրախութիւն: Նա եղաւ
ծայրէ՛ծայր մի անհատնում տառա-
պանք, մի անդուլ անձնագոհութիւն ու
նահատակութիւն...

✱

Երիտասարդ դաշնակցականները ցըր-
ւեցին, մասն ժողովրդի մէջ: Եւ սկսուեց
եռուն աշխատանքը: Ուժեղ ու յանդուգն
սլացք տուին իրենց հողեկան ուժերին,
զնացին խորտակելու հարազատ ժողո-
վրդին կաշկանդող շղթաները: Եւ մարդ-

կային ծովը ալիւնծուեց: Դուրս լողացին
նրա յատակից հարկւրաւոր ու հազարա-
ւոր կտրիճներ, երիտասարդ, սրտոտ,
խանդավառ: Վսեմ ու եղակի մի երեւոյթ
էր: Ի՞նչ ահուկի շարչարանքներ, որպի-
սի՛ անլուր, դերձարդկային աշխատանք
ու տառապանք: Ընկնում էին հարկւրնե-
րով այդ շեղ հերոսները, սուլթանական
անողորմ մանգաղը հնձում էր ու հնձում
անդադար, հայ մայրերը լալիս էին յու-
սահառ՝ իրենց սիրած զաւակները վը-
րայ, բայց նրանք անայլալ առաջ էին
նետում տատափուտ ու արիւնտա ճանա-
պարհով, զնում էին զոհուելու... «Ազա-
տութի՛ւն կամ մա՛հ» — այդ կոչը որտա-
ընդոտ արձագանքներով տարածւում
էր հայկական լեռների մէջ: Տարերային
մի յորձանք էր, անդիմադրելի մի մղում՝
դէպի ահաւոր արկածներ, նահատակու-
թիւն եւ մահ... Թափուած արիւնը ծը-
նունդ էր տալիս նոր ու նոր անձնագոհ
կտրիճներէ, հերոսներէ:

Մարած հրաբուխը վերաթնանում
էր: Եւ փոքրաթիւ պարադուխները, որ
հողին էին այդ շեղաղ վերածնութեան,
քաջալերւում էին ու միշտ աւելի սաստ-
կացնում իրենց թափը: Մտուերի մէջ էին
մնում նրանք, բայց յայտնի էին ամէն-
քին, նրանց անունով երգւում էր դաղա-
փարական ու մարտնչող երիտասարդու-
թիւնը: Համեստութիւն եւ ազնուութիւն՝
դարձել էին նրանց մէջ պաշտամունք:
Ապրում էին նրանք նիւթական կարօտու-
թեան մէջ, թէպէտ եւ նրանց առջեւ բաց
էին հարստութեան ճամբաները: Միշտ
զինուորական իրենց դիրքերում, միշտ
պարաքի դուռի վրայ, յաճախ լքուած իւ-
րենց հայրենակիցներից ու բարեկամնե-
րից՝ նրանք անվհատ դիմում էին դէպի
նպատակը:

Մէկը առանձնապէս աչքի էր ընկնում
այդ փոքրաթիւ առաջնորդներէ մէջ իր
անհաշտ թշնամութեամբ դէպի Գեղծը,
Անազնիւր, Անմաքուրը: Բարակ, նիւաբ,
խորունկ ու խոշոր աչքերով, փոքր-ինչ
կոշտ շարժումներով ու ժեստերով եւ
միշտ բարձրատուն, տաք ու տաքցնող
ճառերով՝ նա յիշեցնում էր անապատից
եկած ճգնաւորի, հինաւուրց մարդարէի,

որ դեռևս էր դէպի մարդիկ՝ խարաղանկանց բարոյական տրտմանը եւ ամէն տեսակ ազդեցութիւն ու անարդարութիւն։

Օսմանեան Մահմանադրութեան առաջին շրջանում էր, մարդիկ դեռ հաստատու էին նրա ամբողջական ու ճշմարտութեան։ Նա եկաւ Մուշի Գրեթէ յաղթական մի ընթացք էր։ Բայց ոչ այն աղմկալի դիմադրութիւնները՝ որ սնափառ հասարակութիւնը սովորաբար սարքում է իր անսպասելի անհաշիւ համար։ Դա մի համեստ, բայց անկեղծ տոնախմբութիւն էր, որ սարքում էր պարզ, աշխատանքային ժողովուրդը։ Մուշից եւ ընթացիկ գիւղերից երիտասարդութիւնը շտապում էր տեսնել Նրան, անդմէլ, համբուրել նրա ձեռքը։ Այն օր նա նրանց համար զեկալար էր այն երկարատեւ ու արիւնոտ կռուի մէջ, որ նոր էր վերջացել։ Նա հեռաւոր ու խորհրդաւոր հիւրն էր, որի մասին շատ էին լսել, բայց դեռ երբեք չէին տեսել։

Պատմութեամբ պայտ էին նրա մօտ եւ կռուող ընկերները, նրանք, որոնք մի ժամանակ ղաղափար էին Մասնոյ լեռներէ մէջ անգամ համիդեան պիտուրներին, իսկ այժմ հանել էին իրենց առիւծի մորթիները եւ համեստօրէն լծուել գիւղական աշխատանքի մէջ։ Նրանք արդէն ճանաչում էին նորեկին, ճանաչում էին նա՝ մականերով, գաղտնի, ծածկազիր կամ այլ լարանօրէն զրուած նամակներով, որ ընկել էին իրենց ձեռքը Հեռաւոր վայրերից, հազար ու մի փորձութիւնների միջից անցնելով։ Բայց նրանք էլ դեռ չէին տեսել իրենց մտաւոր առաջնորդին եւ ահա դալիս էին դիմադրելու, ուրախ, անհամբեր, իրենց գեղջկական ցնցոտիներով։ Տեսնում էին արցունքներ նրանց դատան աչքերի մէջ...

Նա հաստատուեց Մուշի մէջ, նա այժմ արդէն զուտ կրթական ծրագիրներ ունէր։ Կ'ուզէր բարձրացնել հայ ժողովրդի մտաւոր ու հոգեկան զարգացման մակերեւոյթը։

Վարձեց մի անշուք տնակ, երկու

փոքրիկ սենեակներէ, որոնց յատակը հող էր եւ ունէին մի-մի փոքրիկ լուսամուտ, զանազան ճեղքուածներով։ Նա հասկտական մի վառարան, որ չէր տաքացնում սենեակները։ Կոշտ ու կոպիտ փայտէ կարասիներ, որ իր պատուէրով չինել էին մշցի վարպետները։

Ամենը ցուրտ էր սենեակներում։ Ջուրը սառչում էր դիշերը։ Բայց նա չէր բնաւ տրտնջում։ Նա տաքացնում էր իրեն այցելու բազմութիւնը իր ջերմ, սիրալիք խօսքերով եւ յայն հիւսիսաբերութեամբ։ Հարուստները, ազդեցիկները չէին գնում նրա մօտ, այլ միայն խեղճ ու կորած մարդիկ, որոնց արտաքինը կեղտոտ էր, բայց հոգին պարզ ու մաքուր։ Բոլորի համար նա խորհրդատու էր եւ իր շնչին վստակի մեծագոյն մասը բաժանում էր չթաւորներին։

Բայց ահա ամպերը սկսեցին խտանալ իր շուրջը։ Մութ, կասկածելի մարդիկ, վաշխառուներ, որոնք յեղափոխական շարժման ընթացքում, օգտուելով կուսակցութեան անունից, ծծել էին ժողովրդի կենսական հիւթը, յետագայում բռնաւորներ ու կուսակցական գէնըր թաքցնողներ, ամէն տեսակ կեղեքիչներ ու հարստահարիչներ, լրտես ու դաւաճաններ, վերջապէս խարբայ ու տգործ վանականներ — բոլորը յուզուեցին, իրարու անցան։ Նորեկը հանդիստ չէր տալիս նրանց։ Անողորմ ամէն տեսակ լրբութեան ու աղտոտութեան հանդէպ՝ նա հրապարակով խարաղանում էր նրանց հեղինակներին, պահանջում էր բացատրութիւն նողկալի արարքների համար, պահանջում էր հաշիւ ծախսուած դրամների, պահանջում էր արտաքին նրանց բոլոր ասպարէզներէ, ուր կարող էին մնասական լինել իրենց անարգ, հակաժողովրդական դործունէութեամբ։

Շատ բան աջողում էր նա։ Թշուա էր, թէ արդէն մօտ էր յաղթութեան ժամը։ Բոլոր զրկուածները, որք ու այրիները հաւատում ու վստահում էին նրան եւ սպասում էին նրանից իրենց վիճակի թեթեւացում։

Սակայն մութ ուժերն եւս չէին նընջում։ Նրանք ալեկոծուեցին ու համա-

խմբուցան: Նրանք ի դործ դրին ամէն միջոց խարաղանդ մարդարէի դէմ — դաւ, գրգռում, սուտ ու անարդ զրպար-տութիւն: Նրանք հիւսնցին մի ահագին սարգոստայն, ցանցով պատեցին նրա դուռ-ծունէութեան ամբողջ դատար, ձգտեցին պատնէշ դնել նրա ամէն մի ձեռնարկի ա-ռաջ եւ ճարպիկ, հմուտ դաւերով խափա-նեցին նրա բոլոր Հանրագումար փորձերը: Իրենց աղտոտ թաթերով քրքրեցին անգամ նրա մասնաւոր կեանքը: Եւ այդպիսով նը-րանք անհնարին, անհանդուրժելի գար-ձերին նրա աշխատանքը Մուշի մէջ:

Եւ նա ի վերջոյ տեղի տուեց: Սեւ ուժերի բանակը խորտակեց նրան: Թո-ղեց նա Մուշը, լի դառնութեամբ, ծանր խոհերով, թողեց՝ մտածելով, որ ժողո-վուրդը աւելի դժուարութեամբ կ'ազա-տագրուի իր Համարին կեղեքիչներէն, քան թէ արտաքին թշնամուց:

Ժողովրդի թշնամիները յաղթանա-կեցին, կացութեան տէրերն էին նրանք: Բայց անխոնջ աշխատանքի ձգած սերմը անպտուղ չանցաւ: Նա տուեց իր բողբո-նները: Ժողովուրդը ոթափուեց: Նա հառ-կացաւ, թէ ո՛վ էր եւ ի՞նչ էր այն մարդը, որին նա կորցրեց: Եւ խույզ դժգոհութիւ-նը ծայր է տալիս արդէն Հարստահար-ւած Հայ աշխատանքութեան մէջ, ընդ-դէմ իր ցեղակից թշուառականների: Դժգոհութիւնը շուտով կը վերածուի ըմ-բոստացման ու պայքարի:

Պիտո գծուարին է այդ պայքարը, բայց նրա ալիքը աճում է հետզհետէ եւ լիայոյս ենք, որ մտքութեան ու շիտա-կութեան առաքելայի նետած զաղափարը կը ձգի խոր արմատներ եւ ժամանակով կը յաղթի:

Նա նորէն Պոլիս է, այդ Թշուառ ու եղկելի աղբանոցում:

Կուշտ, պահպանողական զապալային-ներին հոգաբարձութիւնը մեծ դժկամու-թեամբ տեղ տուեց նրան դպրոցի մէջ: Ձէ՛ որ նա յեղափոխական էր, դաշնակ-ցական էր: Կարելի՞ է միթէ այդպիսի մարդուն տեղ տալ ազգային դպրոցնե-րում:

Նշանակում են մուքացկանի ոսճիկ: Ապրում է նա այդ գրողներով, փնտրում

է բնականաբար ածան ու վառ ճաշա-բաններ, իսկ Հաղուստը՝ միշտ հնամաշ ու պատռուած:

Նա մնում էր սակայն նոյն անվկանդ դործիչը, անսասան իր լիտակութեան ու վեհանմունքեան մէջ եւ շարունակում էր ղեկավարել մաքերը: Տաք վիճաբանու-թիւններ, լուսաւոր, բարձրաթիւն ե-րազներ — ահա այն մթնոլորտը, որ նա մայրեց իր դասարանի մէջ եւ որով սըն-ւում, ապրում էր: Անմիջական մասնակ-ցութիւն ունէր Հայկական կեանքի բոլոր առաջադիմական երեւոյթներին մէջ, ա-ռանց նրան գրեթէ ոչինչ չէր յղացում:



Անհանգիստ, եռուն բնութիւնը թոյլ չէր տալիս նրան հանգստանալ: Աշխա-տում էր նա մինչեւ ուժասպառում, յոգ-նում էր այնքան յաճախ՝ որ օրուայ մէջ մի քանի անգամ պտուկում էր՝ ուժերը վե-րականգնելու համար: Յաճախ էր հիւանա-դանում, բայց զլուխը շարունակում էր աշխատել — միշտ պայծառ ու լուսաւոր, լի ինքնատիպ դադափարներով ու յղա-ցումներով, միշտ գեղեցիկ եւ ճշմարիտ:

Պարզ էր, որ մարմինը մաշւում էր, Փիղիքական ուժերը ուղաւում էին: Սա-կայն նա ինքը չէր խոստովանում այդ եւ շարունակ ձգում էր արդէն խիստ ձրգ-ւած լարը: Եւ նա ահա կտրուեց... Կը-տըրուեց յանկարծ, շանթահարելով բո-լորին, կտրուեց այն ժամին, երբ նա այնքան պէտք էր իր ժողովրդին, օրի ճակատագիրը վճռում էր, որին բախտը ժպտում էր, դուցէ առաջին անգամը հարիւրաւոր տարիներին սոսկալի նահա-տակութիւնից յետոյ:

Պսկուեց այդ կեանքը անողորմ ձեռ-քով, ինչպէս պոկւում են ծաղիկները, ու-րոնց նա այնքան սիրում էր իր քնքոյշ, կանացի սրտով:

Բայց — թառամածը չեւ կենդանաց-նի, գնացողը էլ չի վերադառնայ: Մնում է մի բաց, որ կը լցուի ժամանակով եւ վէրքը կը կաղաւորուի:

Իսկ դու, Հայ ժողովուրդ, պիտի յիշե՞ս արդեօք այդ մարդուն, որի ամ-

բողջ կեանքը մի մարմնացած սէր էր դէպի թեզ, ջերմ, քնքոյշ սէր, որ չզիտէր ոչ մի սփոփանք։ Նա աւելի ջինջ էր, աւելի անուշահամ, քան պատանիի սէրը դէպի կոյսը։ Նա աւելի լեցուն ու անյատակ էր, քան մօրը սէրը դէպի իր մանկիկը։

Այդ կեանքը ծայրէ ծայր մարտիրոսութիւն էր — յանուն թոքիանկումի, հայ ժողովուրդ։ Գեղ համար նա մոռացել էր ամէն բան այս աշխարհում, մոռացել էր նոյնիսկ ինքն իրեն։ Դու, թոքապաշտ նրա կեանքի միակ նպատակն էիք եւ նրա միակ ուրախութիւնը։ Լալիս էր նա եւ երազում թոքապաշտ, կիսակենդան մարմնի վրայ։ Երազում էր եւ ձգտում կռել թեզ համար աւելի երջանիկ ապագայ։

Գիտի յիշե՞ա նրան, հայ ժողովուրդ, — չգիտեմ, Մարդկութիւնը այնքա՞ն մոռացկոտ է։ Բայց նրա համար — միեւնոյն է։ Նա չէր տանում պերճանք ու երախտագիտութեան ցոյցեր՝ իր կեանքի ընթացքում։ Դրանք բնաւ պէտք չեն ներան — եւ այժմ, մահից յետոյ։

Բացում զերեզմանը կը լեցուի։ Կը մարէ լըջապատի ժիւղը, կը լռեն թաղման որոտուն ճառերը, որոնց համար այնքան շուտ էն մարդիկ։ Կը սրբութիւն վերջին արցունքները եւ բոլորը կ'երթան գերեզմանացից։ Կը մնայ նա մենմենակ — նրա ցուրտ մարմինը — գերեզմանային հանդիսատէր լուսթեան մէջ։

Մենմենակ... Մայր-հետեւութիւնը կը գրկէ նրան, կ'ընդունէ իր հզօր կուրծքի վրայ այդ յոգնած, պաշտելի դուռը։ Կը սփռէ նրա շուրջ իր ալազան գեղեց-

կութիւնները։ Կեանքը՝ զուարթ ու փարթամ՝ կը ծաւալուի նուիրական դամբարանին մօտ, Արեւը կը ճառագայթէ կեանարար իր լոյսը, ծաղիկները կը փռուին ու կը գուրգուրան իրենց թանկագին սիրեցեալին... Եւ սիրոյ, ջերմութեան ու լոյսի այդ գերազոյն ներդաշնակութեան մէջ՝ կը հանդիշ նրա ոգին, որ նոյնքան ջերմ, պայծառ, լուսատու է եւ նոյնքան յաւերժական։

Միւրոյ սերմը կեանք տուեց նրան։ Եւ նրա կեանքը լուսաւոր ամպի նման սըփուռեց ահագին տարածութիւններէ վրայ, ցանկելով ամէնուրեք սերմեր մարդասիրութեան ու ալաւորութեան։ Այն դուռները, որոնցով բնութիւնը առատօրէն օժտել էր նրան — բոլորն էլ նա վերադարձրեց իր ժողովրդին։ Ինքը մնաց առանց ոչնչի։ Հոգին, իր վերջին գոյքը, աւանդեց նա Տեղեկներին։


Այնտեղ, Բնութեան ծոցում, չկայ այլեւս լաց, արցունք, ատամներէ կըրճըտոց։ Այնտեղ վերջապէս կը հանգստանա ողու, սիրելի ընկեր...

✽

Գե՛ղ եմ դիմում, սքանչելի՛ մանկիկ, որ աշխան ծնունդն ես թոքապաշտ հայրիկի եւ միակ գոհարիկը նրա շուրջում գանձերից։ Աճի՛ր, իմ սիրելի վիզէն. եղիւր մաքուր աղանձակ եւ սրաթուիլ արծուիկ... ու դեմա՛ նոյն ճամբով։ Դուն էլ դի՛ր գլուխդ հարազատ ժողովրդի համար եւ եղիւր արժանի Հայրիկիդ։

(1913)

ԴՈՔՏ. ԶԱԽ(ՐԻՆԻ)



digitized by A.R.A.R.@

ԶԱՒԱՐԵԱՆԻ ՀՈԳԻՆՆԵ

Ահաւասիկ մօրդ արցունքն իմ ճակատիս,
 Եւ իր ազերսն ու հեծեծանքն աչքերուս մէջ,
 Եւ աւասիկ գաւկիդ զարմանքն ու զարեւորանքն հոգիս մէջ,
 Եւ քեզ կու գամ, քու մահուր մահդ ողջունելու...

Եւ ես կ'ողջունեմ քեզ, ո՛վ յանկարծամահ ուղեւոր,
 Եւ փառքերէ փախստական եւ ըստի տարագիր,
 Ակնթարթի՛ մէջ ոգեվարող եւ լոյսէն արա՛գ մահացեալ
 Եւ այսպէս քեզ ողջունեմ քեզ, մահուանդ առջեւ երգելով...

Եւ քեզ ողջունեմ քեզ, ո՛վ հոգիի ուսումնարան,
 Ուր մարդերն սկսան մէկգմէկու վրայ խաբէիլ.
 Եւ ես կ'ողջունեմ քեզ, ո՛վ բարեհամբաւ բանտարկեալ,
 Սրբ քու քաղցի օրերուդ՝ դուն քու սիրտդ կրծատեցիր...

Եւ ես քեզ ողջունեմ քեզ, երեց եղբայր մեր ամենուն,
 Մեր ամենուն խնկարկու, մեր ամենուն մտրակիչ,
 Եւ անկաշկանդ հոգեւոր, եւ մահաւորաց հալածիչ...
 Եւ դուն՝ տանարներ մահբազդածդ ընկերային նազովրեցի...

Եւ ես կ'ողջունեմ քեզ, ըմբոստութեանց կարմիր դրօշ,
 Որ գերիին եւ անխելին համար՝ մայմ ժամանակ ծածանցար,
 Եւ դեռ քաղցրօրէն դուն ճիւղին խաղաղութեան.
 Եւ մըրկէ մը տարուած բազմապտուղ եւ բարի ծառ...

Եւ ես կ'ողջունեմ քեզ, խորհրդանիշ պայծառութեան,
 Դռն մարդերու խղճին նժար,
 Դռն մարդերու մտրակիչ եւ մարդերէն մարտիրոս,
 Եւ դուն, անոնց անգին նոխազ, եւ դուն անոնց անգին գերի...

Եւ ես՝ իմ տէրերս՝ վս կ'ողջունեմ քեզ, քափառական այցելու,
 Դուն՝ ուրիշին ուղեցոյց, դուն ուրիշին արահետ,
 Դուն ուրիշին ոտքի հող, եւ ուրիշին գլխի պսակ,
 Եւ ուրիշին ողջակէզ, եւ ուրիշին համար ամբողջ...

Եւ ես կ'ողջունեմ քեզ, ո՛վ փրկարար փոքորիկ,
 Դուն զարշուքեանց մահրիչ եւ փոքրագութեանց խաբազան,
 Դուն քու խաչդ ուսիդ՝ Գողգոթայէն վեր մագլցող,
 Ո՛վ սրբակրօն Սիմէոն, ո՛վ եղբական մարդ Յիսուս...

Եւ դարձեալ քեզ կ'ողջունեմ, հայ ժայռերու կողէն հոսող՝
 — Բայց ծարաւիդ բշնամի — աղբիւր բերրի, աղբիւր պայծառ,
 Որ առուակէ առուակ, եւ հոսանքէ հոսանք, ու դաշտէ ի դաշտ,
 Դու քու կեանքիդ այս անմահ գետն յօրինեցիր...

Բ Օ Թ

Մին էր անոնցմէ, այն կամաւորներու պզտիկ խումբէն, որոնք օրին մէկը անհնարին երազ մը իրականացնելու համար առաջ նետուեցան:

Ահա մեր Արուեստը՝ առաջ նետուիլ, ամէն բանի մէջ եւ ամէն տեղ: Ահա մեծ Պատիւը՝ ամէն վայրկեան վտանգին դէմ, բանտին դէմ, կախաղանին դէմ քայլել եւ քայլել աներկիւղ. եւ ահա մեծ Արիւթիւնը՝ պարտասումին եւ վհատութեան դէմ, եւ ափառ՝... երբեմն նոյնիսկ քու ազգիդ կողմէ եկող հարձակումներուն եւ առեւտրութիւններուն դէմ քայլել եւ քայլել անվրէժաւ:

Եւ այս եղաւ քսան տարի շարունակ կեանքը այս երիտասարդներուն, այսօր ծերեր արդէն. այս եղաւ սխրալի դիւցազներգութիւնը եւ անհաւատալի վէպը՝ որ Հայկական Յեղափոխութիւն կը կոչուի:

Սիւնոն Զաւարեան մին էր անոնցմէ, անիկա աստուածներու գերագոյնը՝ Հիմարտութիւնը պաշտեց մինչեւ վերջը. կրօններէն ազնուագոյնին կապուած մնաց՝ հոգնամանքին. սէրերուն ամէնէն դժբախտը ունեցաւ՝ Ազգի սէրը:

Միշտ իր պարտականութիւնը կատարելու զբաղած գլխով զինքը՝ այնքան որ ատեն չունեցաւ իր իրաւունքին վրայ մտածելու. իրաւունքը ուրիշներունն էր. Պարտականութիւնը՝ իրենը. ահա բոլոր Զաւարեանը: Եւ սուրբ համոզումով մը, անիկա ընչազուրկներուն կեանքովը ապրեցաւ, առանց տրտումի, գուարթութեամբ եւ այնպէս ալ մեռաւ: Մեր դարը, որ հակադրութիւնները կը սիրէ կարծես, *arriism*ի, ստորին դրամապաշտութեան արտադրոյթներուն դէմ յանկարծ Զաւարեան մը կը հանէ:

Տարօրինակ հակադրութիւն մը նաեւ, որ այս մարմնապէս վտիտ մարդը Մեծ Յեղափոխութեան Պատկառամքն էր: Իր պարգոյութիւնը եւ համեստութիւնը ցոյցէ եւ աղմուկէ հեռու մնաց ամէն ատեն. աշխատիլ՝ այս եղաւ իր նշանաբանը. աշխատիլ՝ մինչեւ վերջը, մինչեւ յետին բապէն:

Վերջը վերջը այս գրկամէի կեանքը հիւժեւ մաշեցուցեր էր զինքը. արտաբուստ իր աշխոյժը կը պահէր տակաւին, բայց իր տառապանքը երեսին վրայ կը կարդացուէր: Բժիշկները հանգիստ պատուիրեցին իրեն. անիկա իր գործը շարունակեց. մօտաւոր աղէտի մը կանխաշարժ մշակները բազմապատկուեցան. Զաւարեան իր աշխատութեանցը մէջ էր. օր մը սակայն, էն վերջերը, ալ պարտաւորուեցաւ խռտովանիլ բարեկամի մը.

— Շատ տկար կը գգամ իմ գիրքս:

Մահամերձ էր. բայց չզիջեցաւ անկողին մտնել ու նորէն աշխատութեան գացած պահուն, ճիշդ Աշխատանքի Տան առջեւ, որ այսպէս խորհրդանշանը եղաւ իր կեանքին, մեռաւ հոռմայեցի կեսաբին պէս ոտքի վրայ:

ԳՐ. ԶՕՀՐԱՊ

20 Հոկտեմբեր/2 Նոյեմբեր 1913



Ս. Ջալալյան և Քրիստոփոր
Երջանի խմբագրատան պարտեզի մեջ

ԵՆՈՆԲ ՈՂԶ ՄՆԱՆ...

Այդ Կիրակին Արզամանքը հռուզեփոխ մէջ էր: Գիւղը կորոնցուցած էր իր միապաղաղ հանդարտութիւնը: Ու մարդիկ կը շարժէին աւելի արագ, խօսակցութիւնները կ'ընթանային բարձրաձայն ու առոյգ, սովորական լուծեան փոխարէն: Դպրոցներու ընդհանուր տեսուչը, առաջին անգամն ըլլալով, պիտի այցելէր Արզամանք, ու անոր այցելութիւնը կըրկնակի նշանակութիւն ունէր այս աշխատանքի բարձրութեան աչքին, որ բերնէ բերան լսած էր, թէ նոր տեսուչը յեղափոխութեան հիմնադիրն ու առաքեալն է միեւնոյն ժամանակ, հին օրերու անմահողհութեան տիպարը, բոլոր յեղափոխականներու մեծը, ու պաշտամունքի առարկան: Տեսուչը հեռու հորիզոններէն անցած-եկած էր լոյս ու ոգի սփռելու Սահակի եւ Մաւոյի հնադարեան լուսաստու օրրանին մէջ:

Ու դիւզը, որ արտակարգ պատահարի մը կը ռազմէ, տարին անգամ մը զուրս պոսթիկալու իր անշարժ ու լուռ կեանքէն, հեղեղատի խառնուրդով մը իրարու միայ կը կուտակուէր՝ բռնելով գիւղի վարի փողոցներն ու տանիքները, եւ գոյնգոյն ողկոյզներ կազմած՝ կը հակէր դէպի դիմացի ճանապարհը, որ քաղաք կը տանէր:

Հազուադէպ այդ պահուն միայն, գիւղացին կը մոռնար արան ու ամիր, արօրն ու մանկաղը, որպէսզի, քիչ յետոյ, հագիւ իր հետաքրքրութիւնը գրհացած, դառնար առօրեայ կեանքին, հողին պէս հանգարտ, եզի պէս համբերատար, ճակատագրապաշտ յաւիտենականութիւն մը իր դէմքին:

Յեղափոխութեան առաքելը պիտի գայ...

Լուրը, որ թոնիրէ թոնիր կրակի պէս

արագ անցած էր գիւղի շրջանն ընելով, Սէյրանեց ծածքին տակ կ'արձագանդէր միայն յեղափոխութեան ներկայացուցչի տիրոգոսով, տեսուչը մոռացութեան արեւած: Ամէն ժէկը իր հոգու հետաքրքրութեան դուռը մտնելու ճեղքով կ'ըմբռնէր այս գալուստը: Երէցն ու երէցփոխները, գիւղացեան ու վարժապետը, տեսուչը կ'ուզէին դիմաւորել, սպիտակ երես երեսալու անոր առջեւ՝ դպրոցին նպաստ մը ապահովելու համար: Գիւղի կոմիտէն ու խմբապետները յեղափոխութեան ներկայացուցչին կ'ուզէին ներկայանալ իրենց ամբողջ կազմի ցուցադրումով: Համեստութեան մէջ կեկուած հին ընկերները ազատ լոյս մը կը սնուցանէին՝ անցեալ օրերու յեղափոխական առաքել մը դիմաւորելու, պարզ ու անեղծ, զաղաքարական ու աննկուն դեկամետր: Գեղական միաբան քաղութեան համար եկողը Ազգին մեծն էր, բոլոր տեսակի հանգամանքներով օժտուած, ու Ազգ բառը յեղափոխութեան իմաստն ունէր այս քաղութեան քով:

Տեսուչը ճամբայ ելած էր քաղաքէն: Ոտքով կ'անցնէր գիւղերէն, յենուած հովաւիկան դաւազանի մը միայ: Հազուադէպ էր պարզուկ եւ անխնամ: Ուսէն կախուած էր կաշիէ պայուսակ մը, ուր զետեղուած էին իր նոթատետրը եւ կտոր մը հաց: Այնխառն մօրուքն ու մազերը հովին տուած՝ կ'անցնէր ծաղկած անդամատաններէն: Պայծառ էր անոր լայն ճակատը, դէմքին անուշ եւ առինքնող ժպիտ մը կար: Խորունկ ու երազուն խորհուրդ մը կը փայլէր անոր ճառագայթող աչքերուն մէջ: Ան, տաք ու համատարած շունչի մը պէս՝ կը բացուէր իր շրջապատին, կ'ընդգրկէր հողն ու գիւղացին, մարդն ու բնութիւնը: Անոր տես-

քէն կ'արտացոլար համակ նուիրում մը. կարծես թէ լեռներէն նոր իջած հինաւորաց ճգնաւոր մըն էր, որու լուսթիւնէն իմաստութիւնն ու բարութիւնը կը կաթկթէին:

Տեսուչը եկած էր գեղածիծաղ ու փարթամ մայրաքաղաքներէն, փառքի ուսաններէն, ուր օրաթիւրքերը խոշոր տաւերով կ'արձանագրէին ճատախօսներու անունները, ուր փառասիրութեան պատանդանները շարուած էին բաց կրկէսի մը մէջ, ուր մարդիկ խանդավառութիւնը կը շփոթէին մեծ յաղթանակներուն հետ: Կեանքի բոլոր հաճոյքներէն ինքնակամ հըրաժարած՝ ծիշտ խուսափած էր շողշողուն փառքերէն, իր շուքին պէս, առանց կարեւալ զարպասելու այս ճգնաւոր-առաքեալը, որ հետաւոր երազներն իր աչքերուն մէջ, Հոգին ծիշտ խոսովեալ, չարքալ ու լուռ բազմութիւններուն խառնուեցաւ ու սողորուեցաւ անոնց խորունկ ու անչափելի յոյզերով:

Յեղափոխութեան հիմնադիրը տխրութեամբ համակուեցաւ այս փառատենչիկ մթնոլորտներէն, խարանց մեծամիտները, լանթիւր տեղաց անբարեխիղճներու պիտուն. բարոյական սարսափը դարձաւ բոլոր մեծամեծներուն, ու պահ մը տարաւ կոյսը համակեց այս ամուր Հոգին: Ձգիմանալով այս խելակորոյս ինքնուրացումէն, օր մը, թողեց Պոլիսը՝ հրդեհուած ճառերէն, ու բռնեց Տարօնի աշխարհի ճառապարհը, հոն, լուռ ու քարացած սրտերուն հետ եղբայրանայու, աշխատաւորներու քրախնքի հոտն առնելու եւ այդ հոգին ու ժալօն վրայ արիւնով արձանագրուած անանուն հերոսներու պատմութիւնը կարգալու համար:

Հոգ, ուր տասնեւհինգ դարեր լեզու առած՝ իրեն կը խօսէին քանդուած բերդերէն, վանքերու գմբէթներէն, ճեղքուած ժայռերէն, ան գտաւ լուռ ու երկաթէ ժողովուրդ մը արօրին վրայ հակած՝ բայց երբեմն թուր կէծակին բռնող, վէրքերով լի՝ բայց արի, կեղծքուած՝ բայց հպարտ, անանուն՝ բայց իմաստուն ու անձնուրաց: Եւ սիրեց իր հաւատքը իր իսկ ձեռքի՝ հիմնած յեղափոխութեան մասին: Յեղափոխութեան հիմնադիրը իր մեծ գործի իսկական տաճարը գտաւ այդ երկրին մէջ ու ըս-

փոփանցով մօտեցաւ բոլոր անոնց, որոնք իրենց հոգիին մէջ անթիւղուած կը պահէին հաւատքը սրբազան ուխտին:

Գիշեր ու ցերեկ, հովուական ցուպ մը ձեռքը, պտըտեցաւ լեռ ու դաշտ, լոեց ու դրեց անցած օրերու. հաւատացեալներու խաշիւութիւնն ու մարտիրոսութիւնը, ծանօթացաւ դաղտնի գործի բոլոր ծալքերուն, անուանացանկը պատրաստեց բոլոր այն լուռ մարդոց, որոնք խաւարի մէջէն քալեցին՝ իրենց հոգու ճրագով լուսաւորւած, ընտանեցաւ ու ընկերացաւ անոնց, որոնց մասին թերթերը չէին գրած, բեժերէն անոնց անունները չէին հնչած, որոնք ստեղծեցին հայ կեանքի աղը կը կաթէին, — յեղափոխութեան բարոյական շէնքը առանց ուսերուն վրայ կը բարձրանար: Առաքեալը մօտեցաւ այս բոլորին հին ու ծանօթ ընկերով մը պէս, խօսեցաւ անոնց հետ առանց նախաբանի, կարծիք տարիներ առաջ կիսատ մնացած իրաւեցութիւն մը շարունակելու համար:

Մեծերու եւ հզօրներու պատուանդանը ճարձատեցաւ: Բարոյական խորշակ մը դպաւ անոնց դէմքին: Առաջնորդներու, վանահայրերու եւ անուանի մարդոց քօնը փախաւ: Ու անոնք շուարեցան այս անուշադոն կոչեցեալի խարաղանէն, որ եկած էր յեղափոխութեան սրբազան տաճարը մաքրելու փառիսեցիներէն...

✽

Առաքեալն ալ օրը Արդափանքի ճամբան բռնած էր՝ հին խոհերով եւ յոյզերով տուեցուն, ու գինովացած յաւթի դաշտի կենսայիւր խորհուրդէն, իրեն ընկերացող ուսուցիչին կը խօսէր հոգէն ու գիւշէն, ապագայի կտրելիութիւններէն: Ին գիտուն էր, ու միեւնոյն ժամանակ՝ ներշնչեալ հաւատաւոր մը:

Արդափանքը պարզուած էր դիմացը: Գիւղին տակ ճամբան եկած ու մեխուած էր աթարի սեւ դէզերուն, ու մոխրագոյն երկար սաւանի մը պէս կը սարսափ բաց դաշտին մէջ: Տեսուչը պահ մը կանգ առաւ, չըլսպատը ընդգրկեց, խորունկ չունչ քաշեց: Յիշատակ մը, հին երազի պէս, անոր խոհուն աչքերուն մէջ խաղաց: Իրեն ծանօթ, շատ ծանօթ անցած-դացած

ողբերգութիւն մը աւելի թարմ, աւելի շօշափելի, ողորդեց անոր սիրտը: Պորին լոռութիւն մը իջաւ անոնց վրայ: Ու անոնք յոգնած ուխտաւորներուն պէս մօտեցան գիւղին:

Գիւղն իր հասակի կարգով, պաշտօնական գիրքով ճամբուն բերանը բռնած է:

Իրարանցում, հարցական նայումներ և

— Ա՞ն է, ան չէ՞...

Տարակուսանք, շարժում, հիասթափութիւն:

Ոչ ձիաւոր, ոչ շուք, Բայց Եկողը իր պարզութեան մէջ անանուն պատկառանք մը շաղկած կը թուի: Գիւղացիները պահ մը ճգնաւորներու պարզութեան վրայ կը մտածեն: Վերջապէս, գիւղի վարժապետը կը ճանչնայ.

— Տեսուչն է, այս՛, այո՛, ան է...

Գիւղացիտի, խմբապետի եւ վարժապետի տղերքը իրար կը խառնուէին:

— Բարո՛վ, հազա՛ր բարով, մեր գըլխուն, մեր աչքին:

— Բարեւ...

Ու ժողովուրդն անոնց ետեւ եւ ցուրճներու վրայ խոնուած՝ տակաւին կը նայի, ձիաւորներու երեւումը դիմաւորելու համար:

— Հրամմեցէ՛ք, հրամմեցէ՛ք:

Իրարու բերնէն խօսք կ'առնեն, գիւղին մեծերը: Տեսուչը յենուած իր ցուպին՝ բարի, յատ բարի կը նայի անոնց, բայց կը մտածէ:

— Սէյրանենց տունը կ'ուզեմ հանդիպել:

— Պարոն տեսուչ, երթա՛նք, հանդիպեցէ՛ք, յետոյ...

Գիւղն ու տեսուչը իրար չեն բռններ: Երկու հին ֆետայիներ ծակծկուած արեխներով ու հողոտ կուրծքով կը մօտենան: Անոնց աչքերուն մէջ կայծ կայ ու դէմքին վրայ՝ արտաշարժ ուրախութիւն: Հի՛ն, հի՛ն օրերու ոգին արթնցած էր անոնց մէջ՝ իրենց կորած ընկերներու վերաջնջումով:

— Երթա՛նք, ընկեր տեսուչ... երթանք Պօղէնց տունը. էնոնք մեր հին ընկերներէն էին...

Առաքեալը առանց խօսքի անոնց ընկերացաւ: Գիւղի մեծերը պաշտօնական կարգը պահեցին, եւ հոռանքն արժանապատուութեամբ թեքուեցաւ ու հետեւեցաւ անոնց: Դաժան օրերու յիշատակները հասուն մարդոց շրթունքներուն վրայ դողացին: Գիւղը կարծես թէ նոր կ'արթննար Սահմանադրութեան գինովութենէն, կոտորուած մարմնով, մտածկոտ:

Սէյր հին ընկերներէն վազեց Սէյրանին լուր տալու: Սէյրանը կանգնած էր դուռը, գեղական զանգուածէն հեռու, բայց հոգիով անոնց հետ, որտէ՛ հեռոտ բարսխումով կը սպասէր անոր, որ պիտի դար Մովսսարէն:

Ու ահա, վարի փողոցէն անշուք մէկը կը բարձրանար, գթոտ եւ խօսուն ժպիտ մը դէմքին, հին ու ծանօթ շունչ մը բերելով իր հետ, ու գիւղը երերալով՝ անոր կը հետեւէր: Սէյրանի աչքին պատկերացաւ Հրայրը, որ տասը տարի առաջ, օր մը արիւնշոտ օրերէն, այսպէս անշուք, այսպէս առաքելական, տրեխները հազած՝ աշխոյժ քայլերով վեր կը բարձրանար դէպի Պօղէնց շէն օճախը:

Երկար սպասումի եւ յուսալքումի տարիներէն յետոյ, այս դալուատը հրաշքի մը պէս բացուեցաւ Սէյրանի հոգուն մէջ: Իր պաշտած անձնութեան վերադարձը կը տեսնէր իր աչքերով, ու անոնց հետ՝ իր երեք կտրիճ զաւակներու դալար հասակները կը լեցնէին Պօղէնց շէմքը: Սէյրանը մոռցաւ տարիներու անյատեկ վիշտը, լեռներու մէջ կորած զաւակները գտնելու ուրախութիւնն այլեւ տուած մայրական յորցած երակներէն, եւ յուզումը տաք հեղեղատի մը պէս բարձրացաւ դէպի անոր դէմքը: Լուռ ու անշարժ արձանի մը պէս՝ ան կը դիտէր իրեն մօտեցող ճամբորդը: Արցունքները կայլակ առ կայլակ վար կը թափէին անոր տասը տարիէ ի վեր ցամքած աչքերէն, ու արցունքի ակօսները երկուքի կը բաժնէին երջանկութեան ժպիտը, որ կը զողզողար անոր գունատ դէմքին վրայ:

Յեղափոխութեան հիմնադիրն ու Սէյրանը իրար դիմաւորեցին հին ծանօթներու եւ զործակից ընկերներու պէս: Անցեալը վարազոյր շունչէր անոնց համար,

նակը կը մնար անցեալ օրերու սլաքին վըրայ: Անոնք լուռ էին, բայց անոնց հոգին յիշատակներով բռնկած էր:

— Բարով եկար, վըր իմ աչքին եկար, դուրբան քու եկած ճամբին...

Տեսուչն անկարելի յուզումով, գորովալից շարժում մը միայն կը ցուէր:

Տեղաւորուեցան թոնրատուն: Յկողմ-զացող հին յեղափոխականները Պօղէնց օճախի աղն ու հացը այդ թոնրին լուր-թին կտրած էին:

Տեսուչը զմայանքով կը դիտէր Սէյրանի դէմքը, ուր անկարելի ողբերգութիւն մը արձանագորութեամբ էր: Երկու Ֆետայիները իրենց ծնողքը դատած որբուկներու ուրախութեամբ համակուած՝ սեղմուած էին Մեծ բնկերով քովը, մտերիմ ու գուր-գուրալից: Անոնք՝ այդ օրը յաղթանակ մը տանողի հոգեբանութիւնը ունէին. խօսքը անոնց կը պատկանէր: Գիւղական երեւե-լիները շարուած էին պատերուն երկայն-քով, լուռ ու սպասողական: Թոնրատունը աղօթատեղիի մը պէս խորհրդաւոր, կար-ծես իր յորտ պատերուն մէջ յամփոփուած ողբերգութեան մասին կը խօսէր բոլորին:

Սէյրանի աչքերէն արցունքներ կը հոսէին ինքնաբեր: Ան լուռ էր ու հանգարտ եւ դէմքին վրայ երջանկութեան դունաստ ժպիտ մը կը բեկբեկէր: Հարաւ կեցած էր սիւնին քով, սիւնին պէս անշարժ, խնկենի դէմքով:

Ֆետայիները, գրեթէ անյայտ շու-կով, յեղափոխութեան վարիչին պատմե-ցին կորած ընկերներու պատմութիւնը: Սէյրանէն աննշմարելի՝ անոնք ցոյց աը-ւին պատկան կախուած գտականքը, որոնք այս տունը յեղափոխական Պանթոնի վե-րածած էին:

Առաքեալն անհուն տխրութեամբ հա-մակուեցաւ: Պօղէնց տան ողբերգութիւ-նը եւ այս որդեկորոյս մօր հաւատքը կը մեծնային — անպարագիծ ըլլալու առաքե- ճան — առաքեալի աչքին, յեղափոխու-թեան կարծրութիւնն իր ամբողջ կարծ-րութեամբ կը ներկայանար այդ անողոք շարժման հիմնադիրին, ու ան, այս ան-պատում վշտին դիմաց շուարած կը մնար, չգտնելով մխիթարանքի եւ սփոփանքի

խօսք մը ուղղելու մօր մը, որ առանց զգեստներու, կաղնիի պէս դիմացած էր ահռելի փոթորիկներուն: Այդ դառն ու մըրկող իրականութենէն ընկճուած՝ ան բնագ: օրէն կ'ապաւինէր սովորական ար-տայայտութեան.

— Ինչպէ՞ս ես, մայրիկ...

Սակայն, սովորական հարցումը, որ տրուած էր առանց պատասխան մը ստա- նալու ակնկալութեան, կը հնչէր խոր, շատ խոր Սէյրանի քրտէն ներս, ու ան գու-րովով ու նուիրումով լեցուն, պայծառ ու հաւատաւոր դէմքով կը պատասխանէր.

— Դուք ողջ մնաք... Ինո՞նք ողջ մը- նան...

Սէյրանի ձեռքն ու աչքերը կտրկառած կը մնային դէպի Պօղէի, Մոսոյի եւ Պալէի գտականքը, ու դէմքը օծուն էր հրաշալի տեսիլքով մը:

Սարսուռ մը անցաւ բոլորին մարմնէն: Յեղափոխութեան առաքեալը իր հիմ- նած մեծ գործին աւանդատունը մարմնա- ցած տեսաւ այս կնոջ մէջ: Երկիւղած հո- գիով նայեցաւ Սէյրանին, նայեցաւ ան- մահներու տաճարին, խոնարհեցաւ ու մեծ յուզումով համբուրեց մայրիկին ձեռքը: Լուսթիւնը բոլորի հոգիին մէջ պա- տարազի կանգնած էր: Յեղափոխական հին սգին Պօղէնց առատագին տակ կը մխար՝ խունկի բուրմունքով: Ու հովերը, հազար թեւանի, մթնոլորտի մէջ խտացած բարոյական շունչ առած՝ կը տանէին հե- րաւոր գիւղերն ու աւանները:

✽

Անմահութեան դաղափարը յարու- թիւն առած՝ դարձեալ պարտեցաւ Տարօնի աշխարհին մէջ ուրուականի պէս:

Սէյրանը այդ երեկոյ երկար կեցաւ տան շեմքին եւ նայեցաւ բարձր սարերուն: Երբ մթնշաղն իջաւ եւ թանձրացաւ Արդա- վանքի կտուրներուն, ան վերադարձաւ թոնրատուն եւ հարին պատմեց, թէ իր աչքերով տեսաւ Պօղէն, Մոսոն եւ Գա- լէն, որոնք ժայռերու պէս իրարու թի- կունք տուած՝ Ծովասարի գագիթափերէն կ'անցնէին սպառազէն:

ՎԻԳԷՆ ԳԼԱՆ (ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ)

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ

(ՅԵՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)



1890 թ. Սեպտեմբերի սկզբներու Ձաւարեանը անցաւ Տրապիզոն, երկ-
սեւ դպրոցների տեսչի պաշտօնով, իր մի ընկերով Հետ: Մի ամսից յետոյ
գնացի եւ ես եւ տեսայ, թէ որպիսի եղանակով Ձաւարեանը կպել էր իր գոր-
ծին: Գարն ժամանակամիջոցում նա կարողացել էր ձեռք բերել աշակերտու-
թեան, ուսուցիչների եւ ժողովրդի բուռն համակրանքը: Բայց սկսած ղեղե-
ցիկ գործը ընդհատուեց յանկարծ:

Փոխիները փողոցում, դպրոցի ծառայի ձեռքից, երբ նա նոր էր դուրս
եկել աւտորիական փոստատանից՝ իշխոն երկու նամակ Ձաւարեանի հառ-
դէով: Ինչպէս վերջը իմացանք, այդ նամակների մէջ տաճիկ կառավարու-
թեան ղեմ ոչինչ չկար: Սիմոնի գաղափարակիցներից մէկը գրում էր միայն
ընդհանուր հարցերի յուրջը:

Սկսուեցին խուզարկութիւնները, որի հետեւանքը եղաւ իմ բանտար-
կութիւնը: Տաճիկական բանտ... բայց տեղը չէ այժմ խօսելու դրա մասին:
Կատարուած հարցաքննութիւնից ինձ համար պարզ էր, որ Ձաւարեանին բան-
տարկելու են. զգուշացրի նրան եւ խորհուրդ տուի հեռանալ:

— Ինչ ուզում է յինի, բայց ես չեմ հեռանայ, — պատասխանեց նա:

Եւ երբ մօտ երկու ամսուայ բանտարկութիւնից յետոյ Հիւանդութեան
պատճառով ինձ տեղափոխեցին մի առանձին բնակարան՝ ցախթիւնների հրո-
կողութեան տակ, յանցաւ մի քանի օր եւ բերին ինձ մօտ Ձաւարեանին:

Սկսուեց Ձաւարեանի հարցաքննութիւնը. մանրամասնութիւններ չեմ
յիշում, միայն մի կէտ մնացել է իմ յիշողութեան մէջ եւ ես կը յիշատակեմ
որպէս նմոյ՝ տաճիկական դատարանական հարցաքննութեան:

Ձաւարեանը մի օր փերադարձաւ քննիչի մօտից յստ երեւոյթին յուզ-
ւած, բայց մշտական ժպիտը երեսին եւ պատմեց հետեւեայլը:

— Դուք, էֆէնդիւմ, — ասել է նրան քննիչը, — անդում էք, որ ոչ մի
կապ չունէք լարժումների հետ եւ եկել էք պարզ տեսչական պաշտօնով, բայց
այժմ հետաքրքիր է՝ ի՞նչ բաղատութիւն կը տաք այս դժբախտին, որը
դառնել է ձեզ մօտ եւ պարզասլէս ապացուցում է ձեր մեղսակցութիւնը: Ա-
հա՛, կարդացէք եւ տուէք ձեր բաղատութիւնը:

Ձաւարեանը փերցնում է այդ ստեղծելի դժբախտին եւ կարդում:

«Ահա ծագեց կարմիր արեւ,
Տաճ ու պայծառ է օրը,
Դե՛հ, քաջեղէ՛ք սիրուն եզմեր
Առաջ տարէ՛ք արօրը»:

— Սա պարզ բանաստեղծութիւն է, չինականի երգը եւ սրա մէջ ոչ մի
կասկածելի բան եւ չեմ գտնում, — պատասխանում է Ձաւարեանը:

Ինչպէ՞ս. դուք, ի հարկէ, ոչինչ չէք գտնի, իսկ մենք նրա համար
ենք նշանակուած բեղահետուր քննիչ, որ ամէն բան գտնենք եւ իմանանք: Ա-

ապագայ խնդրեմ, — շարունակում է խորիմաստ քննիչը, — այդ ինչ արեւ է, այն էլ կարմիր, որ տաքացնում եւ պայծառացնում է օրը. սա պարզ յեղափոխութիւն քարոզել է նշանակում: Իսկ եզները, այն էլ սիրուն եզները, որ առաջ են տանում արօրը — մի՞թէ պարզ չէ, որ եզները բառի տակ ջան ֆիտայիներ պիտի հասկանալ եւ այդ երգը ուղղութեամբ է մեր վեհափառ սուլթանի դէմ:

— Եթէ գտնում էք, որ օրէնքի տեսակէտից այդ երգը իմ մեղադրութիւնն է ապացուցում, շարունակեցէք ձեր քննութիւնը եւ այդ կէտն էլ մտադրէք ինձ յանձնելիք մեղադրական թղթի մէջ, — առում է Ջաւարեանը եւ քննութիւնը վերջանում է դրանով:

Եւ ի՞նչ էք կարծում. երկու ամսից յետոյ երբ յանձնուեցին մեղադրական ակտը, Բաֆֆիի այդ բանաստեղծութիւնն էլ յիշատակուած էր նրա մէջ որպէս հիմունք Սիմոնի մեղադրութեան:

Վերջապէս հասաւ դատաւարութեան օրը: Մենք, ի հարկէ, նախապէս որոշել էինք մեր բանելիք դիրքը դատարանում: Նկատի առնելով, որ մեղադրութիւնը ամբողջապէս հիմնուած էր այնպիսի փաստաթղթերի վրայ, ինչպէս օրինակ՝ «Ահա ծագեց կարմիր արեւ» եւայլն, մենք որոշեցինք ապացուցել միայն թէ որպիսի առիթմն ու երեխայական մեղադրանքներ է մեզ յայտնուած եւ դրանից դուրս ուրիշ հարցեր չլուծուին:

Սակայն դատաւարութեան ընթացքում փոխուեց պատկերը: Դատախազը իր մեղադրական ճառի մէջ խօսում էր վերին աստիճանի կրքով, բռնի խեղամիտում փառսերը եւ աղաւաղելով Սիմոնի ստացած նամակի մի քանի կէտերը՝ ճշմունք էր ցոյց տալ, որ դատի ենթարկուածները պատկանում են այն կարգի մարդկանց, որոնց համար դոյուքիւն շունի որեւէ իրաւակարգ, օրէնք:

Նախագահի առաջարկութեամբ Սիմոնը պիտի տար իր բացատրութիւնը: Հանգիստ, հասկանալի ինքուով նա սկսեց իր ճառը:

Թարգմանի միջոցով խօսում էր նա անհատի ազատութեան, ազգերի համերաշխ գործակցութեան, աշխատանքի հաւասար բաշխման եւ ընդհանրապէս արծարծում իր դաւանած գաղափարները: Իր հայեցակէտները պարզելու համար պատմութիւնից եւ բնութեան երեւոյթներից վերցրած օրինակները ձեւակերպում էր այն աստիճանի պարզ լեզուով, որ խորամանկ նախագահը բոտ երեւոյթին կարծես համաձայնում էր նրա հետ եւ յաճախ գլխի շարժումներով հաւանութեան նշաններ էր տալիս եւ ընդհատում:

— Փէ՛քի, ֆէ՛քի (լաւ, լաւ):

Եւ նկատեցի, որ Սիմոնը արդէն ողբերգական շատ առաջ է դնում, ըզգուշացրի նրան կարճ կտրելու, բայց ի դուր:

— Երբ իմ բարոյաւ իրաւակարգի մուտ գործի կեանքի մէջ, այն ժամանակ արդարադատութեան տաճարում այլեւ չեն լինի պարոն մեղադրողի նման դատախազներ. — այս խօսքով Սիմոնը վերջացրեց իր ճառը:

— Սիմէոն Ջաւարեանը, — յայտարարում է նախագահը, — դատաւարութեամբ է չորս տարի բերդարգելութեան, իսկ մտացած մեղադրեալները անպարտ են ճանաչուում:

Դատաւճիռից յետոյ անցաւ մի ամիս եւ ուսուսց դեռպանի պահանջմամբ Սիմոնը յանուեց Կովկասի իշխանութեան:

Թ. ԱՐՂՈՒԹԵԱՆ

3/16 Նոյեմբեր 1913

digitised by A.R.A.R.®

ԱԶՆԻՒ ԵՒ ԱՆԿԵՂԾ

Ամէն մարդու էլ հօ չի կարելի ամուսնել ազնիւ եւ անկեղծ:

Շատ հազարների մէջ մինը կարող է լինել ազնիւ եւ անկեղծ:

Էս տեսակ հազարագիւտ մարդկանցից միմը էր Սիմոն Զաւարեանը:

Նա կարող էր յիշուել, բայց դիտարութեամբ չէր խաբիլ երբեք, ճշմարտութեան համդէպ այժ փակելու տավարութիւն չուներ, չգիտէր գնալ բազմութեան ետեւից, չգիտէր ձեռնալ է՛ն, ինչ որ չէր, եւ միշտ մնաց անկեղծ, ինքնուրոյն ու ինքնատիպ:

Բոլոր սրտով նուիրուեց ամէն գործի, ինչ գործի որ մօտեցաւ — գիտական, հասարակական թէ ազգային, տուեց ամէն բան, ինչ որ ուներ եւ կարող էր տալ, եւ միայն մի մարդ կար, որին կեանքում անխիղճ կերպով զոկեց ամէն յարմարութիւնից, ամէն համայնից ու ամէն վայելիքից — այդ էլ հենց ինքն էր:

Իմտելիզեմն ու կուլտուրական մարդ էր՝ բառի ամբողջ իմաստով եւ զարմանալի քննաշարտի տէր: Ամէն անգթութիւն անուանելի էր նրա համար, ամէն անարդարութիւն անկեղծում էր նրա հոգին, ինչ ապարդիւն ուզում է լինէր, եւ նա բնաւ համգիտ չկարողացաւ ունենալ էս անգթութիւններով ու անարդարութիւններով լիքը կեանքում:

Գիտական-կուլտուրական անհատը յայտնուում էր նրա մէջ ոչ թէ սովորական ճապող ու անգոր պատկերով, այլ որոշուած էր յայն հայրենասիրութեան առողջ գգացումով եւ հայրենագիտութեամբ բուռն տենչով:

Տասնըջորս տարուց ի վեր ձեռնարկած էր մեր երկրի առում-նասիրութեան գործին — Սասուն, Տարօն, Կիլիկիա ու Կովկաս — հայի բազմապիսի աշխատանքն ու ինքնուրոյն կեանքը ներկայացնելու եւ գործի արդիւնքը կարմրագոյն Սասունին յատկացնելու դիտարութեամբ: Եւ դժուարեւում էր չմեր գեղարուեստական եւ գեղեցիկ շրջանի մէջ ո՞ր ճիւղի վրայ կանգ առնել, բոլորն էլ այն-քան են գեղեցիկ, այնքան են ինքնուրոյն:

Հենց էս խոշոր գործի մեծ այբովը կազմելու պատրաստութեամբ վրայ էր, որ հետագիւրը գուժեց, թէ ինքն էլ չկայ: Գնաց՝ շատ գնացածների անդարձ ճանապարհով, եւ մեծ մասած ենք մնացողների սովորական հաշուետւութեանը, թէ ինչ առաքինութիւններ ունէր նա:

Ինչքան էլ առաքինութիւններ ունենայ մարդը, ամէնից զբո-խարն էն է, որ անկեղծ լինի ու ազնիւ:

Եւ Սիմոնը անկեղծ էր ու ազնիւ:

Սակայն մեր դժբախտ աշխարհում, ուր շատ բան միանգամայն թարա է հասկացում, նրա անկեղծութիւնն ու ազնւութիւնն էլ վերջը պատիժ դարձան իր գլխին եւ նա գերեզման է իջնում ծանր տպաւորութիւնների տակ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հոկտեմբեր 1913

ԻՆՔՆԱՏԻՊ ՄԱՐՏԻԿԸ

Օրուայ խօսակցութեան առարկան, այն ժամանակ վարձու աշխատանքները կամ բանուորներն էին, եւ եղած գործնական առարկաները մեծ մասամբ նրանց վիճակի բարելաւմանն էին վերաբերում։ — ուր ժամայ բանուորական օր, մինչեւ աշխատավարձ, աշխատանքի պետական ապահովագրութիւն եւայլն — սրանք էին կազմում մեր ուշադրութեան գլխաւոր առարկան։ Զաւարեանը տարօրինակ էր գտնում այս շտիկներեան մտածողութիւնը։ Ու տարօրինակ էր գտնում, որ շատերն այդքան բացառիկ ուշադրութիւն էին նուիրում վարձու-բանուորներին այն ժամանակ, երբ հայ ժողովրդի 90 առ հարիւրը գիւղացիներին է կազմուած, սրանք վարձու բանուորներից շատ աւելի վստօքար դրութեան մէջ են գտնուում։ Դրա հետ միասին նա առաջարկում էր մի շարք գործնական միջոցներ գիւղացիների տնտեսական եւ սոցիալական վիճակը բարձրացնելու համար, որոնցով վերադարձաւ գործնական պահանջների ծանրութեան կենտրոնը թեւում էր ղեկի գիւղացիները։

Վերջին անգամ եւ տեսայ Զաւարեանին բոլորովին այլ պայմաններում։ Հասարակական տրամադրութեան մակընթացութեանը յաջորդել էր մի տեղատուութիւն, եւն զրօշակները շատերի կողմից լքուած էին եւ փառքերկալի կռիւի փոխարէն ամենուրեք լուսւում էին միայն խաղաղ կեանքի քաղցրալուր մեղեդիներ։ Բայց այն նոր փոփոխութիւնը էլ Սիմէոնի պատկերը նայնն էր, ինչ որ առաջ։ Նայն համագումարութիւնը, նայն հայեացքների պարզութիւնը եւ նայն պայքարողի տեմպերամենտը։

Խօսքը դառնում էր դասակարգային պայքարի շուրջը։ Դասակարգային պայքար, այո՛, եւ ընդունում եմ — ասում էր նա, սակայն եթէ դուք դրա տակ հասկանում էք միայն կռիւ գործատիւների դէմ, այդ եւ չեմ հասկանում։ Իմ կարծիքով պայքարի մարդը պէտք է լայն շրջանակով վերցնի իր գործունէութիւնը։ — պայքար ամէն կարգի անարդարութիւնների դէմ։ Գործատիւնն է շահագործում բանուորին՝ կռուենք նրա դէմ։ Վաշխատու՛ն է կեղեքում գիւղացուն՝ կռուենք նրա դէմ։ Մի ա՛գգ է ննջում միւսին՝ կանգնենք ննջողի դէմ։ Բարոյական այլանդակութիւնն է այլասերում հագեկան խեղճութիւններին՝ կռուենք դրա դէմ ե՛ւ։ Մարդկային անարդարութիւնը հազար գլխեան վիշապի է նման եւ եթէ մենք ցանկանում ենք ազատուել նրանից՝ պէտք է մեր հարուածներն ուղղենք նրա բոլոր գլուխների դէմ, մինչեւ որ նա անկենդան գետին տապալուի...

Այսպէս էր խօսում Զաւարեանը։ Որքա՛ն հրահանգիչ էր նրա խօսքը, որքա՛ն հազուագիւտ մեր օրերին...

Ա. Զ.

3/16 Նոյեմբեր 1913

digitised by A.R.A.R.@

Դամիէլ Վարուժանի խօսքը

Գերեզմանատան աշաղին տաքածութիւնը քանի մը բողբէի մէջ լեցունեցաւ մարդկային ծովով մը:

Հոն ալ խօսեցան լատերը — Կերկայացուցիչներ զանազան մարմիններու եւ ընկերութիւններու: Նախ խօսեցաւ Մշտլ Գեղամը, որ թուեց Սիւստի գործերը հոն՝ Տարօնի մէջ... Ապա խօսեցաւ Հայուժեան խուրդոյն թանտեսողներէն մին — Դանիէլ Վարուժան —, սկսելով Վենկեր ճանցով եւ բաւական արցունքներ քաղելով ունկնդիրներէն...

Ա. Խ.

30 Հոկտեմբեր-12 Նոյեմբեր 1913

«Պանը մեռա՛ւ. — ողբացէ՛ք Պանը:

«Անոր հոգին կազմուած Լօռի կանաչագեղ բարձունքներուն վրայ՝ օր մը ճգնաւորի երեւոյթով իջաւ վար. լսեց ողբի աղաղակը մայրենի նրկրին, ու առաւ հոտը ծովացած արեան: Ծովացաւ անոր հոգին, փոթորկեցաւ այդ իր փոքրիկ մարմինին մէջ: Ու գնա՛ց, գնա՛ց զժուարացոյն արահետներէ իր սիրած նրկիրը, իր սիրած յեղափոխական գործին գլուխը...

«Ընկէ՛ր ճան, այլեւս կը տեսնէինք քեզ բոլոր տառապողներուն, խոնարհներուն հետ: Դուն Պանն եղար մեր հայրենիքին. արիւնսդանդ հոգին հսկայական տրոփունին մէջ տրոփեց քու սիրտը. դուն՝ անոր ահօսները խոչալիդ կայծերովը սերմանեցիր: Դուն՝ հայ մշակներուն Մշակը, անոնց սորվեցուցիր հրաշքները խոփին, գաղտնիքը սերմնացանին, եւ անոնց քրտինքով քրտնեցար, եւ միշտ ու միշտ տառապեցար ու գործեցիր անոնց գերմարդկային ջանքերուն արդիւնքին կողոպուտը տեսնելով: Ու նաեւ ճակատդ խոնարհեցիր դեռ միւս խոնարհներուն վրայ, հայրենիքին լոյսի ու հացի քաղցով դալարուող մանուկներուն սիրտին վրայ, տալով ի՛նչ որ ունէիր, տալով մա՛նաւանդ Խոչալիդ բոցը՝ որ խրճիթէ խրճիթ, թոնիրէ թոնիր կանգնեց բոլորը, բորբոքեց գերմարդկային յոյսերուն եւ կարելի յաղթանակին հրդեհովը:

«Գնացի՛ր, գնացի՛ր, եւ օր մըն ալ երբ ամէն ինչ տուած էիր, երբ շունչդ, եւ քու գողտրիկ մարմինիդ արիւնը սփռած էիր

եղբայրներուդ երակներուն մէջ՝ յանկարծ զգացիր, որ սրտիդ մէջ քեզի համար ոչինչ մնացեր է, ու ընկա՛ր Աշխատանքին շեմին վրայ: Որչա՛փ բարի էիր. դոնէ մեզի մխիթարութիւնը տուիր քու յուզարկաւորութիւնդ տեսնելու, միւսնե՛րը, անոնք՝ որ ընկան անծանօթ հովիտներու եւ ձորերու մէջ, անոնք այդ ալ չընտրհեցին մեզի: Բարձրաբերձ լեռներու փէշին տակ կծկուած մանիշակին պէս խոնարհ եղար դուն՝ որուն բոյրը սակայն կը յաղթահարէ միւս բոլոր բոյրերը: Դուն տեսա՞ր արեւօք, ընկե՛ր ճան, թէ քու մարմինդ ի՛նչ բազմութեամբ բերինք հոս, մեռելներու ուսանել անցընելով անցեալ բռնութեան ա՛յն պողոտայէն, որուն սալաշատակները հարթելու եւ պղնձակուտ մթնոլորտը քանդելու համար օր մը խորունկ հաւատքով աշխատեցար: Աշխատանքդ պսակուեցաւ, այո՛, բայց աւա՛ղ, քու գազադով: Որչափնե՛ր պիտի նախանձին քու թաղումիդ. ո՛չ, ոսկիով այսուհետեւ պիտի չղնուի փառքը, եւ ոչ ալ պատանքներուն լաւագոյնը.— Աշխատանքը, եւ իտէալին համար եղած անձնազոհումը միայն դին են անոնց:

«Եւ այժմ, ընկե՛ր ճան, պիտի երթայ քու մարմինդ դեռ անդի՛ն ծովերէ, անդի՛ն լեռներէ, մինչեւ հոն, քու ողբացեալ տնակդ՝ որուն քաղցրութիւնը չուզեցիր վայելել՝ քաղցրութեան համար աւելի թշուառ, աւելի բազմաթիւ տնակներու: Հոն, ափա՛ս, կը սպասեն մայր մը ծերունի, մանուկ մը եւ հարս մը՝ ճրարաբար ձեռքին մէջ. պիտի հասնի դադադդ հոն, այդ ողբացեալ շեմին վրայ. եւ ինչպէ՞ս չըսէ ծերունի կինը, ինչպէ՞ս չըսէ — «Ա՛խ, հարս, ճրագդ մարէ՛»...»

«Եւ տանդ ճրագը մարեցա՛ւ... Բայց ո՛չ, Հայր միայն թաղել չի գիտեր, գիտէ՛ նաեւ ծնանիլ: Պիտի դան քու յաջորդներդ, ձեռք պիտի առնեն կէս մնացած դորձդ, քու անիւններդ սրբութեան պէս պիտի ցրուին մայրենի ճրկրին ամէն կողմը, ամէն խրճիթներու մէջ, բոբրոքելու համար նոր հաւատք, նոր վերածնունդ, պիտի առնեն մուրճը քու առաքինութեանդ, կերտելու համար արձանը իտէալիդ, եւ քու ոգիդ պիտի տաքցնէ այդ մարմարը, շունչ ներարկէ անոր սպիտակ սրտին մէջ, եւ այդ արդէն քու պարզասէր, անկաշառ հոգիիդ տրուած լաւագոյն փառքը պիտի ըլլայ:

«Բուռ մը հող կը նետեմ Սեւ հողերէն վաստակեալ ոսկորներուդ վրայ. հանդիստ անոնց: Քիչե՛ր թողած են այդպիսի լուսաւոր ոսկորներ»:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ԿԵՆՏՐՈՆԻՆ ՄԷՋ

Անա շարժման ու կազմակերպման սկիզբն է, Քրիստափոր, Սիմոն և ընկերները գործի վրայ են, դրամական թուերներն ալ կը հոգին հայրենասէր շրջաններէ դէպի Գաշնակցութեան գանձարանը... Եւ հայկական չարախօսութիւնը կը սկսի արդէն անկիւններէն քարեր մետել յեղափոխական պարագլուխներուն... «Անոնք կ'իրացնեն Ս. զործի համար հանգանակած գումարները»...

Գաղտնասուքն էր զար «Մշակ» թերթի խմբագրութենէն (Արծրունին մեռած էր արդէն)։ Ձայնը կը հասնի Զաւարեանի ականջին։ «Աշխարհիկ սուրբը» կ'ենայ կատաղութենէն եւ առանց երկար ու քաբակ մտածելու, կ'առնէ ատրնամակը ու կ'երթայ վերայիշեալ թերթի խմբագրատունը, կ'արձանանայ ամբաստանող ու շանթահարուած խմբագրին առջեւ.

— «Յե՛տ վերցուցէ՛ք ձեր մեղադրանքը, ապա թէ ոչ»...

Գաշնակցութեան առաջնորդը ոչ միայն կուսակցութեան գրամներ իւրացնող չէր, այլև յար եւ միշտ իմէր շարքերուն կը քառագէր ծայրայեղ խնայողութիւն այդ դրամներու մկատմամբ։



Մ. Վ.

ԵՋԱԿԻ ԱՆՎԱՏԸ

Յիշում եմ, 1894-96 թուականների տանկական կոտորածներէց յետոյ էր։ Գործիչներից շատերը սարսափահար ետ քաշուեցին. ոմանք պարփակուեցին իրենց մեզ անձնական կեանքի խեցիներէ մէջ, ոմանք էլ փայտեց զուրս՝ ազգային գործունէութեան ստեմաններից եւ սուգուեցին այլ յորձանքների մէջ, հետզհետէ փոխելով մի դաւանամք միւսի վրայ։ Քչերը մնացին հաստատ իրենց տեղերում, վստահ իրենց ճշմարիտ անդրադարձում եւ այդ սակաւութիւնների մէջն էր մտնւոյն։ Փաթորկի դիմաց ամուր կանգնած էր մա տերեւարձակ, երբ շուրջը բոլոր թփերն ու մկուն ծառերը պտուկեցին գետնին կամ արմատահան եղած՝ հոգմի հետ սլացան։ Նրա անհատական ուժը կարծես օրէցօր ամբողջանում, գորեղանում, ահագնանում էր, եւ վեհասութեան սուսփիւնի մէջ նրա ձայնը հրաւիրում էր յամառ մաքառման՝ յանուն ազգային ինքնատիպ բնոյթի պահպանութեան մարդկային մեծ ընտանիքի մէջ։

Մ. Լ.



Ս. Թազեան, Մար (Մ. Տէր Մարտիրոսեան), Քրիստօֆը Միքայէլեան, Սիմոն Ջաւարեան

Ա. Զ Օ Պ Ա Ն Ե Ա Ն

ՀՈՅԱԿԱՊ ՏԵՐՎԻԾԸ

Ասաց ենք քերամ եւ յայտնի հայ գրագէտ
պ. Ա. Զօղանանի մասը, սրբաւորեալ Պարի-
զում, մեր ընկերոջ մտնուած հառաւորականի առ-
քի կազմուած սգանազէտի(°)։ Պ. Զօղանանի
խօսքերը քարգտնի են այն խորունկ համակրու-
թեամբ, որ սիրելի հաճուցեալը վաստակել էր
նայնիսկ չէզոք ա. հակառակորդ տարրերի մէջ։

«ԳՐՈՇԱԿ»

Սիրելի հայրենակիցներ,

Սիմոն Զաւարեանը, որուն վաղաժամ մահը ողբալու հա-
մար հաւաքուած էք հոս այս իրիկուն, ինծի ծանօթ էր իր գոր-
ծունէութեան ընդհանուր դժերով միայն։ Բայց ինչ որ ինծի ծա-
նօթ էր՝ կը բաւէր, որպէսզի յարգէի զինքը իբր մեր ցեղին ամէ-
նէն թանկագին ներկայացուցիչներէն մին։ Գիտէի ինչպիսի մեծ
անդ մը կը բռնէր ան մեր ազգային կեանքին մէջ՝ իբր ազգասէր
գործիչ, իբր հայոց ամէնէն հզօր յեղափոխական կազմակերպու-
թեան հիմնադիրներէն եւ զեկամարներէն մին, իբր ուսուցիչ, իբր
հայ դիւզացուցն կացութեան բարելաւմանը հոգածու, անձնուէր
ու հմուտ մասնագէտ։ Եւ ան ինծի ծանօթ էր մանաւանդ իբր այն
անզուգական Հայը, որու մասին՝ զինքը ճանչցող ամէն հայէ, ինչ
կուսակցութեան ալ պատկանէր, հիացման ու գորովի խօսքեր
միայն լսած էի։ Իր անակնկալ մահուան դոյժը ինծի ամենախո-
րին ցաւ պատճառեց, որպէս թէ հին մտերիմ մը կորոնցուցած
ըլլայի։ զգացի, դեռ իր դադադին շուրջ մեր ամբողջ ազգին կող-
մէ հսկայական կսկիծի մը պոռթկումէն իսկ առաջ, թէ հայ ժո-
ղովուրդը՝ այդ մեծահոգի գործիչին անհետացմամբ՝ արտակարգ
ուժ մը կը կորսնցնէր։ Եւ ահա ինչու պարտք համարեցայ ներկայ
ըլլալ այս հաւաքման, զոր դուք, հանգուցեալին կուսակցական
ընկերները, կազմակերպած էք իր յիշատակը յարգելու համար,
եւ իբր հայ ազգի անդամ մը՝ իմ ցաւս բերել միացնել ձեր սուգին։
Անգամ մը, մէկ անգամ մը միայն, տեսած եմ Զաւարեա-
նը։ Հինգ տարի առաջ, Պոլիս, Իւսկիւտարի նկարագեղ բարձունք-

(°) Ազատագրող կազմակերպուած էր Լ. Յ. Դաշնակցութեան Պարիզի ենթակոմի-
տէի ձեռնով, տեղի բռնեցաւ ամբողջ աշխատանքային ցաւաւորի ներկայութեամբ։ Խօսքիմ
վիկտար Բեքար, Զօղանանի եւ ընկերներ Ծանալաց եւ վարձակառն։

ներուն վրայ, ծանոթացայ իրեն, ու ժամ մը միասին ման եկանք ու խօսակցեցանք: Այդ միակ տեսակցութենէն պահած եմ խոր ու անջնջելի տպաւորութիւն մը: Իր անուանական անուշութեամբ օծւած դէմքը, իր խօսելու, վարուելու եղանակին բնական շնորհն ու եղբայրական քնքշութիւնը, իր զգալու, մտածելու կերպին ակնեղեղ անկեղծութիւնը, խաղաղ ու ներդաշնակ ջերմութիւնը՝ ըզմայեցուցին դիմ. իսկոյն ունեցայ զգայնութիւնը՝ դերժնտիւր հոգիի մը զիմացը դտնուելու: «Աւարեալ» բառը յաճախ յեղյեղուեցաւ իրեն նկատմամբ՝ իր մահուան առթիւ արտասանուած ճառերուն կամ հրատարակուած յօդուածներուն մէջ. արդ, նկատի ունենալով ամէն եսականութենէ հրաժարած, ինքզինքն ամբողջովին հանրութեան նուիրած այդ քարոզող, ոգեւորող, սփոփող, իտէալ սերմանող, մաքուր ու արի հոգիներ դարձնող Թադեոսկան ու ներշնչեալ տէրվիշի հոյակապ կեանքը, ես ո՛չ միայն իրաւացի կը դտնեմ այդ մեծ պատուանունին յատկացուիլը Զաւարեանին, այլ՝ իմ այն օրը իրեն հետ ունեցած տեսակցութենէս կրած տպաւորութեան համեմատ՝ կը մղուիմ ճշդել, եւ ըսել, թէ ան կ'ոգէր Աւետարանի առաքեալներուն մէջէն ամէնէն քաղցրը եւ ներհունը, ամէնէն երազունն ու զաշնարարբառը, վսեմ Նազովրեցւոյն ամէնէն սիրելի աշակերտը. ան ինծի կը թուի եղած ըլլալ Հայ Յեղափոխութեան սուրբ Յովհաննէսը: Հաճելի է ինծի համար իմ այդ հին տպաւորութիւնս արթնցնել այս իրիկուն եւ բերել զայն իբր իմ ալ յարգանքիս մէկ նշանը դնել մեր սղբացեալ վեհոգի հայրենակցին դամբարանին վրայ:

Այն մեծազդուորդ յուզմունքին մէջ, որով բովանդակ հայ ժողովուրդը, Զաւարեանի մահուամբ ինքզինքը հարուածած ըզգալով՝ որպէս թէ ինքն իսկ սրտէն զարնուած ըլլար, անոր դադաղին առջեւ ծունկի եկաւ ու հեկեկաց՝ ինչպէս խոցուած դառնասուզ մայրիկ մը իր անձնուէր, խնամատար մէկ զաւկին շիրիմին հանդէպ, այդ մեծաշուք յուզմունքին մէջ, ես չեմ գիտեր որո՞ւ վրայ աւելի սքանչանալ, այդ ժողովուրդի՞ն, որ այդ աստիճան խորութեամբ, միահաղունութեամբ ու վեհութեամբ գիտցաւ իր մէկ մեծ գործիչին մահը ողբալ եւ յիշատակը դափնեպսակել, թէ անհետացող Հայորդիին, որ իր հոգւոյն անխառն մաքրութեամբ, իր կեանքին զմայելի գեղեցկութեամբ կըցաւ այսպիսի յուզմունք մը ներշնչել իր մահովն աղէտաւորուած ժողովուրդին: Բայց ես կը կարծեմ, թէ այդ զանազանութիւնը, այդ ընդդիմաբերումը աւելորդ իսկ են արդէն եւ անճիշդ: Զաւարեան մը եւ հայ ժողովուրդը անհնար է անջատել իրարմէ եւ մին միւսին հետ համեմատութեան դնել: Զաւարեան ուրիշ ոչինչ էր՝ եթէ ոչ նոյն ինքն հայ ժողովուրդը՝ իր բարոյական լաւագոյն տարրերուն մէջ խտացած, համադրուած, խորհրդանկարուած: Մայրայեղ զգայնութիւն, պարզ ու խորին անկեղծութիւն, ժողովրդասիրութիւն, ազատասիրութիւն, յառաջդիմասիրութիւն, անվհատ ու անխոնջ աշխատասիրութիւն, դադափարի մը համար յօժարակամ յանձն առնուած չարաշար ու անվերջ զոհաբերութիւն, ասոնք էին Զաւարեանի յատկանիշները. եւ ասոնք չե՞ն միթէ՝ իր բազմադարեան ցաւադին ու սքանչելի պատմութեանն ընթացքին՝ հայ ցեղին

ալ՝ իր բոլոր թերութեանց մէջէն մշտապէս դուրս ցցուող, իր հոգիին տիրական դժերը կազմող յատկանիշները: Բնական էր ուրեմն, որ հայ ազգը, առանց որեւէ կուսակցական կամ դասակարգային խտրութեան, միահամուռ մօրմոքով մը ողբար կորուստը մարդու մը, որուն հետ մենէ տեւէ մէկը կրնար այս կամ այն կէտին վրայ զաղափարական անհամաձայնութիւն ունենալ, բայց որուն հայ մարդու անարուտ ու հարազատ հոգիին հանդէպ մեր ամբողջ ազգը չէր կրնար ամենախորին խանդաղատանքէ ուրիշ զգացում ունենալ:

Ողբը, սակայն, որ կը պաշարէ Զաւարեանի շիրիմը, պէտք չէ վհատութեան ձեւ զգենու: Մտածել, ինչպէս ոմանք ըսին՝ ցաւի սաստկութեան մէջ, թէ այդ մեծ անհետացեալին տեղը ոչ ոք պիտի բռնէ, մեր ազգին կենսունակութեանը մասին տարակուսիլ է: այդպիսի ներքող մը, որ, մեծցնելով հանգուցեալը, կը փոքրացնէ իր ազգը, տհաճոյ պիտի ըլլար իրեն իսկ՝ Զաւարեանին, եթէ կարող ըլլայ լսել ինչ որ այժմ կ'ըսուի իր մասին. անշուշտ, Զաւարեանի պէս գերազանց մաքրութեամբ հոգիներ հաղուագիւտ են, ո՛չ միայն մեր, այլ՝ ուրեւն ազգի մէջ: Բայց պէտք է մենք հաւատանք, թէ մեր ցեղը՝ որ դարերէ ի վեր ամբողջ շարք մը տըւած է այդպիսի անձնուէր ու վճիտ հոգիներու, նորէն կարող է տալ, եւ այժմ իսկ ան ունի իր ծոցին մէջ այնպիսիներ, որ պիտի յառաջ տանին գործը, որուն ան լծուած էր: Ողբալ Զաւարեանը, յարգել իր յիշատակը, անմոռաց պահել իր անունը, բայց չվհատիլ, հետեւիլ իր օրինակին, եւ իր գործը շարունակելով մեծարել իր անունը, այս պէտք է ըլլայ հայ երիտասարդութեան պարտքը անոր շիրիմին հանդէպ:

Կան տիպարներ, զորս գրականութիւնը կը ստեղծէ, եւ ժողովուրդները՝ հմայուած՝ այդ մտացածին տիպարները կ'իրականացնեն. այդպէս՝ Բաքոֆիի հերոսները. բայց կան ալ մարդիկ, որ իրենք իսկ՝ իրենց հոգիին բնիկ զօրութեամբ, իրենց կեանքին ինքնաբոլոր գեղեցկութեամբ, տիպարի մը բարձրութեանը կը հասնին ու ներշնչարան կը դառնան զրազէտին. այդպէս՝ մեր հին Վարդանը, կամ մեր երէկուան Աղասին, որոնց մին ներշնչեց Եղիշէն ու միւսն՝ Արուսեանը: Այս կարգի մարդոցմէն էր Զաւարեան, որուն դէմքը կոչուած է հայ քնարը ոգեւորող գիւցազներդական դէմքերէն մին դառնալ: Անոր համար, այսօր, մեր ազգին բոլոր հատուածներուն ու բոլոր հաստատութեանց հետ, Մեսրոպներուն, Խորենացիներուն, Եղիշէններուն ձեռքով հիմնուած, Մխիթարներուն, Արուսեաններուն, Ալիշաններուն շունչով վերակենդանացած ու ճոխացած Հայ Գրական Տունը եւս սգաւոր է: անոր սուգն ալ է, զոր կը համարձակիմ, իմ անձնական վշտիս հետ, բերել այս իրիկուն ձեր մեծարանքի եւ ցաւի արտայայտութեանը միացնել:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

1913



ԳԵՐՎԻՅԸ

Սիմոն Զաւարեան՝
 իր ուսանողութեան շրջանին

Եւ Զաւարեանին պէտք էր տեսնել 906-7 թուականներին, Դաշ-
 նակցութեան կրիգիսային օրերին, երբ ժամանակակից զանա-
 զան հասանքներ զարմուտ էին մաշկ կուսակցութեան, ծուա-
 տում, կրծում էին նրա սիրտը: Երբ մի կողմից Միհրանական ախ-
 տաւոր դեմոքրալիզացիան, իսկ միւս կողմից, ապաւն առած երիտա-
 սարդ դաշնակցականների հասանքը ձգտում էին պառակտել, բաժա-
 նել հայկական երկու մեծ հատուածներին՝ քաղաքական եւ սոցիա-
 լական պայքարի ուրաջութեամբ, թողնել իւրաքանչիւրը իր բանին,
 որ միեւնոյն էր քէ երկիրը անվերադարձ կորստեան մատնել: Օ՛,
 պէտք էր այդ ժամանակ տեսնել նրան, այդ կախարդ ծերունուն,
 «այդ գաղափարի գերվիշին», երբ նա տենդահար, տագնապալից,
 կովկասեան մայրաքաղաքից շնչասպառ հեւ ի հեւ թռչում էր այս
 ու այն կողմ, եւ ամէն տեղ իր խոր, էփուտաժին յափշտակութեան
 մէջ մարգարէական հաւատով դիւթում, հմայում ու գերում էր
 ամենքին, իր վայրագ ու յախում տնդով ձաղկում, խորամուտ
 միւսներին, որոնք իրենց անմտութեամբ խորտակել էին ուզում իր
 տաճարները, նա ցատման փաթարիկ էր յարուցանում, սրտատմ, —
 չկայ ուստիայ ու թուրքահայ, այլ միայն կաւ հայ, ու հայ ժողո-
 վուրդ: Եւ լաց էր լինում մանկան պէս, երբ մարդիկ իրենց անգի-
 տութեան մէջ մնում էին անյոյգ ու անզոռ: Զկայ ուստիայ եւ
 թուրքահայ:

ՇԱՀ-ԱՐՄԵՆ

9/22 Նոյեմբեր 1913



Ս. ԶԱԽԱՐԵԱՆԻ ՄԱՅՐԸ

Յոժարութեամբ կը հրատարակենք հետևեալ նա-
մակը, որով ծանօթ ձկարիչ Պ. Թէրլէմէզեանը առ
առաջարկը կը բերէ։—

«Ազատամարտ»

Անգուգական Հայը, Սիմոն Զաւարեան, չկայ այլևս։ Անոր յիշատակն անմահացնելու համար, կ'առաջարկեմ, Տարօնի մէջ *Զաւարեան* անունով գիւղատնտեսական միջնակարգ դպրոց մը բանալ՝ որպէսզի իրապէս եւ գործքով անոր սիրած հայ ժողովուրդին զգտակար ըլլանք։

Այս առաջարկը եթէ ընդունուի եւ եթէ այդ առջիւ մասնաժողով մը կազմուի՝ փոքր մը կազմելու համար, ես պատրաստ եմ կարեւոր նկար մը նուիրել այդ նպատակին։ Հետեւաբար, կ'առաջարկեմ, Սասնոյ ֆոնտը եւ պահկներու դրամը այդ գործին յատկացնել։

Փ. ԹԵՐԼԷՄԷԶԵԱՆ

15 Հոկտեմբեր 1913, Կ. Պոլիս
16/29 Հոկտեմբեր 1913

Այնուհետև յոտնկայս կարգացուցցաւ «Հորիզոն»-ի մէջ
Հրատարակուած Զաւարեանի մօր նամակը:

Դրութեան ոճը եւ մտածելակերպը բոլոր ընկերները
մագնիսացուց ու յուզեց:

Նամակի ընթերցումէն վերջը, բարոյական պարտաւո-
րութիւն մը զգացուցցաւ հետագիւր մը ուղղել սարաքախտ
մօրը, հետեւեալ բովանդակութեամբ.

«Պաշտելի Սիմոնի մայրիկիմ: Դառն արցունքներով կար-
դացիմք գրածդ: Վիզէնը կրթէ Սիմոնի հագինով, մեր կսկիծը
կը միացնենք քու մայրական ցաւիդ:

«Մեմք կը խոնարհիմք այս րօպէիս իւր սուրբ անխնե-
րում աղջիկ եւ մեր յարգանքը կ'ազարկենք Սիմոնի մայրի-
կիմ ու պարագաներուն»:

(Տրապիզոն, 25 Հոկտեմբեր)

ՋԱԽԱՐԵԱՆԻ ՄՕՐ ԲԱՂՋԱՆՔԸ

Նամակ խմբագրութեան

Ազիզ Սիմէոնիս ժահուան այս սեւ օրերին, ինչպէս լը-
սում եմ, նրա ընկերների որոշ շրջանում միտք է յղացել ընդ-
հանուր հանգանակութեամբ կազմել նրա որդու ուսման ա-
պահովութեան մի ֆոնդ, եւ այդ նպատակով նորիսի ժողո-
վավարութիւն է եղել ժրենելի հայ դպրութեամբ:

Բարձր դեհանտելով այդ ձեռնարկութեան հեղինակնե-
րի զրդումները՝ յաւերժացնելու յանձին փոքրիկ Վիզէնի իմ
որդու յիշատակը, ինդրում եմ ի միամտութիւն հայ հասա-
րակութեան յայտարարել, որ իմ որդուս ժառանգը այդ կող-
մից միանգամայն ապահովուած է եւ բոլորովին ազատ հայ
ժողովրդի հաւաքական հոգատարութեան անհրաժեշտութիւ-
նից:

Հայ ժողովրդին մարտիրոսագրուած իմ գուակիս յիշա-
տակը յաւերժացնելու համար, ինդրում եմ նրա բոլոր ըն-
կերներին հասարակական միջոցները ուղղել որեւէ հանրօ-
գուտ մի դործի եւ մասնաւորապէս հայի կուլտուրական ա-
զատագրման խնդրին, որի անձնագործ ծառայութեան համար
Սիմէոնս զեռ մանկութեան հասակից ստացել էր իր դժբախտ
մօր օրհնութիւնը:

Հիմնելով Լօտուայ շրջանի հայ մանուկների համար նրա
ծննդավայր Այդեհատ գիւղում մի ստորին գիւղատնտեսա-
կան դպրոց, նրա ընկերները կը կարողանային մի մնայուն
կոթող կանգնել մի վայրում, որտեղ առաջին անգամ վառ-
ւեց իմ մատաղ Սիմէոնիս սրտում հանուր հայութեան այն
սէրը, որ եւ այդքան վաղաժամ այրեց նրա երկրային կեան-
քը:

Այդ նպատակի համար սրա հետ ուղարկում եմ 100
աւուրի:

ՍՈՖԻԱ ՋԱԽԱՐԵԱՆ

24 Հոկտեմբեր/6 Նոյեմբեր 1913

— Ո՛ւր էիք, խեղճե՛ր, ո՛ւր՝ երբ Հրապաններուն Սուրբ բերի հոս, հրապաններուն տուրք մա՛րդը...

Որպէ՛սդիւ պատկառանք մը ապրին, շնչեն, բայց նաեւ գուարճանան ու նաեւ համ անեն, շուրջիները գրեթէ միաժան՝

— Է՛, բերի՛ր, հասկցա՛նք, ո՛վ չէր բերեր:

— Ով չէր բերե՛ր...

Ու բռն, եռացո՛ղ նայուածքի մը մէջ ընդգրկելով ներկաները.

— Ով չէր բերե՛ր...

Պիտի պայթէր: Զայայթելու համար՝

— Վրթանէ՛ք չբերաւ. ըսե՛լ տուիք. Վրթանէ՛ք:

— Կ'ըսես, գիւրին է, մի՛շտ Վրթանէ՛ք:

— Հարկաւ, Մուսո՛, հարկաւ Վրթանէ՛ք. այդպէս ամօթ բան կ'ըլլա՛յ, պատահած էր սա գիւղերուն մէջ. գէշ մարդ չատ, բայց ալ գէշա՛ն:

— Գալօ՛, ես Մուսոն եմ, ջողացպան Մուսոն, ամէն ինչի մասըր եւ մաքուրը կը սիրեմ. ամէն բան ինծի համար ալիւրի պէս մանր, մաքուր, ճերմակ պէտք է ըլլա՛յ. այդ Սուրբ Մարդու պատմութիւնդ քիչ մը խոշոր կու գայ ինծի, քիչ մըն ալ բու կողմէդ. սեւով-մեւով խառնուած: Կ'ուզես այդ պատմութեան ցորենը ըլլալ եւ Վրթանէ՛ն ալ որո՞մը ընել:

Նման միջամտութիւնէ մը, ջողացպան Մուսոյի մը կամ ուրիշ կատակարարի մը կողմէ եղած, ներկաները սրու գոհունակութիւն մը կը գլխային. գիտէին, թէ վերապահութիւն յայտնող այդ միջամտութիւնները լաւագոյն գրգռելներն էին Գալուստին համար, որպէսդիւ ան իր պատմութիւնը նորէն ու առաւել տաք շնչոով մը պատմէ: Ձէին խաբուեր բնաւ իրենց հետաքրքիր սպասումին մէջ: Օրինակի համար, ըսած էր, կ'ըսէր նման առիթով մը.

— Մուսո՛, գուն գնա ալիւր աղա. քոս խելքդ ցորենի, ջուրի եւ կլոր քարերու կը հասնի, քեզի՞ մնաց ինծի չհաւատալ. ցորեն, որոմ, ես չեմ գիտեր. արեւի պէս յատակ բան էր այդ պատահածը:

— Ի՛նչ պատահածը. ըսէ՛, բայց լաւ

պիտի ըսես, ալիւրի պէս մանր, մաքուր:

— Ի՛նչ մանր. ես մանր բան չունիմ. խոշոր-խոշոր ըսեմ ձեզի եղածը. ինչ որ խոշոր է՝ ան արդէն մաքուր կ'ըլլայ:

Ու շունչ մը առնելով ու մասամբ խաղաղած՝

— Ուրեմն այս անգամ աւելի կարճ:

Անտիոք էինք, Նախ Վրթանէս տեսեր էր դինք կամուրջին քով: Նայեր է՝ մարդը ունի տեսակ մը շալուար, գրաւաք, ակնոց: Մեր լերան կողմը ցոյց տալով ըսեր է Վրթանէսին. — Ճէպէլ-Մուսա՛. Վրթանէսը պատասխաներ է՝ Եվէք Էֆէնտիւ: Մարդը ցոյց տուեր է ջորին, յետոյ գինք, Վրթանէսը, յետոյ ինքզինքը, նայեր է գէպի յետ, ըսեր է՝ խալլաք գարդաշ: Յուսածատը տնկած՝ պիտ սարը, պատասխաներ է մեր էջը: Ըսեր է մարդը՝ սէն Էրմէնի՞. մեր է՛ք, դարձեալ ու դարձեալ մեր է՛ք: Գլուխը չարժեր է, ճէ՛, է՛ք ըրեր է. մարդը ասոր վրայ շրթունքը խածեր է, ակնոստալու պէս գլուխը չարժեր է, կարծես պիտի լայ եղեր, գիպամա՛ ըսեր է: Յետոյ քայլեր է գէպի դուրս, գէպի ստիներուն տակ: Եկաւ Վրթանէս գարի ծախող Մահմուտ ազալին քով, եղածը պատմեց ինծի: Կամ Ծրընկ էր ըսաւ, կամ Կովկասի մարդ, թերեւս ալ հայ. բարա՛կուկ մարդ մը, քիչ մըն ալ կարճ. ինչ ըրի չըրի՞ դեղին մը չտուաւ, որ գինք մեր լեռը տանիմ. ասանկ բախտին... Հարիւր տարին աստղ մը կը ծագի, գրեթէ մը մեր կողմը կու գայ, օգտուած չանինք. աշխարհի մէջ Ձէթ-Առաքել պիտի ըլլաս, որ լախող լաւ ըլլայ, որ աքլորդ ալ հակիթ անէ, որ եղդ ալ ճնանի ու կաթ տայ, մէկ արորացիի մը երեսէն մարդ եղաւ: Ի՛նչ դի՛ն մը, Գալո՛ւստ. կարծեմ մարդը մեր լեռը հինգ վայրկեանի անց կը կարծէ. այդ կողմը քալեց. հասնինք. համոզենք, քիչ մը պակաս ալ տայ՝ վնաս չունի. ըսենք իրեն՝ մեր լեռը լատ հեռու է, ըսենք՝ ճամբաները գէշ են, մութ կ'ըլլայ, նայիս անձրեւ կու գայ: Թուրք աւազակներու կը հանդիպինք, ըսինք՝ եւ մարդէն մեծ բան մը փրցենք, քիչիկ մը խերը տեսնենք ու Անտիոքի ճամբայ ըսուած Պըրմին. կամ Ծրընկ է, կամ Կովկասի մարդ, թերեւս ալ հայ. ըսաւ՝ սէն էրմէ-

նի՞, լաւ որ չէ՞ք ըրի։

— Տղա՛ք, ուզէ՛ք Հաւատացէ՛ք, ուզէ՛ք մի՛ Հաւատաք. երբ Վրթանէս կը պատմէր սիրտս ուրկէ՛ ուր տխուր բան մը դպաւ. նեղուեցայ. երթալով նեղութիւնս շատացաւ։ Չտանի՞նք, Հարցուց Վրթանէս։ Քեզի սա խանին մէջ պիտի խեղդեմ, է՛լ, Ըսի, ո՛ւր իջեցուցեր ես Հայ անունը. ես զայն կը տանիմ, գրուշ մըն ալ չեմ առնիր։ Ահագին բոռ ունէի դիւզ տանելու, Հառի. շուտ՝ Անտիոքէն դուրս։ Քիչ էի զայլած. Հառայ։ Ծ'լ սա ջորիին վրայ, Ըսի. մատը վեր վերցուց օտ'րը, բաւա։ Դէ՛մքը, տղա՛ք, դէ՛մքը տեսնէիք։ Ըսի՛ Հոս Հայ՝ կայ։ Աօսքէս տեսակ մը եղաւ, է՛ս ալ տեսակ մը եղայ։ Գայեցինք։ Ո՛չ ան խօսեցաւ, ոչ ալ ես, բայց կտրծեմ միլիոն, միլիոն, ճիկիլիոն Հայերու Հետ միասին կը քալէինք, կ'երթայինք դէպի դիւզ. կը նայէի շուրջըս, մարդ չկար, ես եւ ինք էինք, բայց ինծի աչակէս կու գար, որ բոլոր Հայերը զովս ես, ու կը քայինք, կ'երթանք այդ մարդուն հետէն մեր գիւղը, դէպի մեր լեռը։ Մտածեցինք նոյնիսկ թէ այդ նեղ ճամբայէն ինչպէ՞ս բոլոր Հայերը պիտի կրնան անցնիլ, ինչո՞ւ դէպի մեր գիւղերը կ'երթան, ի՞նչ պիտի ընեն այդ լեռան վրայ։ Ուրեմն այլեւս այս ճամբան լայն պէտք է ըլլայ։ Որչա՛փ շուտ Հայ, որչա՛փ կտրի՛ն Հայ, Աստուած, մենք չենք մեռնիր. ահա մեռածներն ալ ողջ են, կտրին են, կը քային այս տեսակ մը Հայուն հետէն։ Դէպի վեր զայցող այս գեղեցիկ թափօրին ճամբան լայն ըրէ՛, լա՛յն, ա՛լ մեղի չեն բաւեր սա նեղ ճամբաները. քանի մը ջորիի եւ ջորեպանի ճամբայ մեզի չի՛ բաւեր. տեսակ մը Հայու եւ Հայերու հետեւ բոլոր Հայերը կ'երթան եւ սա նոնց հետէն ալ ըու. Հրեշտակներդ կու գան. մեր ճամբան լա՛յն ըրէ՛. . .

Պատմութենէն ու այս խօսքերէն ետք, ինքն իր աչքին տեսիլի եւս կարեւորութիւն առած՝

— Այդ Մա՛րդը...։ Աստուած մը եղաւ յետոյ անիկա։ Ազգին տառապանքը մեղացեցր է զինք Ստամպուլի մէջ, ձեզի ինչպէ՛ս ըսեմ ես. դուք Հիմա մա՛րդ էք, բա՛ն գիտէք, ազգի դործէ՞ կը Հասկնաք. իմ ջորիս ձեռքէ աւելի բան գիտէ։ Կարծես

գիտցու ինչ տեսակ Հայու խելք, Հայու հոգի նստած է վրան. անուշ-անուշ քալեց։ Այդ տեսակ բախտ երկու անգամ չի պատահիր. ես ու ջորիս Հայութեան արիւնն ու Հաքարը կը տանէինք մեր գիւղերուն։ Ի՞նչ ապրո՞ղ արիւն, ի՞նչ անուշ Հաքար...։

Կը լուէր պահ մը, կը նայէր երկինք՝ կիսատուածի դիրքով մը, տրամադրութեամբ մը։ Ըսած խօսքերէն ետք, կը մանրանային գիմացիները աչքին, կ'ըլլային մատ մը մարդիկ. — վախկտա, անխելք, Հի՛ն։ Կ'ըլլային խեղճուկրակ թուրեմներ, պզտիկ-պզտիկ Վրթանէսներ, պզտիկ-պզտիկ Զէթ-Առաքելներ, դրամ սիրող, սուտ խօսող, իրարու խելք ծախող։ Կը պզտիկնար նոյնիսկ մուխթարը, երէցփոխը, տէրտէրը։ Կը պզտիկնար ընդարձակ Հորեզներով ամբողջ գիւղը։

— Կարեւորը միւսպէ՛մ չէ, պետք չէ. այնքան պիտ կայ սա գիւղերուն մէջ, այնքան պիտ. բայց ո՛ր պիտը կրնայ ըսիլ ես այսինչ կտրծի՛ն պիտն եմ։

Ուրիշ առիթով մը, երբ նորէն գիւղն ու գիւղացիները պզտիկ եկան իր բարձր տրամադրութեան.

— Այստեղի Հա՞յը. — կնիկին վրայ գոռոզութիւն ծախող պիտ մը տունին մէջ, իսկ դուրսը՝ աղայի մը խելօք ծառան է եւ թուրքին Հեա զմաննէ՛ք բող մը։ Եկեղեցի երթալ, Ծառ Խամայիլի հեքիաթ մը. տիկ ընել, եւ Նարինջ ու Նոր-ալխարհ գողնալ։ Եղա՛ւ. թուրքին Հեա չի մանաւիր, մէկ Հատիկ ծառայ եւ մէկ Հատիկ գող իսկ պէտք չէ մտնէ Հոս։

Վերջն ալ.

— Դուք այն մարդը չտեսաք. տեսան անոր Աստծո՛յ պէս դէմքը քանի մը մարդիկ եւ կամաց-կամաց սրբանալով՝ տնոնք ալ մեռան։ Է՛յ, սո՛ւրբ Աւարեան, թող ջորեպան Գալուստ անունիդ մեռնի, ան բերաւ քեզ այս լեռներուն մէջ։ Մեծ Գալուստին վրայ այն ի՞նչ լոյս էր, երբ դուն, ես ու ջորիս անցանք մէջէն։ Նորէն, ծայր չունեցող ծիրանի գօտիի պէս լոյս մը՝ երբ թովմաս Առաքելի վանքին ջովէն անցանք, չըսի՞ մաքն, է՛լ, թովմասու՛նկ առաքեալս, ե՛լ աչքովդ տես, չօշափէ՛ ա՛յս Յիսուսն ալ, Հայաստանի Յիսուսը, եւ անգամ մըն ալ երբ վանք չի-

նեն քու անունիդ՝ չձգես որ փլցնեն։ Ձխտեցար, Ձաւարեան, բայց սիրտս չէ՞ր ըսեր, թէ դուն մեծ Հայ մըն ես։ այս Գալուստին բախտը, կաշին, միւսը միայն ըրեպան էր, բայց հողին ալ, դուն անտակ մը չեղար՝ երբ ես «Հոս հայ կայ» ըսի։ սրտիս համար բաւեց ատիկա։ Թող Ստամբուլի մէջ թողախտի հոնա անձրեւէ, բորոտութիւն եւ քօլերա անձրեւէ։ դուն հոն մեռնելու չէի՛ր։ անդդ Հրացաններու Երկիր Հայաստանն էր։

Այսպէս էր։ Կը զգար թէ եւ, որ չըլանի Հայտնութեան վերաբերմամբ իր բացասական արտայայտութիւնները միշտ չափազանցուած եւ մերթ ալ անտեղի էին, բայց եւ այնպէս տեղի չէր սար իր արտայայտութիւններուն մէջ, վասնզի իրապէս չըբեղ, զերպանծ արամադրութիւն մը կը ստեղծուէր մէջը Ձաւարեանը յիշելով։ արամադրութիւն մը՝ որ կը լուծէր իր մէջ կարգ մը ուրիշ մեծութիւններ, չսեռնելով նոյն աստեղ շրջապատի դրական ընթացիկ երեւոյթները։ Ձաւարեանով կը

հերքուէին իր մէջ ժողովուրդի մը անփութական առաքինութիւնները եւ իրենց տեղը կը զիջէին տեսիլքի եւ դրդողին ապրումներուն։

Գալուստին բովանդակ փառքն էր Ձաւարեան, Գալուստին Հայոց պատմութիւնը, Գալուստին «Հրացաններու Երկիր Հայաստանը»։ Անով՝ կար իրեն համար երկիր մը, դէպի հիւսիս, իրենց դիւղին դէպի լեւան կողմը։ Իսկէնտերուէն անդին, անդին։ Երկիր մը՝ նախ մաքուր, հայելիի՛ պէս մաքուր։ յետոյ՝ բարձր, ընդարձակ, դժբախտ։ Ամէն կողմ խաչ, ուխտաւորներ, արիւն։ Մտած էին այնտեղ Ձաւարեանենց ընտանիքին մարդիկը, ընտանիքին հրացան, ու տոճիկներուն դէմ կ'ընէին կռիւ, չփերջացող կռիւ մը։ կային այդ երկրի մէջ այլեւս հօկայ մարդիկ, արիւնով ներկուած ժայռեր, դիւղեր, թուփ ու ճամբայ։ կար խմբապետ Անդրանիկ, Գեորգ Ձաւուշ եւ բարձրութիւն, եւ ծուխ...:

(Հատում)

ԵՂՈՒԱՐԴ ԳՕԶԱՃԵԱՆ

Ուսանող Դաւիթխանեան գեղեցիկ ու ազդու առողջամտութեամբ արտասանեց Ա. Իսահակեանի «Ողբում եմ» արձակ քերթումը...

«Իսկ կուսակցական ընկերներու դառնալով՝ կ'ըսեմ — Պա՛հ մը խոնարհենք մեր ազաւոր զփութները անգին ընկերով տնիւնին առջեւ, բայց չփշտանք։ Ինքը, մեր անժոռտալի Սիմոնը, չէր գիտեր, թէ ի՞նչ է վատութիւնը, ու մեր վատութիւնը ամէնէն մեծ նախատինքը կ'ըլլար անոր տակաւին խոնաւ շիրիմին։ Ուրեմն թող մէկ լայ մեր ուխտը այդ շիրիմին առջեւ՝ աւելի սեղմել մեր շարքերը ու աննկուն կերպով շարունակել Սիմոնի դործը։ Թող մէկ բացազան՝ չութեան մէջ ամփոփուին մեր ամէնու զգացումներն ու իղձերը՝ «Սիմոնը մեռաւ՝ կեցցէ Դաւիթխանութիւնը»։

Ուսանող Դաւիթխանեան գեղեցիկ ու ազդու առողջամտութեամբ արտասանեց Ա. Իսահակեանի «Ողբում եմ» արձակ քերթումը, որմէ ետք Հ. Տէր Օհանեան փակեց սաՀանդէսը։

ԸՆԿԵՐ

Էջ 271-272

Բ Ժ . Ե Ր . Խ Ա Թ Ա Ն Ա Ս Ե Ա Ն

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ



Ս. Զաւարեան՝ զտղին հետ

Գահիրէում այժմ ապրում է իր արեփառ ծերութեամբ մէջ տիկին Ֆաւիկ Դուրեանը, Պետրոս Դուրեանի եւ Նզիշէ պատրիարքի երէց եղբոր՝ համգուցեալ Ագրիպասի շնորհալի կիներ։ Խոր յուզումով ինձ պատմեց հետեւեալը Սիմոն Զաւարեանի մասին։

«Նզիշէ պատրիարք Դուրեանի հրաժարումէն յետոյ, բազմաթիւ համըռն զործիներ, հաւ գրեցներ ու ակամաւոր հայ ազգայիններ ամէն օր այցելու գային մեր տունը, յար կը բնակէր Նզիշէ պատրիարքը։ Օր մը պատրիարքը կանչեց զես ու խօսիւ պատուէր տուաւ։

«— Ֆաւիկ, չեմ կարող տուալ այս անընդհատ ու անդադրում այցելում։ Այլեւս չեմ կարող ունէ մարդ բնառնիլ։ Այնպէս կարգադրէ, որ այցելումներս հետագանս։ Զեմ գիտեր, թէ ինչպէ՞ս պիտի վարես այս դժուարին զործը, այդ կը թաղում քո ժողովարարեան ու հնարամտութեամբ։ Յոգնած եմ, հանգիստի ու խաղաղութեան կարօտ եմ։ Գէթ օր մը կ'ուզեմ միմաի մնալ սեմեակիս մէջ։

«Ազգային երեսփոխաններ ու երեսիլի հայ անձնատուութիւններ մէկը միւսի նստէին եւ զայիմ պատրիարք տնոնչու։ Ամէն մէկուն համար անուշ խօսք մը, յարմար պատրասել մը, համոզիւն պատճառաբանութիւն մը կը գտնէին ու բոլորն ալ համբուր կը դնէին։

«Մէկ ալ տեսայ Ս. Զաւարեանը, որ բակն էր մօտը եւ յուշիկ ու փոքրիկ քալիքով կը յատաբանար դէպի տուն։ Լաւ ժիւղէի, որ պատրիարքին ամէնէն սիրելի ու մտերիմ բառեկալն էր։ Անմիջապէս որ զիս նշմարեց, իր խնամ ու յուրջ դէմքը լուսաւորուեցաւ անուշ ու յանկուցիչ ժախտով մը։ Միտաւ սկըսաւ խօսքէն սրտիկը։ Ինչպէ՞ս կարող էի վանել այս հեղաշարժող մարդը, որուն հանդէպ պատրիարքը անչափ սէր ու խոր ակնածանք ունէր։ Ուժերս

հաւաքեցիք եւ յայտնեցի, որ պատրիարքը տունը չէ: Ջաւարեան իր սիրալիր յարգանքները հազարդեց եւ դիւրաշարժ փութկոտութեամբ մեկնեցաւ դէպի Ելէի դուռը:

«Մեծ եղաւ զարմանքս ու ալշուրիւնս, երբ լսեցի պատրիարքին ձայնը, որ պատուհանէն կը կանչէր. «Պրս. Ջաւարեան, պրն. Ջաւարեան»:

«Երբ նկատեցի, որ Ջաւարեանը կը վերադառնար՝ պատրիարքին մօտ երթալու համար, ամօքէս անհետացայ տան մէջ: Այս անակնկալ նուաշուրջումը հոգիս վառեց եւ աններելի արտաք մը սեպեցի իմ արժանապատուութեան հանդէպ:

«Կէտորումն նաշին քանացի ամէն կերպով — շարժաւճեալ, դիւայեղ-դուքեամբ, վերաբերումով — իմ դժգոհութիւնը արտայայտել: Անգամակից եղայ լուռ ու անխօս, յօնքերս կիտեցի ու ցոյց տուի, որ դժգոհ մնացեր եմ:

«Պատրիարքը կռահեց դժգոհութիւնս: Ինծի նայեցաւ ու քեթեւ ժմծիծաղով հասկացաւ, որ գանգատիւմ իրեն: Իր հարցումներուն կը պատասխանէի կարմ ու ցուրտ բառերով: Փաղ էր մթնոլորտը եւ յարաբերութիւնները շատ ձեւակամ:

«Վերջապէս խղեց լռութիւնը ու հարց տուաւ ինծի.

«— Ֆուլի՛կ, ի՞նչ է պատահել բեգի, որ այսօր անտրամադիր կ'երևիս:

«— Աւելի ի՞նչ կ'ուզէիք որ պատահէր, սրբազան: Պրն. Ս. Ջաւարեանին անդէս խայտառակ ըրիր զիս:

«— Ի՞նչ ըրի, որ այդքան սրդողած ես:

«— Սրբազան, չըսի՛ք. «այսօր մարդ չեմ ուզեր որ ինծի այցելէ»: Ես ալ սուտ խօսեցայ ու խաբեցի պրն. Ջաւարեանը, քէ դուն տունը չես:

«— Այո՛, Ֆուլիկ, ես ըսի, որ մարդ չեմ ուզեր, որ ինծի գայ: Բայց դուն չէի՞ր զիտեր, որ պրն. Ջաւարեանը մարդ չէ, հրեշտակ է»:

ԲԺ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԻԱՆ

Հոգիի սեւեռեցումը մը, որուն տնուն չենք կրնար գտնել, հրապարակ նետուեցաւ զարշնչի սուտ մը, — Ջաւարեանի միտեր է անթոթութենէ, իր ընկերներուն անբարեացակամութեան հետեւանքով:

Այս անհեթեթ միտքը՝ Թիֆլիսի «Մշակ» թերթին մէջ, Մենք լանացինք լուռ մնալ, շուգիւնով երբեք յարգուած ու սիրելի ընկերոջ մը գեւեղ զոհողութեամբ գերեզմանին վրայ այս աստիճան հրէշալի տըգեղութեան մը շուրջ վիճապաշար մղել, — միեւնոյն ատեն համոզուած, թէ երեւոյթները բարեխղճութեամբ քննելու եւ դատելու ընդունակութիւն ունեցողները իրենց բոլոր գործով պիտի լմբոստանային արդէն այդպիսի վատթար զրպարտութեան մը դէմ:

Արդարեւ, այդպէս ալ եղաւ: Առաջին գնահատումը բերաւ Եգիպտոսի «Յուսաբեր» թերթը. Պ. Ս. Պարթեւեանի ստորագրութեամբ, «Մի՛ պղծէ՛ գերեզմանները» խորագրին տակ զայլոյթի եւ աղքիւ սրտմտութեան հուժկու շեշտով մը:

Երկրորդը երեւցաւ «Բիւզանդիան»ի նախորդ օրուան համարով, «Գերագոյն հարցը» խորագրին տակ, եւ գրուած Պ. Ա. Ձօպանեանի կողմէ:

Այս երկու գրութիւններն ալ, ուղղուած յերեւանքը զարբնողին ու զայն հիւրընկալող թերթին դէմ, բաւական են մեր հոգեկան վիշտը մեղմացնելու:

14-27 Դեկտեմբեր 1913

ԱՏՈՄ

ՏԻՂԱՐ - ՄԱՐԴԸ

Աշխատանքի շատրուն վրայ, դասախոսություններ մը դարձին ու հեռի հեռ ժողովի մը գացած ատեն, Թափսիմ, Աշխատանքի Տան դրան տուչեւ, ինկաւ Սիւնն Ջաւարեան:

Մանր յանկարծ, հո'ն, փողոցին մէջ, զինքը կեցուց եւ քերես փափառաց անոր ակամբն ի վար:

— Ո՛ր կ'երթաս, ի՞նչ կ'ընես, որո՞ւ համար կը յագնիս, կը տուայտիս, ի՞նչ նպատակի ետեւէ վազն ի վազ կ'երթաս այսպէս շնչասպառ: Անա՛ քանքինից տարի է, որ անդադրում կը քափառիս քաղէ քաղ, քաղաքէ քաղաք, երկիրէ երկիր, կը գրես, կը գործես, կը խօսիս ու տակաւին չհասկըցա՞ր ճիշդն ընդունայնութիւնը, խտալին կեղծիքը, ամենայնի դատարկութիւնը... մեղք ես, ա՛լ եկուր, որ քեզ հանգչեցնեմ անշարժութեան, անգագայութեան խաղաղ երանութեանը մէջ:

Եւ Ջաւարեան, որ համակ կեանք, շարժում եւ զգացում էր, խաբարեցաւ այդ փորձիչ, ռոպիչ ձայնէն ու ինկաւ գետին, ա՛լ գլուխը վեր չտռնելու համար:

Առաջին անգամ զինքը ճանչցած էի 12-13 տարի առաջ, Երեւան, յետոյ տեղափոխուելէ ետեւ յետոյ՝ Պոլիս: Եւ ամէն անգամ, որ առիթ կ'ունենայի հետը խօսելու կամ իր բանախօսութիւններուն ունկնդրելու, վերագոյն մտադու մը տղաւորութիւնը կը քողուր վրաս, — լուսագոյն է ըսել վերագոյն հոգիի մը, որովհետեւ ֆիզիքական, մարմնեղէն մարդը շա՛տ պըգտիկ էր Ջաւարեանի մէջ, եւ երբ խօսէր իր սիրական խտալներուն վրայ, ներշնչուածի, տեսանողի իր պարզ ու գերազուցելի պերճախօսութեամբը, այն ատեն մարմնեղէն Ջաւարեանը գրեթէ աննշմար էր դառնար ու կը տեսնէր միայն հոգին ու կը լռէր միայն ձայնը:

Այդ ձայնը, քանքինից տարի շարունակ, քարքառեցաւ ցիր ու ցան Հայութեան, միշտ անկեղծ, միշտ անվերապահ ու միշտ հաւատալի, քարճր ու գեղեցիկ գաղափարներ տարածելու համար՝ առանց փառքի, առանց շահու անկալութեան:

Ու հիմա, որ այդ ձայնը կը լռէ ի ռոպա, ամբողջ Հայութիւնն է, որ կ'արտատուէ, որովհետեւ Ջաւարեան Գաշնակցական տեղի՝ Հայ մըն էր եւ Հայէ մը տեղի՝ Մարդ մը, մին այն Տիպար-Մարդերէն, որ բնութիւնը երբեմն կը ստեղծէ, իբրեւ օրինակ ծառայելու համար մեզի եւ որոնցմէ, ամառա՛ս, չեմք կրնար օգտուիլ յաճախ:

Յարգա՛նք իր պնծելի յիշատակին, յարգանք իր մաքուր ու անապական Հոգիին:

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

«Ազատամարտ», 2 Նոյեմբեր 1913

digitised by A.R.A.R.@

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐԵԱՆ



Հագին գուարք խանդավառութեան մը մէջ՝ հայ ժողովուրդը իր մտաւորական մեծ սօնը կատարած էր, եւ ահա անողոք ու թախանձոտ Հակատագիրը շատ տեսաւ մեր ուրախութիւնը եւ գայն ռուզի փոխեց, մենէ յանկարծ յափշտակելով հայ մտաւորական ամէնէն սխրալի ու հայակապ ներկայացուցիչներէն մէկը, Սիմոն Զաւարեանը:

Այս անանկնկալ մահը միմիայն կուսակցութեան մը չի հարուածեր, այլ՝ բովանդակ խորհող ու մտածող հայութեանը: Սիմոն Զաւարեան Դաշնակցական գործիչ մը ըլլալէ աւելի՝ պայծառ ու անապակ իտէալի մարդն էր, անձնուէր, անկեղծ, անշահախնդիր:

Դազախարի անխոնջ սերմնացան՝ ամբողջ բաւոյն տարի քափառեցաւ տարադնաւած հայութեան մէջ, այսօր ժըննի, վազը Մուշ կամ Սասուն, միւսօր Եգիպտոս, Կովկաս կամ Պոլիս, խօսելով, գրելով, գործելով, առաջնալի մը հաւատով, մարտիրոսի մը անձնուրացութեամբ:

Իր մահուր ու անքիծ հագին ռուէ հպումէ չաղարտեցաւ, ընդհակառակը՝ մահբազործող ուժ մը հղաւ ու իր ներքին հուրքը կըցաւ ուրիշներն ալ վառել իտէալական տեսիլներով, ասոր համար իր հեղինակութիւնը անսահման էր ո՛չ թէ միայն Դաշնակցականներուն՝ այլ գիւնէր ճանչցող բոլոր մտաւորականներուն վրայ:

Անոնք ճոյնիսկ որ անհաշտ հակառակորդներ էին Դաշնակցութեան՝ կ'ակնածէին Սիմոն Զաւարեանէն, կը յարգէին ու կը սիրէին գիւնէր:

Իր վաղախոս մահուան առթիւ ամէն կողմէ արտայայտուած վիշտն ու կսկիծը ցուց կու տան, թէ այդ անմահ Հայը որքա՛ն ճոյնացած ու խմորւած էր իր ամբողջ ցեղին հետ:

Արցունքով ու յարգական խորին յաւգումով ծաւըր կու գամք իբ գագաղինն առջեւ:

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

«Մանանայ», հրդիւթական շաբաթաթերթ, 1914, Գորիս

digitised by A.R.A.R.@

ԸՆԿ. ԶԱՒԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԸ

Ե. Գ. Ի ՊՏՆՈՍԻ ՄԷՋ

Ընկ. Զաւարեանի յիշատակին ձօնուած քերթուած մը արտասանած է Արսէն Երկաթ:
Միերան Հ. Ամտէրեան Սահմ. Ռամկավար ակումբին կողմէ արտասանած է զգացում արձակ քերթուած մը...

Ընկ. Զաւարեանի մահը անխառն վշտով համակած է ամբողջ եգիպտահայ գաղութը: Բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ քաջուած են Պոլիս: Ինքնապաշտպանութեան եգիպտոսի Միջկուսակցական Խառն Մարմինը հետեւեալ կերպով արտայայտած է իր զգացումները.

«Ենթադաշտպանութեան եգիպտոսի Միջկուսակցական Խառն Մարմինը՝ մերականգնումի գործին մէջ գործաւորին անակնկալ կորուստէն խորապէս զգացուած՝ կը բաժնէ հայ մտաւորական երիտասարդութեան ոռոգը, իր սրտազին ցաւակցութիւնը կը յայտնէ Դաշնակցութեան եւ կը խնդրէ իր կողմէն պսակ դնել Զաւարեանի դազադին վրայ»:

Նոյեմբեր 2ին Գահիրէի Աստուածածին եկեղեցիի շրջափակին մէջ Միջկուսակցական Խառն Մարմնի նախաձեռնութեամբ սգահանդէս մը սարքուեցաւ խառն բաղութեան մը ներկայութեամբ: Մաղկեպսակներ բերած էին Հ. Յ. Գ. Ենթակոմիտէն, Հնչակեան Մասնաճիւղը եւ Միջկ. Խառն Մարմինը: Նախագահած է Ա. Ք. Շաղոյեան: Ընկ. Զաւարեանի յիշատակին ձօնուած քերթուած մը արտասանած է Արսէն Երկաթ: Ապա խօսած է Հնչ. Մասնաճիւղին կողմէ Արթուր Եսսրեան՝ խորին ցաւակցութիւն յայտնելով Դաշնակցական բնկերներուն եւ դրուատելով Զաւարեանի կեանքն ու գործը: Միւսին Հ. Ամտէրեան Սահմ. Ռամկավար ակումբին կողմէ արտասանած է զգացում արձակ քերթուած մը, որ կը վերջանար այս տողերով.

— «Զաւարեան մեռա՛ւ...

«Եւ իր ճակատագրին դէմ ուզատմբող մեր հայ հոգիներու թափօրը կը յառաջանայ շարունակ՝ փայլատակող երկնքի տակ՝ լո՛ւս ու վսեմօրէն տխր'ւոր հողօրդուելու գացող խաչակիրներու աեւ գծին մէջ՝ դէպի ազատութեան պայքարի ուխտատեղին... Դէպի գերեզմանը մեր անմոռանալի, անմահ Միմոնին»...

Այնուհետեւ Յով. Մէթեան եգիպտահայ ուսուցչական մարմնին կողմէն կուռ դամբանական մը խօսեցաւ կրթական մեծ գործիչ ընկ. Զաւարեանի մասին: «Յուսարը» թերթի խմբագիրը Գահիրէի Միջկուս. Խառն Մարմնի կողմէ յանուն համերաշխ շարքերու ոգեկոչեց Ս. Զաւարեանի հեռուոր գազադին հետ Կովկասը՝ իր մտաւորական զարթոնումի եւ ազատագրական շարժումի ուսմանը, որոնց մին Վիտորիո ստորոտը ոմբամահ նահատակուեցաւ, միւսը կ'երթար հանդէսի Երիւրի կամ Պալլադի հանրափոխութեան մէջ, երբորդը վեթերան Զաւարեան կ'իմար աշխատանքի ճանապարհէն: Գահիրէի Դաշնակցական մարմնի կողմէն խօսեցաւ ընկ. Արտաւ. Հանրմեան՝ յուշուած ու յուզիչ շնչով մը ուրուագծելով հանդուցեալի ամբողջ դիմապատկերը:

Սգահանդէսը դուրս եկաւ շատ ապաւորիչ: Շաղոյեան քահ. Կիակից տխուր ժողովը. ժողովուրդը մեկնեցաւ ծանր վիշտը հոգիին մէջ:

24 Դեկտեմբեր 1913



Հ. Օհանջանեան, Ք. Միքայէլեան, Ս. Զաւարեան, Ս. Թադևոսեան

ՄԱՀՈՒԱՆ ՏԵՍԻԼ

Բաւանդով կարծես խաւարից՝ մօտեցան նրան երկու այր,
 Երկու մարդ սեւագգեստ, մաւյլ՝ կրծքերին պղծմանց նշան.
 Կմախքներ էին՝ զգեստն զգեստներ մէքն ու մաւյլ,
 Ձեռքերին ոսկորներ քանած, ինչպէս գոռ մարտի դրօշակ:

Ելնելով կարծես խաւարից՝ մօտեցան նրանք այն հալին,
 Որ ցատկում ու գոռում էր օդում եւ ճիչեր արձակում ահեղ, —
 Եւ մէկը նրանցից, որ ուներ հայեացքներ՝ մաւյլ փայլով լի —
 Սկսեց ձեռքերով օդում, նրա շուրջը շարժումներ անել:

Հիպնոսող բծիշկն է ինչպէս ներագոյզ շարժումներ անում՝
 Հիւանդի առջեւ շարժելով պսպղում մի գունտ, կամ բիրտեղ —
 Նա շարժում էր այդպէս մի ոսկոր, կրկնելով անյայտ մի անուն,
 Յօնքերի տակից ցայտելով կրակներ կարմիր ու հուրեր:

«Հըդահի՛ւն, Հըդահի՛ւն, Հըդահի՛ւն» — ձայնում էր կանչով շառաչում,
 Ձեռները կարօտով օդում հալածել մարդուն տաքածած,
 «հա՛ւ-բա՛ւ-օ՛տ, հա՛ւ-բա՛ւ-օ՛տ, բա՛ւ-օ՛տ» — ձայնակցում էր նրա
 հառաչին
 Ուղեկիցը նրա՝ ամենի էփսոսում ինչպէս վերացած:

Այդ մաւյլ կանչերի ներքոյ հուտտիւ մարդը քիչ-քիչ
 Սկըսեց քուլանալ, հանդարտել, — եւ ահա ընկաւ ուժասպառ.
 Յնցում էր մի քանի վայրկեան իր գլուխը միայն ահագին,
 Բայց մա էլ հանդարտուեց ահա... Եւ տիրեց լուսինն անքառ: —

Մեծք մայում էինք քարացած պատկերին այդ մութ ու յռախ,
 Եւ ուզում էինք հեռանալ, ընթանալ քացատով կրկին,
 Երբ հնչեց բլուրի գլխից հոինդը ոսկմի շեփորի,
 Եւ լսուեց աղմուկ, ոտնաձայն — ներքեւից, անտառի խորքից:

Լսելով ձայնը շեփորին — վեր քռաւ սեղից հալածել
 Այն կմախքը, կամ մարդը կրկին՝ հակատին արմաքոր վերքեր, —
 Մի քանի վայրկեան քարացած, ակահը շեփորին, նա լսեց, —
 Եւ քառու մտան սրընթաց — երեքով պացան ներքեւ:

Շփնդը ոսկմի շեփորի թնդում ու կանչում էր միմչդեռ,
 Ձայնում էր բլուրի գլխից, ինչպէս կռչ, երբի աղաղակ, —
 Եւ լսում էին ներքեւից, անտառից — ճիչեր ու կանչեր,
 Հաւաքում էր կարծես անտառում եւ երբի էր ելնում մի քանակ:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

(Հատուած)

Թ. ՕՇԱՅԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Հանգստութեամբ ժամը մը, որ կը չափէ հասունեակուն տատիճանները, ապառով ու մասնազէտ, առաւ անոր մարմինը իր ծանկերուն, ըսես՝ հետունքէն յարգարուած հանգստեան անկիւն, առաջաւար անհոգիան՝ անանուն այն երեւոյթին, տեղիքին, որ կը ռկսի մեր պատմութեան դուռներէն՝ իր աստայնը մեր զգայարաններուն խորունկ խորշերը կապելով իրարու ու կ'ըլլայ պայծառ խռովք մը, հրթիռ մը մեր մտքին վերեւ. ու կ'ըլլայ մարած, պղտոր, մոխրասոյզ արտմութիւն, երբ կը նետուի մեր ետին, հանգումին հետեւող, կապուած յաճախ արիւնի, արցունքի, անմոռանալի բոկէներու փունջի մը, երբեմն ալ երկանկութեան, աննառ հաճոյքին փայլահերս շուքի մը։ Արման Միբողնա, Պարզեւ, ո՛րն ալ ըլլայ սա տղան, ունէր իր ետին այդ բոկէները։ Ձգարմացաւ, որ Արեւելքին այդ պուպրիկը ըլլար այդքան քիչ ծանրութեամբ ու, մա՛նուանդ՝ իր խորան ամբարձումը ընէր այդքան ընտանի, ոչ-տիմամարտ, շնամեղով հեքիաթին յօրինած աղջիկներուն։ Ոչ մէկ ընկրկում։ Իր կողմէն, բարձրաձայն, պատրուակ, մտուքը։ Անշուշտ որ անխոհեմութիւն էր, դարձան զիշերով, առանց վրանոցի ու թափառումը, անապատին մէջ, որ մէկէն կը մտի։ Ու այսպէս զբարձրաձայն մտնու համար...։ Տղուն ծունկերով գոյացած խորշին մէջ անոր մարմինը կը շարունակէր դողալ, բանաստեղծ մը պիտի սրբազնէր՝ թրթռալ։ Վա՛խ, Հասկնալի էր, որ չերեւէր ասիկա՝ իր հօրը արիւնը այնքան հարազատութեամբ ու կերքով կրող երիտասարդին ներսը, որ այդ մոռանդութիւնները պաշտպանէր, ամբապնդէր էր արեւմտեան ար-

ւեստին ամէնէն խորունկ կաթումներովը։ Անոր մատները շուշանեալութեամբ կտորեր էին տիրտեր, դաշնամուրին հեծկլառութիւն ընդմէջէն, տաքոյն ըլլալու անկարող պարմաններու կուրծքին վրայէն, երբ կը փորձէին ստեղծել զմարմար մեղեդիներ, ինչպէս կը տիրէր պատկերել աղջիկներուն ծոցը, սաթէ հովիտը տախտակներուն։ ... Նայալածքի բացակայութիւնը սա դաշնամուրներուն, բունկումներուն վրայ՝ ուրիշ պատկերներ, հեռացման, ուրուայնացման։

Քակեց անոր մէջքէն թեւը, մինչեւ այդ բոպէն ամբապէս երկարած այդ թրթռուն շէնքին զգալի մարդակ։ Պէտք ունէր անոր, նետելու համար այս անգամ վերերէն, պարանոցին փողոսէն, ուսն ի վար այդ աղջկան, զէպի կոնակը, ուր, մետաքսին թեթեւ ճշուածը, քաջամը, հեծքը, մազերու եղկ լրջիւնին խառնուած, ծնունդ կուտար մատնող, անհանգիստ զգայութիւններու, թելագրելով խակական տեսակ մը զժուար, անխորհուրդ բազմութիւն, անոր գերազանցապէս տրամադիր լռելիքները աղմկելով, երբ ինք այդքան մեղնակ կ'ուզէր, պիտի ուզէր ինքզինքը, սա պահուն։ Յետոյ յաճախեցաւ դժնդակ բաներէ, մօտիկ անցեալէն։ Արեւմտեան մեծ աստաններու կասկածելի, գէջ, մերկ սենեակներու ներսը կատարուող մերկացումներ կը նեղէին զինքը, իրենց հետեւանքներուն անհարկի թափփովը։ Սեռային սքօսը տրտում է միշտ ու աղջիկներու յիշատակը յաճախ զերեզման մը, մեր մտքի տաշտին։ Անոր մէջ կրկնուելու եւլան բազմաբան թափառութիւնները, բերնէ, մորթէ, ձայնէ, նայալածքէ, բոլորն ալ պարզապէս իրողութիւններու փրանքներ իրբու։ Պատերազմէն անցնող երիտասարդ մը չէր Արման Պարզեւը սակայն, որպէսզի իր զգայարաններուն ակօսին ինկած ամէն թրթրու ընդունէր ուղղակի, առանց այս ու այն նկատումներուն պաշտին։ Ամէն բոպէ իրենց կեանքը զոհի մը պէս կրած, իրենց օրերը իրբու անունդ ժառանգած այդ երիտասարդները, ճակատէն դարձին, կրկնը ունեցան՝ իրենց զբոսականներուն համեմատական յազեցումով մը։ Անոնց այս վայելապաշտութեան հանդիսատես պատանիները, երէցներուն ճամբով, մորթեցին զարեւոյ յուրապարծուած նրբացումներ, — առթիւսածութիւն, խղճահարութիւն, զուլեւ ալ կարգի նման զիւրազգածութիւններ, կրկնու միտքը զնահատելով իրենց մարմնեղէն արժէքէն, արհամարհելով նոյնիսկ զինք ժու մը վայելքին, որ սեղանին լրացուցիչն էր դարձեր, պարզուած բաժակներուն առանձին, հեւալտապ բախումին պակը, բոլորովին տարբեր խորհրդաբան, առնուազն քիչիկ մը բանաստեղծական պաշտամունք, զբողները խանդավառող ու գիրքերու վրայ դահակալող։

Դաւիթ Յովհաննէսի «Նոր կեանք» բանաստեղծութիւնների ժողովածուն կարելուց յետոյ, պարզապէս իրեն կ'ատէի, թէ ինչե՞ր մտածել ու զգալ տուեց իր գրողի, ի՞նչ անցած ճանապարհներ յիշեցրեց եւ ուր տարան այդ ճանապարհները: Կ'ասէի եւ վերջ:

Իսկ Հիմա, այստեղ, ստիպուած եմ գրել, որովհետեւ պարզուեց, որ մի աճրող տառը տարի առաջ գիրք Հրատարակած, պարբերական մամուլում յանախ տպագրուող հեղինակին, այսինքն՝ նրա գործերին, համեստ ասած, շատ քչերն են ծանօթ: Դա ոչինչ, ովկիանոսը, իրօք, հսկայական է եւ իր բաժանողի դերն աւելի լաւ գիտի, քան միացնողին...

Բայց երբ մի յօդուածի բնաբան դարձան Դաւիթ Յովհաննէսի տողերն ու իրարանցում ստեղծեցին՝ «Ո՞վ է, ո՞ւր է» ներքով, արդէն ինչո՞ւ իսկապէս սկսեց տանջել: Իրականք ունե՞մ «ինձ համար պահելու» նման գրողի, որի «տալ երակների փափուկ արիւնը չի դաւաճանել ինձ, ու քեզ — երկիր իմ — երբեք», դաւա՞լ նրա արնակիցներին: Թոյլ տա՞լ, որ եւս տառը տարի յետոյ յանկարծ գիւտ անեն, թէ Հիմաիւանից Հնարաւորութիւն տալ, որ յայտնաբերեն ու աքնահետեւ հետեւեն այդ հետաքրքիր ու անհրաժեշտ դառնալ կոթողացող բանաստեղծի ստեղծագործութեանն ու իրագործումներին: Այս վերջիններն, ի դէպ, սակաւ կարեւոր չեն, թէ եւ հարեւանի կատուի ահուկից ինքն իրեն ասում է:

Թէ՛ բոյլ եմ, թէ՛ անճարպիկ եմ, թէ՛
զործն առաջ տաքտ ամէն յիմար, իսկ ես՝ ոչինչ...

— Եթէ ընթերցողին բախտ է վիճակուել տեսնել, ուրեմն նա կը յիշէ
digitised by A.R.A.R.®

«Հրեղեն ճին» ժողովածուն, ուր դպրոցականների ուժերով («Պատանի բանահալալ» շարժման շնորհիւ) տնօրինուել են տարբեր գաւառների բանասացներէց լսուած ու գրի առնուած հերթաթերեր, առականեր, խաղիկներ եւ ժողովրդական բանահիւտութեան այլ նմոյշներ: Այս իրադարձումը երկրորդ կարգի է: Նախ՝ մոտացութիւնից փրկուեցին մեր ազգային բանահիւտութեան պատմութիւնը, երկրորդ՝ մասնակցելով դրանց հաւաքմանը, երեսաները մէկ ընդ միշտ սովորեցին, որ դրանք մեր ազգային արժէքների մասն են կազմում, որ կարելոր են հենց ազգային իմաստով, եւ երրորդ՝ ընթերցողին (ոչ միայն պատանի) մեծ նուէր արուեց: Ել յասելու համար տառապեալ բանասէրներին, որոնք միազուց են մաշել Խ. Զմիւնի եւ Մ. Արեղեանի աշխատութիւնները, «Հայ ազգագրութիւն» եւ բանասիրութիւն» շարքի պրակները ու գեւ չեն արժանացել Խորհրդային շրջանի մեծագոյն ազգագրագէտ Կարապետ Մելիք-Օհանջանեանի երկերի ժողովածուին: Այս գրքի պատրաստութիւնը եւ խմբագրումը, այսինքն՝ կնքահայրութիւնը ստանձնելիս, Դաւիթ Յովհաննէսը մէկ նպատակ է ունեցել, ինչպէս ինքն է գրել անձնական երկտողերից մէկում. «Ուրիշ քան պէտք չի-միտլմ, որ հայ մանուկը կրթութիւնը անարատ ու անխառն խոսքով...»:

Արդէն պարզ պէտք է լինի, որ Դաւիթ Յովհաննէսը (Դաւիթ Հրաչեայի Յովհաննիսեան) աւարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժինը: 1968-73 թթ. աշխատել է Կիրովականում, նախ՝ որպէս գրական աշխատող «Կայծ» թերթի խմբագրութիւնում, ապա՝ արտասահմանեան գրականութեան պատմութիւն է դասաւանդել Մանկավարժական ինստիտուտում: 1974-76 թթ. նոյն առարկան է դասաւանդել Երեւանի Խ. Աբովեանի անուան մանկավարժական ինստիտուտում: Այնուհետեւ, կարճ ժամանակ, պաշտօնավարել է Հայֆիլմում՝ որպէս սցենարական խմբագրական յանձնախմբի գլխավոր խմբագիր, որից յետոյ ստանձնել է մանկական գրականութեան խմբագրութեան վարչի պատշոնը՝ «Մովսէսական գրող» հրատարակչութիւնում: Իր անդրանիկ գիրքն է «Երգերի պսակը» (1974 թ.), 1979 թ. լոյս տեսած «Անցեալ կորուսեալ» ժողովածուն կրում է Սերո Խանդաղեանի օրհնութիւնը. «Անցեալ կորուսեալ» ժողովածուն քանոնադրական յազարանակ է: Ռուսերէնի թարգմանուած հատընտիրը («Երկու գրքից») լոյս է տեսել 1980 թուին, լիովադի տաղանդաւոր բանաստեղծ Յուստինա Մարցիկեանի շնորհակցով: Ի դէպ, վերջինիս, «Միքայիլ Գաբ» գրամատիկական պոեմի թարգմանութեան համար 1978 թ. Դաւիթ Յովհաննէսին շնորհուել է ՀԼԿԵՄ ԿԿ.ի գրական ամէնամեայ մրցանակը: Թարգմանել ու խմբագրել է բազմաթիւ հեղինակների գործեր, իսկ 1983 թ. լոյս տեսաւ նրա «Նար կեանք» ժողովածուն:

Շատ ջրեր են հոսել 1970ական թուականների սկզբից, ուրապատոյտներով, երբեմն՝ դաժակէժ են հոսել, հանդիպել պոետոր ջրերի, կանգնած ջրերի...: Նրանք, որ կարողացել են մնալ Խաղիկ Դաւիթեանի տասն «պտտիկ» ցրի Մարութայ» զուլալ հոտանքի հետ, աւելի սիրելի են, աւելի են ուրախացնում, քան նրանք, որ նոր են ծնուած այդ ջրիկում: Իր «Նար կեանք»-ով Դաւիթ Յովհաննէսը ապացուցեց, որ հնարաւոր է մնալ ջինջ եւ իմաստասեւ, որ հնարաւոր է կենսափորձ ունենալ եւ չկորցնել զարմանալու ունակութիւնը: Այն՝ ինչ ճշմարիտ է հոգու ճշմարտութեամբ, իրաւացի՝ արգարութեան իրաւացիութեամբ, կարելոր՝ մարդու մարդկայինը պահպանելու համար, Դաւիթին իր հետ բերել է «Հին» կեանքից, «անցեալ կորուսեալ»-ից, որն ամենաւին էլ կորուսեալ չգործաւ, բերել է գրանցից առաջ եղած ինչ-որ մի տե-

դից, որը մեր պատանհկութեան նորածին տեսլապաշտութեան մկրտութեան լուսէ աւազանն էր: Այդ տեղից շատերն են սկիզբ տուել, բայց վաղ թէ ուշ չեղունել, տարածուել, շատ են «մեծացել» կամ փոքրացել ու դարձել են անճանաչելի, «պստիկ ջրի» հետ ընթացք չեն պահել: Դաւիթն, սակայն, կարողացաւ իր լիցքը, այսպէս ասած՝ մարդկային միջոցով, իր մէջ պահպանել իր իմացած ձեւով, իր հետ տանել իր ճանապարհով, թռչունացի մէջ քանկալը պահած այդ միջոցի ձայնին, հրմշտուելի մէջ կամքն ունեցաւ չկորցրնելու այն, առեւծախի մէջ քաջութիւնն ու իմաստութիւնն ունեցաւ չփոխելու այն մէկ այլ, աւելի յարմար ու սակաւապահանջ միջակայնման սաղմի հետ: Հիմա հեշտ է այս ամէնը գրելը, երբ կարեացուած է գիրքը, իսկ երբ նոր սկիսի քաջէի...

Մի ընդհանրացում թոյլ տամ ինձ:

Գրողը, երեւի, չի էլ կասկածում, թէ ինչ ապրումներ է ունենում ընթերցողը ռերուած հեղինակի այս գիրքը քացելիս: Իսկ եթէ այն չէ՞, իսկ եթէ յանկարծ կորցրել է այն, ինչը ամենաթանկն էր ընթերցողի համար, թէկուզ դա ամենեւին էլ կարեւոր չլինի դրաքննադատի համար: Այդպէս փոփոխուելով, գնել-վերցնելով սկսեցի, բայց հենց սկզբից՝ իր թափով, իր անբռնազրօս, գրեթէ էպիքական ծախով, լայն մտապատկերներով, իւրօրինակ (հրաշալիօրէն հաշտ դասականի եւ այժմէականի հետ) լեզուով վրայ տուեց ու առաւ-տարաւ... մինչեւ վերստուգող-սրբագրիչի անուշը՝ առանց թողնելու, որ դուրս դաս իր աշխարհից՝

Որը տրուում է գծախտ-երջանիկ,
Երջանիկ գծախտ պոետներին իսկ
Եւ չուրի ամուսն...

Լաւ է, որ նոր ժողովածուին մէջ տեղ են դրել նախորդի մէջ հրապարակուած որոշ գործեր: Դրանք օգնում են հետեւելու Դ. Յովհաննէսի բարձր-նումներին, ընկալումներին շաղիւն, հնարաւորութիւնն են տալիս հասկանալու նրա աշխարհընկալման սկզբնականը: Հրաշալիքն այն է, որ բանաստեղծութեան առանցքը ինչ էլ լինի՝ տրամադրութիւնից մինչեւ համոզմունք, նա ո՛չ միայն կարողանում է համոզել ընթերցողին, այլեւ՝ համակել իր զգացած պահին շնչով, ակնթարթային պայմաններով (օրինակ, «Այս գիշեր եւ լաց եւ զայն» կամ «Այս օմնաք»): Դա նրան յաջողում է անել առանց «լացացնող» մեղեդիներին ու մրմունջներին: Իր զգացմունքների մասին եթէ չընչում է, ապա յստակ, լսելի, ու կարողանում է միայն հոգեպէս, ստուգապէս մարդ: Ո՛չ թէ կարօտը, թախիծը, ափսոսանքն են ինքնուրոյն գոյներ, այլ աղամորդին է տիրում, կայսրում եւ նոյնիսկ ողբում, ինչպէս՝ «Երգեր մեռած ընկե-րդա» շարքում:

Դու, որ ծնեցիր Երան հայրաքար,
Դու, որ կէս մի կեանք Երան պահեցիր, —
Իմչա՞ւ քերեցիր եւ իմչա՞ւ տարար,
Իմչա՞ւ այդքան շատ Երան սիրեցիր,
Որ մեզ քողեցիր ամիսս ու ամբաս
Լոկ մահկամացու մարմինը Երա
Եւ մի յուշ, տանջող յուշ արմակարմիր:

Գրականագէտ Ալեքսանդր Թոփչեանը(*) ճշգրտօրէն բնորոշել է Դ.

(*) «Բառի սահմանները». Երևան, 1978 թ., «Սովետական գրող» հրատարակչութիւն:

Յովհաննէսի այս յատկանշական կողմը. «...Ձի խուսափում գգացումն փայ-
նութիւնից: Դ. Յովհաննէսը քերես միակն է երիտասարդ բանաստեղծմե-
քից, որի գործերը ձեռի եւ բովանդակութեան առումով խիստ մերդաշնակ
են: Իսկ Յրառումնական տարերքից (որից դարձեալ չի խուսափում, աւելիմ-
տեղ-տեղ բացէ ի բաց խօսում է այդ մասին) ծնունդ է բանաստեղծական իւ-
րատեսակ անհանգիստ, քաղցածի աշխարհընկալում: Իրականութեան այդ-
պիսի ընկալումը խիստ առանձնայատուկ է երիտասարդ բանաստեղծի հա-
մար, եւ մեր օրերում, երբ գգացումն փայնում տեղերը գնալով պակասում են,
բանաստեղծներն էլ դարձել են չափազանց լրջժիտ, Դ. Յովհաննէսը չի խու-
սափում ռամանտիկ կրքերից. բայց եւ կարողանում է հեռու մնալ կեղծ ու-
ժանտիպից»:

Դրան զուգահեռ՝ Դ. Յովհաննէսի ստեղծագործութեանը յատուկ է,
մի տեսակ հինգնութեան կնիք է՝ ա՛յն՝ որ նուիրակ ամենազաթեղիկ, աշուղէս
կոչուած՝ քաղաքացիական բանաստեղծութիւններում նա ո՛չ թէ հաւաքա-
կանութիւն է, ո՛չ թէ կարծիքների խառնուրդ տրտալայտողի դերում է, ինչ-
պէս շատ-շատերը, այլ եւ անհատականութիւն է, պարզ տեսանելի իր «եռնով»:

Մտածողներ, պոետներ, աշխարհի տէրեր,
Որ այնքան խելօք բաներ էիք առում,
Որ հագում էիք մի ծաղկի բախտը անգամ,
Ահա հարց եմ տալիս. ա՛ր էիք դուք,
Սեւ ա՛ր էիմ խելօք ձեր մտքերը բալոր,
Նրբ դեռ հմարաւոր էր փրկել ծաղիկը,
Նրբ դեռ հմարաւոր էր փրկել աշխարհը
Մօտաւաւտ հրդեհից Յորագոյն մահուան...

(«Գրական քերք», 13 Յունուարի, 1984)

Այդպիսին են եւ նրա Հայրենասիրական բանաստեղծութիւնները: Աւ-
շուտ է բանաստեղծը ու իր Հայրենասիրութիւնն էլ «գործունեայ» սէր է, ոչ
թէ պասիւ գգացմունք: Հայրենիքը ո՛չ մտաւա է, որ նստի ու խոկայ, ո՛չ
յուշարձան, որին ձօներ ու ներբողներ ընծայի, ոչ էլ կրօնական պաշտա-
մունքի տարակայ, այլ՝ իր պատկանելիութեան սրբազան մարմնաւորումը,
որուն սիրուց զատ ծառայել է պէտք: Ա՛յս է Դ. Յովհաննէսի Հայրենասի-
րութեան բարոյութիւնը: Ի միջի այլոց, շատ դժուար է մէջբերում կատարել
նրա գործերից, այնքան կուռ, յագեցած, միահիւստուած են բանաստեղծու-
թիւնները — մի-մի սրբաւոր քար: Յատկապէս դժուար է «Նու արիւնը,
իմ տաք ու փափուկ արիւնը» բանաստեղծութիւն-խաչքարից հատուած «պո-
կելը», բայց ահա՝

...Քո մէջ պիտի աշտուհետ յիմուհի ծնունդիս յայտնի ու մահուան
անյայտ տարաբնուրդ բաժանող գծիկի իմաստը,
Քո մէջ — երկիր իմ — մութ ու խորհրդաւոր տառապանք իմ, քո մէջ
— երկիր իմ — արեամբ արիւն,

Ու պիտի հոսի մի օր, դժբախտ ու երջանիկ մի օր — քեզ համար ու
յանուն քեզ — հին ու մոր բոլա՛ր հոգերիդ վրայ,

Որպէս անագատ ու ծոյլ ապրած կեանքիս միակ ու վերջին արգարա-
ցում,

Ու որպէս սկի՛զը հագարամեայ երազանքիդ,

digitised by A.R.A.R. @

Ու որպէս լինելու հաստատում ու կոչ —
 Իմ արիւնք, իմ տաք երանքների փափուկ արիւնք, աք չի դաւանանք
 ինձ, ու քեզ — երկիր իմ — երբեք:

Եւ սա գրուել է դեռ 1969 թ., երբ նա «գեո ջաշէլ էր, որպէս իշուկ»,
 բայց հասուն, որովհետեւ այդ նուիրումից առաւել ինչ-որ անելիք ենթադրող
 համոզմունքը մնում է անփոփոխ, զուգորդուած անհուն, մի տեսակ յարգու-
 լից սիրով, ակնածալից հիացմունքով:

Մութը իջնում է հայոց աշխարհին,
 Հեռում լռյսեր են կայծկլտում ազօր.—
 Օ՛, սո՛ւրբ հայրենիք, օ՛, աշխարհ իմ հին,
 Խաչում Գրիստոս, առաջին ազօրք:

Իր բանաստեղծական խառնուածքի ուժով, մեր ժողովրդի անցնալի
 քաջատեղեկութեամբ եւ ի՛ր՝ Դաւթային յախուռն, բայց իրատես յենակէ-
 տերով է հառուցուած նրա գիտակցուած հայրենասիրութիւնը: Վերք մէջ-
 բերուած բանաստեղծութիւնից տասներեք տարի անց, «Եւ չեմ մեռնի» բա-
 նաստեղծութեամբ՝ ասես պատգամ է գրում իրեն եւ ուրիշներին:

Հազար շիրիմ կայ իմ հոգում,
 Հազար մեռել ու նահատակ,
 Որոնք հազար ձայնով ոգում,
 Բարբաբում են արիւն տաք:

Ելիր, առում եմ ինձ քրտնք,
 Ելիր, քո սուրբ վրէժը առ,
 Դեռ հոգում եմ անարձագանգ
 Մեր արիւնի գետերը վառ:

Եւ վերջացնում է հետեւեալ հղբակացութեամբ՝

Ազօրք արիւնք Աստուծոյ հեզ-
 Աստուած չեզար մեզ օգնեցան...
 — Բո մէջ պիտի աժը գտնես,
 Եւ այդ է քո միակ ճամբան:

Ուրիշ մի բանաստեղծի, ուրիշ ժամանակներ է յիշեցնում՝ նոյն, բայց
 նորովի ճշմարտացիութեամբ: Ինձ թւում է, որ նա՝ ով հասկացել, զգացել,
 ներծծել է անցեալը, որոշ կերպով է տեսնում նաեւ ապագան, առնուադն
 տեսնում է այն, կուսում: Դա գրեւորում է, պայմանականորէն առած՝ յոյ-
 սի ձեւով. այս դէպքում՝ յոյսը նախազգացման մարմնաւորումն է: Իր խոր-
 քով ու բանաստեղծական կատարելութեամբ՝ «Առաւօտը-փոքրիկ, անպաշտ-
 պան մի ծաղիկ»-ը Գ. Յովհաննէսի լաւագոյն ստեղծագործութիւններից է: Ա-
 ւելի՛ն. վերջին տարիներում Հայաստանում ստեղծագործող ու հրատարակ-
 ոող մի շարք հրաշալի բանաստեղծների գործերից եթէ մի տասնեակ ընտրե-
 լու հարկ լինէր, «Առաւօտը...» անպայման դրանց մէջ կը լինէր: Առաջին
 տողերը՝ ջինջ բանաստեղծութիւն, այնպիսին, որ ուզում ես փառք տալ դրո-

ղին, որ կարողացել է բառերով քնն նուիրել մի գեղեցիկ, մի բարձր ու անփոխարինելի, միշտ անհրաժեշտ արժէք՝ գեղեցիկը, հենց այնպէս, այդ առաւօտի նման բնական, նրա պէս անբացատրելի, անկրկնելի.

Առաւօտը-փոքրիկ, ամպաշտպան մի ծաղիկ,
Առաւօտը-շուշան մի ծաղիկ է դարձնալ,
Որ կընում է ամձայն մեր փողոցի ծայրին
Եւ լուրք մշուշներ եմ ցնդում շուրջը նրա:

Եւ ընթանալով իր հողու բացած ճամբով, խորանալով, խորասուզուելով ինքն իր, մէր հուժեան ընդերքները, ահա թէ ինչ է բացում:

Որ ապրես իմ խօսքով, ու զօրանաս այնքան,
Որ քո երկրի տէր — աշխարհի տէր էլ լինես,
Որ քո լեզուի տէր — ոգու տէր էլ լինես,
Որ քո աշխարհի տէր — ցաւի տէր էլ լինես:

Եւ ապրիր, որ տէր լինես քո պատմութեան,
Տէր այս առաւօտին, ու քո երգին-մահուր,
Քանզի իմ խօսքը — այդ երգն է քեզ տրուած,
Եւ այդ երգից բացի դու կեանք չունես ուրիշ:

Դ. Յովհաննէսի ո՛ր խօսքերից, կարծես՝ ակնախոսողներից թղթին ծանր-ծանր հասունացած-կաթած թանձր բառերը դառնում են անբռնադրօսիկ շարուած նախադասութիւններ, որոնք կրկին ու կրկին կարդալուց յետոյ էլ դեռ չլմում ես, թէ ինչպէ՞ս են բառերը՝ բոլորիս համար մատչելի բառերը յանկարծ զարմանահրաշ լիցք ստանում ու անպատմելի դռներ բացում մտքիդ ու հոգուդ առջեւ:

Յուստինաս Մարցինկևալիչիւսը ճիշդ է ըմբռնել Դ. Յովհաննէսին, որովհետեւ ինքն էլ մեծատաղանդ բանաստեղծ է: Դ. Յովհաննէսի ուսերէն ժողովածուի նախաբանում նա գրել է.

«Ահա տեսնում եմ նրան [Դ. Յովհաննէսին], բանաստեղծին, սքանչացած ազգային ու համաշխարհային բանաստեղծութեան դասական եմմեաբով, միեւնոյն ժամանակ դէպի նորը, չփորձուածը ձգտելիս: Այդ երկու հասկացութիւնների միջեւ ընկած տարածքն էլ հեմք նրա յայտն է, նրա հաղը, նրա արուեստանոցը: Այստեղ մա պատժուած է ու օծուած [մեռնադրուածի իմաստով — Ա. Գ.] խօսքով: Իր սուրբ երրորդութեան՝ Ազգի, Պատմութեան, Լեզուի առջեւ»(*):

Այդ սրբութիւններին ծառայելուց բացի, թուում է նրանցից ուժ եւ, ասացինք, յոյս է ստանում եւ այդ յոյսը, դեռ նախորդ դրքերից գիտենք, չի թուլանում, չի նահանջում իրատեսութեան ուղեւ, չպէ՛տք է նահանջի, այլ ապէս էլ ի՞նչ բանաստեղծ, էլ ի՞նչ Հայ...

(*) Ընդգծումները իմն են, բաց մեծատառերը՝ իրենց:

Եւ ապրում եմք այն ՅՈՅՍՈՎ,
 Որ աշխարհում աչ մի չար բան
 Յաւերժ ապրել չի կարող:
 Այս էլ կ'անցնի, ու կը դառնանք
 Նորից մեր Հին Տունը մենք,
 Մեր հողերին նոր շունչ ու կեանք
 Ու նոր ՅՈՅՍՈՎ կը բերեմք:

✠

Թող այն տպաւորութիւնը շատեցնուի, որ Դաւիթ Յովհաննէսին կա-
 րելի է փոխադրել դասական դարձրել կամ իր ծնունդուց շատ առաջ ապրած
 դասականի հետեւորդների շարքը, միայն այն պատճառով, որ նա եւս գրում
 է մշտնջենական արժէքների մասին: Ենթադրէ՛ք, նրան յուզում են մնայուն ար-
 ժէքները, այսպէս ասած՝ աւանդական ձգտումները, բայց չէ՞ որ մարդն այն-
 պէս է ստեղծուած, որ չի կարող ապրել առանց դրանց, Հայն այնպէս է
 ստեղծուած, որ եթէ ոչ արեամբ, գոնէ ոգով է ժառանգում դրանք: Այս
 դարի, այսօրուայ տաղանդներն ու կեանքի կշռոյթը չեն վերապահում նրա ու-
 շաղթութիւնից, անսարքեր չեն թողնում նրան եւ նրա տեսադաշտից, այս
 ոչ պակաս ասարածուած է, անցնում Հայրենիքի հին ու նոր սահմանները՝

Ամարներ անձրեւ չէ, այլ մաքուր ստրոնցիում,
 Որ իջնում է որպէս երկնային պատիժ,

.....
 Եւ լցնում սիրտդ անբռն մի անսվ,
 Որ տանում է շէշի քրաշակի վախճան...

Ահա թէ ինչպէս են մտահոգում նրան դարի սարսափները: Միանգամ-
 մայն արդիական այս բանաստեղծի մօտ, սակայն, նկատելի է զանցեալ կո-
 րուսեալ՝ օրերի, աւելի պարզ կեցութեան, աւելի ջերմ ու մտերմիկ, կարճ
 ասած՝ մարդկային յարաբերութիւնների հանդէպ:

Սառք, մաքուր լուսնի վրայ
 Ես հետքեր եմ տեսնում մարդու,
 Ոչինչ արդէն չի մնացել
 Ներշնչանքի համար տնկեղծ...

Նրան յաջողում է նորից աւտոմեքենաներին իրա վրայ սիրահարե-
 ցնել ու իրարից համբոյր կորցել... Վթաբի պահին: Նա ամէն կերպ հակա-
 դրուում է վերջնական մեքենայացմանը, ուղեղի իշխանութիւնը սրտի վրայ՝
 մերժում:

«Մի աղջիկ ջիմսա-սիգարէրային» ժպտը քերական է նրան այն-
 քան, որ՝

— Եթէ ինձ արար աշխարհն էլ տային,
 Քիչ կը լինէր քա ժպիտի դիմաց:
 Քանզի փոխուել է աշխարհը մեր հին,
 Դարձել սիմֆոնիկ խաղերի մի բեմ —
 Քեզ նման ջիմսա-սիգարէրային:

digitised by A.R.A.R.®

Այսպէս, բոլի մէջ պինդ բռնած մաքուրի, գեղեցիկի, բնականի (ոչ սինթետիկի), մարդկայինի պատահած փշրանքները, պահում է, որ յետոյ տապալուած յիշեցնի:

Պիտի մայնմի երբեմն ետ,
Զալիմի մնացած կեանքի ճամբան
Եւ ավատամի քանի ու եռանդ,
Որ երկաթի երգը ծարաւ, —
Հաշտունմի անցեալ երգերի հետ,
Բարբենմի հուրը պահտակամ,
Որ հաճոյ՞քը վսեմ եռայ,
Ձեռքը դառնայ արարչի կաւ:

Երանի՛ր իր գրչակիցներից (անուանապէս) շատերը լուրջ ընդունեն այս բարի խորհուրդը եւ ընթերցողի ականջն ու հոգին չվիրաւորեն իրենց անբարեհունչ, չշահաձայն տողերով, գաւառական վարժապետի հրեւական խաթար ու անցեալ տարուայ կարգախօսների անճշակ յանգաւորումով:

Հեղինակի կարոտներին, պոռթկումներին, բողոքին ու բաղձանքին հետեւելով ու համեմատելով աւելի վաղ գրուած գործերը նորերի հետ (օրինակ՝ Հենրիկին, 1982 թ.), տեսնում ենք երկփեղկուած վերաբերմունք այս սօրունայ ջահելների նկատմամբ, որոնցով նա թէ՛ հպարտանում է, թէ՛ մի քիչ յուսախաբ է, բայց, անկասկած, սիրում է նրանց: «Մեզանից յետոյ կը գամ...» այնուհետեւ՝

Ուրախանում եմ, երբ մայում եմ ձեզ,
ուժեղ, յազթանդամ տղերք: —
Այնպէս խելօք ու ճշգրիտ էք այնպէս,
որ չեմ իմանում — ումի՞ց էք սերում:
Ուրախանում եմ ձեր մտքով անքեք,
սակայն տխրում եմ եւ մահւ մի քիչ,
որովհետեւ դուք ռչինչ չգիտէք,
չմայած գիտէք ամէն, ամէն ինչ...

Եւ իրօք, նրանք, ախր, չա՛տ են հաւասարակշռուած, բարեկերթ: Ամենապղծեցողին այն է, որ հաստատ պիտեն, թէ ի՛նչ են ուզում կեանքից, երբ մենք դեռ չիմացանք, թէ կեանքն ի՛նչ է ուզում մեզներից: Լրջօրէն կասկածել են տալիս «առողջ մարմնում առողջ հոգու», ընդհանրապէս հոգու գոյութեան մասին իրենց գուրեկան պատեաններից ներս: Բայց եւ այնպէս, դալիքն են, ուրեմն՝ սիրելի:

Այ. Թոփչեանը, հոգե-մտաւոր սերտ կապի մէջ լինելով իր սերնդի բանաստեղծների, առհասարակ գրողների հետ, շատ լաւ է հասկացել նրանց (նոյնիսկ անտեղիօրէն մեղադրուել ջահելների «ջատագողք» լինելու համար): Ուղղակի մարդաբէական է «Աւարտի պահերի քամատեղծը» Գ. Յոգե-հանէսի մասին 1974 թ. գրուած յօդուածի հետեւեալ պարբերութիւնը. «Բաւատեղծն, ի հարկէ, կը շարունակի ելնել, բայց կարծես թէ պիտի անցնի մահւ խաղաղ իմֆանիտացումին, քանի մերդաշնակը, կարծես թէ պիտի անցնի իրար հաշտեցնի բաբը եւ վիճակը, միաժաւի երգը եւ բանաստեղծութիւնը»: Հենց այդպէս է, չկայ «Ճո, Michelangelo, Scultore» հոյակապ շարքը, միայն թէ ինքնահարցումը այնքան էլ խաղաղ չէ եւ եթէ դառնաս՝ հեղինակի ան-

Հասականութիւնից մի կարեւոր մաս կը պակասի: Նրա անհաշուութիւնը տոտնին պաշտօնեայի, միջակութեան, կուշտ ու կուռ քաղքենու հետ ո՛չ ժառանգակարէն է, ոչ էլ մակերեսային:

Դուրիթ Յովհաննէսը, կարծես, գտել է ոսկէ միջինը (քա՛ւ լիցի, հեռի՛ միջակից), հենց կենտրոնը այն խրթին թնճուկի, որուն խճճուած են միջուկային դարն ու նրա մարդը, բարդ, իր հասակից հազարապատիկ երկար, իր պատմութեան պէս ոլորուն ամատնեղով հայը, հենց այնպէս, շուարած ու նայինական մարդը՝ սիրոյ ու մահուան տոջեւ անօգնական: Նա լուսմ է բուլբուլի ձայնի, կուտակում իր մէջ եւ լաածները վառ-զառ արտայայտելու փոխարէն մի փուլաւ է գրում, որն իր ամբողջականութեան մէջ արդէն միա՛յն իրենն է: Կրկին օգնութեան կանչեմ Այ. Թոփչեանին. «Երկու կարեւոր պայման կարծես օգնում են քանաստեղծին, մարդկային կեցութեան եւ քարոյա-կանութեան այսօրուայ նարմերի յստակ պատկերացումը եւ քանաստեղծի խիստ իմնատիպ լեզուաոճային մտածողութիւնը»: Ահա մի օրինակ.

Ջսիր ինձ, լսի՛ր, Նրեւան քաղաք —
 ոչ մի սիրահար գեռ իր սիրունում
 չի երգել այնպէս զերմ առ անթմայ,
 ինչպէս որ ես եմ քեզ երգում հիմա:

Յիրաւի, ինքնատիպ՝ նոյն տողի մէջ «երգել» ու «անինայ» ու դեռ այդ-քան սէր: Զի էլ վախենում յոգնատանջ բառերից, վերամբարձ բառերից, «ոչ-քանաստեղծական» բառերից, նոյնիսկ բացազանչութիւններից (Չարենցից յետոյ ս՛ի՛ կը հանդուրժէր օ՞՞), որովհետեւ դրանք «արտասանում» է իր սեփական ձայնով, ի՛ր դրոշմը վրաները դրած:

Նրեւան, իմ մանկութեան քաղաք,
 դու ապրում ես իմ մէջ արպէս աղաղակ,
 որը չե՛մ ուզում զսպել, չե՛մ կարող,
 որպէս մորմօք, ուրախութիւն, կարօտ —
 ախ, տանջում ես արիւնս, չճանում յաճախ...

Գրքի բովանդակութեանը նայելիս չես էլ կասկածում, որ այնտեղ ա-հագին նորութիւն, ուժ, ինքնաբերական կայ պահուած, որովհետեւ վեր-նադրերից շատերը՝ «Գարունը Երեւանում», «Խաղաղ», «Հայկական երգ» եւ, պատկերացնե՛ւմ էք, նոյնիսկ «Անվերնագիր» ոչ մի լաւ բան չեն խոստա-նում: Բայց լաւն էլ հենց դա՛ է, որ իրենց մէջ, ոչ թէ վրայ են պահում անա-կընկալը, «Ինչպէս»ը, ոչ թէ «Ինչ»ը: Եթէ նոյնիսկ տեսնում կամ զգում է այն, ինչ շատերը, ապա իւրովի է մտածում այդ մասին, իւրովի արտայայ-տում, Ակամայից կրկին յիշում ես չափածոյաւերները, որոնք մի տող, մի միտք, մի համեմատութիւն հազիւ ճարած, տարբեր շարքերով 98 անգամ մէջտեղ են բերում: Նրանց համար իր «Եթէ չես կարող»ում Դ. Յովհաննէսը շատ պատշաճ գործ է գտել՝ մուկ բռնել:

Կերպարուեստում Դ. Յովհաննէսի քանաստեղծութիւնները անպայման քանդակ կը դառնային, որովհետեւ դրանց ներդաշնակութեան մէջ ուժ կայ, շօշափելիութիւն, ուրուադժերը յստակ են, առնականութեան մէջ՝ գեղեցիկ են, մի թագով՝ «Արարչի կաւ, ոչ թէ ցեխ» է շաղախը, ինչպէս ինքը կ'ա-սէր: Կրկին վերադառնալով «Երգեր մեռած ընկերոջս» շարքին, հարկ է ընդգծել, որ ցաւն այստեղ իսկական է, անօքող, որովհետեւ կորուստն անվե-

բաղարձ է: Բանաստեղծը վիճում է Աստուծոյ հետ, գոռում-գոչում է նորինքն «անգին ընկերոջ» վրայ, հենց մեռնելու համար էլ նախատում է նրան (ի դէպ, հետագայում էլ Մուշեղ Գալստյանին. «Հէ՛յ, Մուշեղ, բա դու էն մա՞րդն, բա դու էմ տղամա՞րդն էիր, որ պիտի եղալես մահով գնար...»), բայց հաւատում է, նահանջում:

Նա ճիշդ չէր, ճիշդ չէր,
Աստուած իմ, Աստուած,
Բայց նրա ճիշդը — ճիշդ էր բոլորից...

Ձուգահեռաբար, Մուշեղ Գալստյանին ասում է. «Ես որ հիմա լաց եմ լինում քեզ համար, — ես հպարտանում եմ քեզնով: Ես հպարտանում եմ քո գրականութեամբ, քո յիշատակով: Քո Տաւրոս որդով: Հպարտանում եմ, որովհետեւ դու ինչ աշխարհում էլ լինես, — այս կամ այն, — ազգ ես պահելու, մարդ ես պահելու...»:

Դառնաղի բողբոջ, մորմոքից, ըմբոսացումից յետոյ, իրողութեան հանդէպ ցառումից յետոյ մի աննման, սիրո՛ւն Տէրունական ազօրքով սիրելի, անկրկնելի Զիւլային, այնուամենայնիւ, խաղաղ է յանձնում Աստուծոյ տնօրէնութեանը:

Ողորմեա եւ ընդունիր նրան,
Եւ քաղաքիւն տուր նրա մեղքերին քոյար,
Եւ անշարժ պահիր նրա մարմինը — մաքուր լուացաւած,
Եւ խաղաղութեան մէջ — Որա հոգին խռովեալ,
Որ կեանքի կէսին ելաւ քո գանձով:
Քո սուրբ օրհնութեամբ
Մինչեւ Ահեղ Դատաստան —
Տէր, ողորմեա,
Տէր, ողորմեա,
Տէր, ողորմեա:

Իսկապէս միայն այս շարքը կարդացողին էլ Դաւիթ Յովհաննէսը կը համոզէր, որ ինքը բանաստեղծ է, որովհետեւ այստեղ են հոգեկան լարումը, տենդազին որոնող միտքը, մաքուր զգացմունքը, խաղաղ մտորումը, մի խօսքով՝ այն ամէնը ինչը Ars Poetica հրաշալիքն է:

Այս դրբի գործերն անգիր անելու բանաստեղծութիւններ չեն, ինչպէս այս դրբի հեղինակը դալուկ պոեւտ չէ, այլ՝ քերթո՛ղ, քանդակագործ: Այս դրբում նա ինքն է ու մարդիկ՝ Ազամից մինչեւ այսօր, աշխարհաքաղաքացին ու հայը, նաեւ մենք՝ ընդհանրապէս ու մէկիկ-մէկիկ: Սա այն դրբերից է, որ հպարտութեամբ ես տալիս ուրիշներին կարդալու, ասես ինքդ մի լաւ բան արած լինես: Եւ ուրախանում ես, որ հեղինակը կա՛յ, դրո՛ւմ է, երբետաւա՛րդ է: Ուրախանում ես, որ կատարուել է նրա փափաքը:

Քերթուած իմ, եզիր բիրտ քամու պոռթկում,
Եզիր ոչ քէ ձայն, այլ մոլեգնած ճիւղ,
Այն քայնի մեամ եզիր ամառիչ,
Չըն խացում է սրտից — եւ քուծում:

Լաւ է, որ կա՛յ Դաւիթ Յովհաննէս-բանաստեղծը ու աւելի լաւ՝ նրա նոր գործերին սպասելն է...

ԱՐԵՎԻԿ ԳԱՏՐԻԷԼԵԱՆ

Դ. Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

ՔԱՐԸ ԿԱՐՈՂ Ե ԼԻՆԵԼ ԻՄԱՍՏՈՒՆ

Քարը կարող է լինել իմաստուն,
չնայած լուռ է, չի ասում խօսքեր, —
բաց անել փակուած, ֆարացած լեզուն
և պատմել քո իսկ պատմութիւնը քեզ:

Կարող է նայել աչքերով բարի
կամաչ, դարաւոր մանուկ տակից,
կամ նստել կողքիդ մի ուրիշ քարի
և հագուդ ցաւը մեղմել կարեկից:

Իսկ եթէ յանկարծ ելնեն քշմամբ
ֆրիստանեայ խաչ կամ լուսնի մանիկ —
կարող է գոռալ ձայնով Օհանի
և փրկել կեանքդ վերահաս մահից:

Կարող է պահել փառքերը անցեալ
որպէս յուշարձան կամ եկեղեցի,
և տապաքանալ կարող է դռնաւ,
վրան հասարակ գրեթէ աստ հանգչի...

Քարը կարող է լինել իմաստուն,
չնայած լուռ է, չի ասում խօսքեր: —
Քա՛ր, Հայոց Ոգու քէ իմաստ, քէ տուն,
սովորեցրու ինձ — լռութեամբ խօսել:

1982

ԵՍ ՉԵՄ ՄԵՌՆԻ

Ես չեմ մեռնի անյիշատակ,
ես չեմ բախի դուռն օտարի,
որովհետև մի սուրբ կրակ
սիրտս է վառում հազար տարի:

Հագար շիրիմ կայ իմ հոգում,
հագար մեռել ու նահատակ,
որոնք հագար ձայնով ոգում,
բորբոքում են արևն տալ:

Ելիր, ասում են ինձ նրանք,
ելիր, քո սուրբ վրէժը առ,
դեռ հոսում են անարձագանգ
մեր արիւնի գետերը վառ:

Ելիր, քո սուրբ վրէժը առ,
մեզ մի քողմիր անգերեզման...
— Եւ ձայները այդ հոգեւոր
հալածում են ինձ ամէն ժամ:

Եւ Աստուծոց ուզում եմ ուժ,
ուզում եմ կամք, ուզում եմ տուր,
այն Աստուծոց, որ այնքան ուշ,
այնքան քիչ է հային լսում:

Բայց ձայները նորից ոգում,
ինձ կանչում են՝ որդի՛, որդի՛,
էլ մի խնդրիր ոչինչ ոգուց,
հարեանից ու անցորդից:

Հարեանը մեզ հիւր եկաւ
և մեր տանը նստած է դեռ,
անցորդ մարդը խօսեց երկար,
բայց մեր ցաւին միշտ անտարբեր:

Ազօթք արինք Աստուծոյ հեզ,
Աստուած չեզաւ մեզ օգնական...
— Քո մէջ պիտի ուժը գտնես,
և այդ է քո միակ նամբան:

1982

ԱՐԱՐՈՅԻ ԵՐԳԸ

Մուշեղ Գալստեանի

Հրէ շապիկ ես հագել,
Մշոյ դաշտի ընտրեալ,
առաջինն ես նրանց մէջ,
ալ այդ շապիկը հագաւ:

Տիլիրազին քո նստած
Մմբատասար ես ելնում
և այնտեղից նայում ցած
որպէս իշխան քո երկրում:

Լուռ նայում ես արծուների
քո հայեացքով սրասն
երպիկներին հայրենի
և շէջում ինքդ քեզ:

«Մշոյ դաշտը որ տեսայ,
էլ մահ չկայ ինձ համար»...
— Է՞յ, անցումը մարդ, ինձ առա,
ի՞նչ ես փնտռում դու եիմա:

Մուրաբու՞լ ես սարերում
Սմբատայ եւ Մառնիկայ,
թէ՞ խրոխտեմ ես ունկնդրում
խաճայն ու հեռակայ...:

Բայց մի փորձիր իմանալ
որտեղից է ձայնը այդ, —
երկինքների՞ց տիրակալ,
թէ՞ բերդերից կիսաբանդ:

Որքան ելնես դէպի վեր,
ձայնը այնքան կը թմրայ,
եւ ասում եմ, որ անմեռ
Տիւրքերի ձայնն է դա:

Եւ ասում եւ լերան մէջ
նահւ հեծումը մրա,
որին երկիրը կոչեց
Մշոյ դաշտի բնորեալ...

— Հրէ շաղիկ ես հագել,
Մշոյ դաշտի ընտրեալ,
առաջինն ես մրանց մէջ,
ով այդ շաղիկը հագաւ:

Տիւրքերին քո նստած
Սմբատապար ես ելում
եւ այնտեղից նայում ցած
արպէս իշխան քո երկրում:

ՄՈՒԹԸ ԻՋՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

Մուրք իջնում է Հայոց Աշխարհին,
հեռում լոյսեր են կայծկլտում ազօտ. —
օ, սո՛ւրբ հայրենիք, օ, աշխարհ իմ հին,
խաչուած Գրիստոս, առաջին ազօթ:

Սիրտս լցում է լճամբ առաւ,
քամին խոտեր է ծալում անամուն. —
հեռում լոյսեր են կայծկլտում ազօտ,
ովքե՞ր են այնտեղ եւ ի՞նչ են անում:

Ովքե՞ր են այնտեղ եւ ի՞նչ են անում,
մի՞թէ ես մրանց կեանքերում չկամ,
հայոց երկնի տակ, հայոց շատանում
մի՞թէ իրար չենք մանաչում անգամ:

Եւ հիմա յանկարծ, քամու պէս մի պահ,
եկել անցնում եմ ես մարդկանց միջով,
որպէսզի կորչեմ մութի մէջ ազահ,
բայց այս քախիծը չես պատմի գրչով:

Բայց այս քախիծը չես պատմի գրչով
եւ չես պարփակի բիրտ հագար բառում. —
բալոր բառերը, հագումս մէջ հնչող,
ահա մի խեղդուած փղձկոց են դառնում:

Մուրք իջնում է Հայոց Աշխարհին,
հեռում լոյսեր են կայծկլտում ազօտ. —
օ, սո՛ւրբ հայրենիք, օ, աշխարհ իմ հին,
խաչուած Գրիստոս, առաջին ազօթ:

1981

ԴԵՄՈՆ

Երբ հնչի ժամը կէսգիշերային,
եւ սունկը պայթի աշխարհի վրայ —
եւ հեռուններից միջատներդային
կը գիտեմ տխուր վախճանը մրա:

Ինչպէս տեսցաւ երկիրը ծաղկում,
ինչպէս ջրերը գոլորշի դարձան,
ինչպէս երկնիքը առաւ մահի գոյն
եւ անհետացան թէ մարդ, թէ գաղան:

Եւ անհուններում տիեզերակալ,
յաւիտենական խաւարի միջով, —
մեռած, սեւ քրի նման կոյր ակամ,
որ յաւերժօրէն պիտի մնայ չոր,

Մերժուած Աստուծոց եւ սատանայից,
անհոգ ու անջուր, անօգ, անկրակ, —
կը սուրայ ծիրով միջատներդային,
ու եւ կը լացեմ աշխարհի վրայ...

1982

ԱՌԱՒՈՏԸ — ՓՈԲՐԻԿ,
ԱՆՊԱՇՏՊԱՆ ՄԻ ԾԱՂԻԿ

Առաւօտը — փոքրիկ, անպաշտպան մի ծաղիկ,
առաւօտը — շուշան մի ծաղիկ է դարձնալ,
որ ելնում է անձայն մեր փողոցի ծայրին
և լուրթ մշուշներ են ցնդում շուրջը նրա:

Ամէն ծառ — կանաչ մի պայքիւն է հիմա,
իսկ արծւը հողից հանում է նոր ծառեր,
ծաղիկ ու խոտ կարծես նոր են տեսնում իրար,
և հաւքերը երգեր են երգում դեռ չլսուած:

Օրը բացում է դրախտ այգեստանի նման,
ծաղկանց մէջ — ծաղիկ, օրուայ մէջ — առաւօտ,
իսկ արեգակի ոսկէ շագերի մէջ գնում
նախօրում են մանուկ յոյս, հաւատ ու սէր:

Օ, հեզ ու անխոս արթնացում լոյս օրուայ,
երբ երկինքը վերից օրհնամբ է թափում,
և ելնում ես դու, որ փառքը երգես նրա,
ով Արարիչն է քո, և այս հողի — մահուր:

Նա արեգակի տեսնով է, հզօր ու բարի,
Նա իմաստուն է, ներսդ — արեգակի նման,
գիտէ սկիզբը, գիտէ վախճանն այս աշխարհի,
գիտէ ով ես, որտեղից ես, ու քո համբան:

Նա է քեզ դարձրել տէրը քո սուրբ երկրի,
քո լեզուի, քո աչքերի ու քո պատմութեան,
Նա է կրօնքի տակ դրել մի փոքրիկ, շերտ սիրտ,
որ բուռն իր յայգերից թափւում է հիմա:

Ըստ Նա է քեզ ասում. ապրի՛ր, այդպէս ապրի՛ր,
ապրի՛ր քէկնուց հենց այս առաւօտի հաճար,
ես քեզ կը տամ օդ, ասում է, ջուր ու հաց
և այդ ամէնից լաւը — հօսքը կը տամ միտք:

Որ ապրես իմ հօտում, ու գործնաւ այնքան,
որ քո երկրի տէր — աշխարհի տէր էլ լինես,
որ քո լեզուի տէր — ռզու տէր էլ լինես,
որ քո աչքերի տէր — ցաւի տէր էլ լինես:

Ըստ ապրի՛ր, որ տէր լինես քո պատմութեան,
տէր այս առաւօտին, ու քո երգին — մահուր,
քանզի իմ հօտը — այդ երգն է քեզ տրուած,
և այդ երգից բացի դու կեանք չունես ուրիշ:

Դու կեանք չունես ուրիշ, դու յայտ չունես ուրիշ,
չունես ուրիշ հաւատ, և չունես ուրիշ տէր,
և պատժում եմ ես քեզ — Տէր անկողնի հօտի,
բայց դա — իմ սիրտն ունեն է ամենամեծ:

ԴԱԻԻԹ ՅՈՎՀԱՆՆԷՍ

digitised by A.R.A.R.®



ԵՐԵՎԱՆԻ
ՄԱՐԿԱՆԱԿԱՆ
ԵՆԿՐԱՆՈՒԹՅԱՆ
ԲՐԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ



ԿԱՐՈ ՄԱՐԿԱՆԱԿԱՆ Պ Ա Ս Տ Ա Ռ Ն Ե Ր ՈՒ Ն ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Երեւանի զեղանկարիչ Կարո Մարկոսեանի Յունաստան արժամայ բնակութենէն ետեւելով, տեղւոյն Համազգայինի ժամանակը կազմակերպած է իր ութամսայ կեանքին զեղանկարչական առաջին ցուցանիշները:

Տարիներէ ի վեր Քանաասայի Մոնթրէալ բաժնաբեր Հաստատուած նախկին յունական այս արձանագէտը իր ժաննպիտական ուսուցիչ աստուծոյն է Քրիստոսը Համալսարանի եւ Շիքակոյի Գեղարուեստից Ակադեմիային մէջ, ուր եւ արձանագրած է իր առաջին յաջողութիւնները՝ արձանանկար մէկէ աւելի մրցանակներու:

Կարո Մարկոսեան, իր զեղանկարչական գործունէութեանց զուգահեռ՝ նաեւ ասորագրած է կերպարուեստի զանազան հարցերու անդրադարձող բազմաթիւ յօդուածներ՝ քանասական եւ ամերիկեան ժամուրի արուեստի բաժնիներուն եւ արուեստի պարբերականներու սինակներուն մէջ: Ան նաեւ զեղագրագած է բազմաթիւ գիրքեր եւ բարձրորակ հրատարակութիւններ:

20էն 30 Յունիս տեւած Կ. Մարկոսեանի այս ցուցանիշները տեղի ունեցած է Աթէնքի Քնարահասոյ մշակութային կեդրոնի գլխավոր սրահին մէջ, որուն պատերը զարդարած են այս հայ արձանագէտին շուրջ 130 պատկերները: Լաթի, Խաւաթարի եւ Բալարի վրայ իւղաներկով, փասթելով, կուշով, կամ ջրաներկով իրագործած Կ. Մարկոսեանի այլազան ստեղծութիւնները կը

փաստեն, ինչպէս կ'ըսէ յունական լեզուով, որ ճիշդիւր պրոպոզիտիւտ տրուեցաւ մըն է, որ յաւատեւ որոնումի մէջ է: Իր գործածած գոյներն ու պատկերները շարունակ փոփոխութիւն կը կրեն՝ համաձայն տաւտղ վայրկեանին կամ ներշնչման պահունք:

Ըստ յունական մեր պաշտօնակիցին, տեսարանին տեղին անցնող եւ միշտ իր պատգամը կամ ըսելիքը ունեցող Կ. Մարկոսեանի ճշմարտանքման եւ մտայնածին գործերը կը յատկանշուին իւրենց անկեղծութեամբ, ինքնուրոյն գիտագիտով եւ, ժամանակի խորքի եւ ոճի հարապատ անդրադարձներով:

Ան իր նիւթերը կը գողցէ բնութենէն — քանասական եւ յունական —, բնորոշներէն, հայկական պատմական զգացքի եւ զգիւցքի, ինչպէս նաեւ՝ մեր գրականութենէն: Անտաքիս Երկուսին մէջ, — կը գրէ լեզուով, — կը տեսնենք Օրկարի-Խմաստակերը, ա՛ն՝ որ կեանք ու իմաստ կու տայ պատմաբան վրայ զետեղուած առէմ մէկ շուրջին կամ ճշոյլին: Վերջինիս մէջ իր հայտն սիրում է, որ կը քարայտէ եւ հով է, որ կը գրառենք նկարիչ-քանաստեղծը, ա՛յ միայն այն պատճառով, որ քանաստեղծներու հոգեվիճակներն ու իւրեքի կը վերածէ (Գանդի վարձարման, Պետրոս Դուրեան, Մատթէոս Ջարիֆեան, Աւետիս Անտոնեան), այլեւ ամոր նամար, որ իր հայկական ճիւղերը քանաստեղծական մտնեցումով մը կարծես կը վերածէ տարբեր շարքի մը ու նկարիչի մը գործերում:

digitised by

A.R.A.R.®

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԸԻՐԱԶԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Համազասյանին Գուրծ Համուտի մասնաճիւղը
կազմակերպում էր Յովհաննէս Երարզի յիշատա-
կին նուիրուած Հանդիսութիւն մը, որ տեղի ու-
նեցաւ Գրեմէի, 3 Յունիս 1984ին, Վեպոք Տէր
Միլլոնեանց Հանդիսադրահին մէջ:

Հանդիսանալիս բացումը կատարելով՝ տեղին Աստված Մարգարեան հարկերը ներկայից յոթանգին յարգելու չկատարելու հարցին առաջադասար բանաստեղծին՝ Յ. Շիրազին՝ Սրբառան զաստիճանի էր բանաստեղծ Յովիթ Մարտիկեան, իսկ զհարգանքից յայտարարելն իրենց ժամանակ ցտկրելը բերին Գեորգ Գեղեճեան և Սեդրա Մարգարե (հղը), Գաթրճիւն Գաթրճեան, Լուսինի Վերլյան և Ստի Սիմեոնյան (ամուսնաց)։

Այս ևնեարկը, տառիկն իւր վարդեանէն,
յատկանշուեցաւ ինչ ինչմասով ունով, երբ դա-
տառաւանքիւն եւ զիդարձեալեանովն յայտարար
անդադարի տարգրուիլովն իւր կողմեցին: Այ-
դերն ու արտասանուած կտորներն անիմպիւսի-
ոնն հ'աղիքաւորէին դատախազին արծարծած թեա-
կերուսն, ներկաներուն փորձեցելով պատահելով
եւ կենդանի իրավիճակներ:

Դասախոսութեան առաջին բաժնիով, Յակոբ Մանուկեան ներկայացուց Յ. Ներսիսյի տոկոս մանկութեանը՝ Քաղաքապետարանի, Վորջ մանչ, Կաշի եւ Կոնգրեսի զգուստի կարող ապրիները, ապա ստանդարտիկ շրջան եւ զրաւեան առաւել փոքրները։ Սկիզբնետեան, որոշեցեալ բանաստեղծներ շուրջ յիշատակայ վառատակէն աշտալ զստեկերովը կատարել հաշ, անցաւ Յ. Ներսիսյի գերբնորոշ բանեւ վերլուծական, Հանգիստեանդէն ճանրանալով բանաստեղծներ սիրալիկ-ընտանական, Խաւսալիկ-սիրալիկապաշտեան, Կարկանդակապաշտեան, մայրական եւ Համալսարանական բնիմանական վայր։

8. ԵՐԽԱՐԻ իրդը աշխարհը Հիմալայան երկու
առանցքներու շուրջ կը դրոշմեցնէր՝ դասախօսը
ընդհան, որ այդ երկու թիմաներն են աշխարհում
սերը եւ հայրենիքի սերը։ Այս երկու զին վերջու
ժուռը կառարկէր իտե՛ր, սն իր դասախօսութեանը
հարաւորեցնէր Հոմերոսի տարրերով։

Էր Լուսինը մեր մէջ կը խորանայ երբ համա-
գումբ, թէ թիկ հասած է արդէն կրկին աշխարհ
գտաւ իր ցոյցաւոր ցամաքներում: Թէ ո՛ր միայն
տարաշխարհիկ ծայեմէ Մտաքէ կը կանէ, այնչէ,
իբրեւ ոգի, թափ կ'ընէ՝ Մտաքի ծաղկանոց լամ-
պերակ: Էր ճերմակաբերդի հրքորը բարձրականը:
Այն շնորհալիկանը, որ կը վերադնի հայկական
հանրեր: Եւ կոպանաւոր Արարատի ազատագրման
պայտարին:

Էրբ մահով տառելի եւս կը բխրեցանայ զրա-
կամ խառնութե ց. Շիրազիմ, որ համէլսա մէկ
սէր՝ հայրենի հողը, օրհնաբեքց մէկ իմացում՝
հայաւթիւնը, փառաբանեց մէկ սրբաշին՝ մայ-

բաւթիւնը, կտակեց մէկ պատգամ՝ ամիստակամ կառիք հռաւակկամ ռաթի՝ վերածեալ բարձմաքը եւ Յամլցաւ մէկ տեւակակամ՝ Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի երազը:

«Ինձամեծիկ մը ամբողջ երգեց աւ երազեց:
«Սայաք-Նովայի տաղերով զինովցաւ, հեքա-
նոս տիրոյ զովքը հիւսեց եւ կոմիտասով աղչու-
մեց սրբազանշունչ անկախութեան հայ երգիւ:

«Յիսմամեանկ մը ամբողջ հազարդուեցաւ հա-
յոց լեզուի խորեարգով:

«Աւարայրի գաղտնի վերածննդն իր ցրտահաճուն իր Սուրենյանապատի դառնիմիտարդերով հրտավորեց իր ստանդարտով մտնի մարշալայաները: Իսլամամ- չիկը խաղհարի մեջ հայ հազիկն էր հաւատարմի մեկ ցայլը որոնքն, իսլամամչիկը մաշտի մեջ՝ հայ հե- րոսի ոգիգիւն՝ շնչաւաւաբիւնը գրաց: Եւ զանքն հազիկն ալ յարթաթուխիւն հոյակ զիգեղամակն շա- յալիցիւն էրն, որովն տարիւրէմն փառք բազմա- րանգ ներշնչու՜մքով՝ յայտնադարձնք իր ազգա- նից սգորաւմնարմնը մայրախնայի ամուսնայից...»

«Երեսփոխ վերջին խմբի էր, որ էր անհմմտը բնու առ բնու բաշխումի յղատմանը Հայաստանի երեքը հայկականներն: Կը բազմապ, որ առաջին բառը չառ տրուէր Մասիսի բարձրաններուն, երկրորդը՝ Մարջ Արաւսին, երրորդը՝ Արցախի լեռներուն, չորրորդ բառը՝ վանայ ծովուն, քիմ գերորդը՝ Տափառի դաշտներուն, վեցերորդը՝ Սասնայ ապրներուն եր երկրորդը՝ Արփին:

«Ընդ նուստանակ, քէ Շիրազի վերին իջը
դլստի շմալ մեկուստար, քէ ուշ կտմ վաղ եր
ստանակին հրաքարտյոյն պարսկականները սլտի գե-
վտանք Մուսուխի՝ ձիւրնաւ, շնորհիւ Հայ Դատի
հետազոյցվումն գտնլ հայ ժողայտւորդի եւ պահամե-
ջտարի հայ երիտասարդութիւնն ցուցաբերած ազ-
գայնութիւ եւ անձնորդ անմահութիւնը»:

«Շիրազ յիմամնակ մը ամբողջ տաշտահեցաւ
պատմական Հայաստանի երազով եւ փակեց աշ-
խարհը՝ իր «շաք-սյուսած» կարօտներու մաքուր
կինք»:

«Փռա՛հ իբ յիշատակին:
«Փռա՛հ Մերթացմեր ծնող Հայ Ժողովուրդին...»:

ՀԱՆԷՊԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ

Հայէպի Համագործակիւի ժամանակէդի պարտա-
խտմբը Մայիս ամսուան ընթացքին ունեցած է
հիշյթեմբաւ լարք ժը, որոնց վերջինք՝ Կիբակի,
27 Մայիս 1984ին, իբուեհասագէտնեմբաւ սնեմեմբա-
յի որակին մէջ:

Հայաստանի էն շրջանաւարտ երիտասարդ պա-
րտաւոյք Արիկ Կաստանեանի դէկաւպարտէթեմէ
շարժ ինը տիկտ առնաւ տեղաւան աշխա-
տանքներէ ետք, թիւով 29 երիտասարդ-երիտա-
սարդաւելիներ բնէ բարձրացան են բնախնդիր յաջ-

տարածված է, որուն առաջին մասը աւարտած է հայկական հարսանիք թեմային շուրջ հիստորիան եւ հայկական մեր բարքերն ու սովորութիւնները պարի ճամբով փոխանցող սոսակաւարտութեամբ: Էջայկական հարսանիքը յառկանչուած է մեր դարաւոր բարքերը եւ հարսանիքի միջոցաւ փոխանցելու իր կարողութեամբ, պարողներուն յաջող ելոյթներով եւ խոսուն զիմաստներով:

Ինչ կը վերաբերի յայտագրին մաս կազմած միւս պարերուն՝ «Պար Յանկուրեան», «Հայոց կանայք», «Մրցոյթ պար», «Կովկասեան պար», «Շալախո», «Ուրախութեամբ», «Հայաստանի կարմիր զինին» եւ «Սասուն», անոնք յառկանչուած են պակտային շարժումներու ոգնադարձութեամբ:

ԼՈՒՍԻՆԷ ԶԱՔԱՐԵԱՆ ԵՒ ՄԱՐԻԱՆԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ՝ ԿԻՊՐՈՍԻ ՄԵՋ

Հայաստանի ժողովրդական եւ վստակաւոր արուեստագիտուհիներ Լուսինէ Զաքարեան ու Մարիանա Յարութեան վերջերս այցելած են Կիպրոս, ուր հանդիպումներ ունեցած են կիպրական մասերականութեան, երաժշտականներու եւ հայ վարժարաններու աշակերտութեան հետ: Անոնք երկու շաբաթուան ընթացքին Նիկոսիոյ Միգլինեան կըթական հաստատութեան արահետներէն մէկուն մէջ, ներկայացնելով հայկական երաժշտութեան ընթացքին, հանել անկնկալ մը հոգած է Ալեքսանդր Յարութեանին ի նոր մշակութամբ մեկնարանուած «Տըլէ Խամանը»: Հայրենի արուեստագիտութեանը արժանացած են կիպրական դպրութի ջերմ ընդունելութեան: Տեղական մամուլը լայն տրամադրութեամբ անդրադարձած է անի շաբաթին:

Կիպրական աշակերտութեան երգչախումբը տուած է համեմատ մը ի պատիւ երկու երգչուհիներուն, որուն ընթացքին շնորհ են Աւետիք Խաչատրեանին, Յովհաննէս Եփրայիմ, Սիլվա Գալուստիանին եւ հայ այլ բանաստեղծներու ստեղծագործութիւնները: Փոքրերու այս երգչախումբը Երազարտ է յառաջիկայ տարուան ընթացքին այցելել Երեւան եւ հոն խմբերգներ տալ:

ՀԱՅԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Մայիս 14ին, Հայկական պետական թանգարանի ցուցանակներու յատուկ խնամքով, բացումը կատարուած է: Հայկական շինարարական եւ ճարտարապետութեան նուիրուած ցուցանակներ, որ յարուստիւնով եւ ամբողջ շարք մը, առիթ առնելով բազմազան այցելուներու, 2506 տւելի նկարներու եւ յատկապէս ընդմէջէն իրարեկէ դառնալու Հայաստանի նախնադարեան

մշակութիւնն ու անոր զարգացման հոլովոյթին:

Հայկական ժամի մը արուեստագիտ երկրաշափնեքու կազմակերպութեամբ իրադարձուած այս մեծարժէք դարձ հովանաւորած է Հայկական Արարական Մշակութային Գեղարդի անդրհանգիւնը: Պաշտօնական բացումը կատարած է Պաթիք Ճըրճոս Ճաղպուր՝ իր կողքին ունենալով Բերիոյ Հայոց թեմի առաջնորդ՝ Սարգիս արք. Գաթարճեան եւ գաղաքի պետական աւագանին:

Այս առիթով, այցելուներուն բաժնուած է արարիւն լիզուով պարտաւստած բացատրական դրժայ մը, որ կը ներկայացնէր Հայաստանի աշխարհագրական եւ պատմական նկարագրի պատմութիւնը, ինչպէս նաեւ՝ հայկական ճարտարապետութեան ծագումն ու զարգացումը դարերու ընթացքին:

Մրահին պատերէն կախուած նկարներն ու յատկապէս յայտնի դարձանք մը տուած են հանդիսականներուն՝ հայկական շինարարութիւնը զարգացման ազդեցիկներու մասին:

Ճաշակաւոր եւ մեծ քանակութեամբ պարտաւստած այս ցուցանակները հայ եւ օտար հանդիսականներուն ծանօթացուած է մեր անկի ժամ 1500ամեայ ճարտարապետութեամբ՝ հիմնադրական վերանորոգուած կոթողներէն մինչեւ հայ դմբութեամբ նկարներ, խաչքարներ, յուշարձաններ, վանքերէն, մասունքներէն մինչեւ աշխարհիկ շինութիւններ՝ կամուրջներ, բերդեր եւ ամրոցներ...

Ահաւորակ պատարանաւոր երկու այցելուներու տպաւորութիւնները, որոնք լաւագոյն կը ներկայացնեն այս ցուցանակներին ստեղծած խառնազգայն միջոցները:

Այս ցուցանակները փոստմ է հայ մշակութային համայնի եւ ամբողջ ճարտարապետական արուեստին մերկայացուած կրօնական շինութիւններով եւ յուշարձաններով: Ան ցոյց կու տայ այս ժողովուրդին պատմականութիւնը եւ ճարտարապետական արուեստին համակցը:

ՏՈՒՅՈՒՆ ԶՈՒՄ ԹՈՒՄԱՆ

(Հայկական համալսարանի ճարտարապետական բաժնի տնօրէն)

Հիւրաւանդիւր ազգ անդամ մ'ա եր ունի պատմութիւն եւ ժողովրդագրութեամբ բազմաբնակ, եւ հայ ազգը, իր կարգին, ունի իր մշակութային տեղը ազգերու պատմութեամբ մէջ: Եթէ համալսարանային դէպքերը պատմութեամբ եղած են, որ կարգ մը ազգեր գրուին եւ տարածուին, տակաւն աճ՝ որ ունի մշակութային կարողութիւն եւ շնորհաւոր: Այս ժողովրդագրութեամբ մնացորդները հաստատ փաստն են ժողովրդի եւ արքուն մտքի, որոնք արտայայտուած են շինարարութեամբ եւ ժողովրդով:

ՆԱԶԵՄ ԵՒ ՃԱԳԻՐ

(Խաչատրեան թանգարանի տնօրէն եւ անդամ Հայկական թանգարանի տնօրէնութեան)

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

— Պատմություններ —

- ԳԻՇԵՐԱՅԻՆ ՄԱՀԱՋԱՆԳ
- ԱԽՈՒԻՆ ՄԷՋ
- ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ
- ՊԱՏՈՒԱԾ ՀԱՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ
- MAIS ALORS ! ...
- ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՋԻՆՈՒՈՐԸ
- ՀԱՅՈՂ ԶԻՆ
- Ո՞Վ Է ՍՈՒՐԲԸ
- ԶԵՌԱԳԻՐ ՅՈՒՌՈՒԹՔ
- ԵՐԳԻՆ ԾԻԱԾԱՆԸ

Պեյրուք, 1983, Համալգայինի «Վահե Ալթեան» տպարան, 190 էջ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ԱՐԱԳԻԼ

(Այսօր)



Խմբագիր՝ Պ. ՍԵՐԵՆՆ

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِين
مجلة شهرية ، أدبية وفنية علمية
المدير المسؤول
السيد ارثين كارنيك قرانجيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
•
ԲԱԿԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ
Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
ՎԱՋԷ ԲՐՈՒՏԵԱՆ
B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898